



ԷՋՄԻԱԾԻՆ

1983


Է

Amc 146



Խ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յուլիս

1983



ՀՐԱՄԱՆԱԻ

Յ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՈՐԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝
ՈՒՂՂՎԱԾ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ ՀԱՄԱՅՆ
ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԷ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

(3 հուլիս 1983 թ.)

Ձերո՛ւ Սրբություն, շատ սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս,

Վաղուց ի վեր հոգեկան հրճվանքով սպասում էինք այս պահին, երբ եղբայրական հարապատ սիրով պիտի ողջունեինք Ձեզ, սակայն ցավ ենք հայտնում, որ առողջական պատճառով չկարողացանք անձամբ մասնակից լինել Ձեր ուրախությանը այս օրերին, երբ Վրացական քույր Եկեղեցին իր հավատացյալներով հանդիսավոր կերպով նշում է Գեորգիական պայմանագրի 200-ամյակը և Վրացական ուղղափառ Եկեղեցու կաթողիկոսական սուրբ Աթոռի ինքնագլխության 1500-ամյակը:

Երկու տոնախմբումներ, որոնք Մեր սիրտը լցնում են ուրախությամբ և ոգևորությամբ: Երկու տոնախմբություններ, որոնք խորհրդանշում են վրաց եղբայրական ժողովրդի և նրա պատմական Եկեղեցու մեր օրերում նոր վարժությունը, նոր ճառագայթումը:

Արդարև, Գեորգիական պայմանագրով Վրաստանի ինքնակամ միացումը Ռուսաստանին, պատմական փրկարար իրադարձություն հանդիսացավ վրաց ժողովրդի համար, որով նա ապահով և անվտանգ պայմաններում կարողացավ անկաշկանդ վարճացնել իր ապգային դպրությունն ու մշակույթը, հոգևոր և

նյութական նորանոր արժեքների ստեղծումով: Այս նշանակալից իրադարձությունը մեկընդմիշտ դարբնեց ռուս և վրաց ժողովուրդների հավիտենական բարեկամությունը:

Վրացական ուղղափառ Սուրբ Եկեղեցին և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին առաքելական քույր Եկեղեցիներ են, գրեթե նույն օրերին կյանքի կոչված, երբ հայ և վրաց ազգերը իրենց սրտերը բացեցին Քրիստոսի Ավետարանին և լույսովը Աստուծո Որդու լուսավորեցին իրենց կյանքն ու պատմությունը: Նրանք դարեր շարունակ միշտ հավատարիմ մնացին իրենց ճշմարիտ հավատքին և հաճախ միասին մարտնչեցին ու նահառակվեցին՝ հանուն Հիսուսի և հանուն հայրենիքի ապատության:

Մեզ համար հոգեկան մեծ մխիթարություն է հաստատել այս պայծառ իրողությունները և Մեր սրտի բովանդակ ջերմությամբ մաղթել պայծառություն ձեր պատմական ուղղափառ Եկեղեցուն և հառափել բարգավաճումն եղբայրական Սովետական Վրաստանին:

Այս հանդիսավոր առիթով մի պահ պարտք ենք համարում ողջունել Ձեզ իբրև մեծահոգի աղոթողի և անձանձրույթ գործողի, ի պահպանություն և ի պաշտպանություն աշխարհի խաղաղության դատի: Մենք բարձրորեն գնահատում ենք Ձեր խաղաղասիրական գործունեությունը և վստահ ենք, որ սիրտ-սրտի ու ձեռք-ձեռքի ձեզ հետ և մեր բոլոր քույր Եկեղեցիների հետ, պիտի շարունակենք բոլորս միատեղ աղոթել ու աջնառել, որպեսզի ի վերջո հաղթությամբ պսակվի խաղաղության մարդասիրական գաղափարը, և աշխարհի ժողովուրդները ապրեն խաղաղ համակեցությամբ և իրենց հարցերը լուծեն համերաշխ գործակցությամբ, ընդմիշտ փշրելով բոլոր տեսակի զենքերը մարդասպան ու աշխարհակործան:


Ընդունեցեք, Ձերդ Սրբություն, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և անձամբ Մեր անունից սրտագին ջնորհավորանքներ և ամենաբարի մաղթանքներ այս պանծալի զույգ տոների առթիվ:


Անսպառ լույս և խաղաղություն գեղատեսիլ Վրաստանին, որպեսզի տաղանդաշատ ու կենսուրախ վրացական ժողովուրդը միշտ նոր բարձունքներ նվաճի քաղաքակիրթ մարդկության հորիզոնի վրա:

Հարգանք և միշտ անսպառ լույս Վրացական ուղղափառ Եկեղեցուն:

Մեր եղբայրական սերը, Մեր բարձր գնահատանքը և Մեր ջերմագին աղոթքը Ձեր կյանքի ու երջանկության համար:

«Այսօր է քոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի ամա» (Սաղմ. 117—24): Ամեն:





ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ

(Քարոյ՝ խոսված Շիրակի թեմի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում)

«Ոչ թողից զձեզ որքս. գամ առ ձեզ: Փոքր մնա ևս՝ և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս, զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք» (Հովհ. ԺԴ 18):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Լրացել են հետ Հարության հիսուն օրերը, և այսօր Հոգեգալուստ է, հունարենով՝ Պենտեկոստե: Վկայություններ կան, որ այս տոնը զուգահեյ է հրեական պենտիկոստիին՝ Հին Կտակարանի «Տօն Եօթներաց» կամ «Տօն ամարայնոյ» կոչված օրվան, երբ հրեաները, նշելով այն, Տիրոջ տաճարին ընծայում էին իրենց հունձքի որոշ բաժինը (Ելք ԻԳ 16, ԼԴ 22, Բ Օրինաց ԺԶ 9):

Ինչպես արդեն տեղեկացաք Հովհաննու Ավետարանից, որ այսօրվա մեր քարոսի բնաբանն է, աշխարհից մեկնելուց առաջ Քրիստոս, արտասանելով վերոհիշյալ խոսքերը, խոստացավ մեզ որք չթողնել, տվեց առիթը կապված մնալու Իր կամ երկնքի հետ, խոստացավ աշխարհ ուղարկել Մխիթարիչին՝ Ս. Հոգուն (Հովհ. ԺԵ 16—26): Այսօր ընդհանրական եկեղեցու նշածը այդ խոստումի իրականացման, Ս. Հոգու էջքի հիշատակի տոնն իսկ է. «Ելանեմ ես առ Հայրն իմ և Հայր ձեր, և Աստուած իմ և Աստուած Ձեր» (Հովհ. Ի 17): Եվ Նա կգա դարձյալ դատելու նրանց, ովքեր կմերժեն խորհուրդն այսօրվա:

Այո՛, կատարված է այդ անսխալեալ իրա-

դարձությունը. Ս. Երրորդության երրորդ անձըն է, որ Երուսաղեմում իջնում է առաքյալների վրա՝ դառնալով ուղեկիցը ինչպես առաքյալների (որոնք առաջինն էին այդ հրաշքին և շնորհին արժանացած), այնպես էլ մեր՝ բոլոր ժամանակներում: Եկել է Նա, որ շարունակվի քրիստոսյան փրկարար պաշտոնը, որ վերացվի մարդու անորոշությունն ու հուսահատությունը երկրի վրա. «Յորժամ եկեսցէ նաև հոգին ճշմարտության, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ... և զգալոցն պատմեսցէ ձեզ» (Հովհ. ԺԶ 13): Այդպես, Ս. Հոգին ուղարկվել է «Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս» և «Վասն արդարութեան» ու «Վասն դատաստանի» (Հովհ. ԺԶ 9—11):

Հոգեգալստյան իրադարձության մասին մեզ հաղորդում է «Գործք առաքելոց» գիրքը (Բ 1—13): Քրիստոսի առաքյալներն ու աշակերտները, ինչպես և Տիրամայր Ս. Կոյսը՝ շուրջ 120 հոգի, հավաքված վերնատանը, Երուսաղեմում, աղոթքով սպասել են խոստացված Ս. Հոգու էջքին և դարձել են վկաները այդ խոստում-հրաշքի: Այդ շնորհին արժանացածները հետո զարմանալիորեն խոսել են զանազան լեզուներով: Անբնական պահը զարմացրել է նաև ամենքին, որոնք, իրենց հերթին, փութալով դեպի վերնատուն՝ հրաշքի վայրը, տեսել են, թե ինչպես առաքյալներն ու մյուսները «հարբած» են: Ըստ երև-

վոյթին, սա այն է, ինչի մասին ժամանակին սաղմոսերգուն ասել էր՝ «Հարբելու եմ քո փառքի երեսին նայելու»: Երկնքի հրաշքը, շերմությունը և Ս. Հոգին էր, որ հարբեցրել էր հավատավոր առաքյալներին: Քրիստոսի խոստումով եղած այդ հրդեհումը համայն աշխարհի քրիստոնեական նոր կրոնի սերն է ու բարոյականը, որի ուժականությամբ էլ տեղի ունեցավ մյուս իրադարձությունը՝ շուրջ երեք հազար նորադարձների մկրտությունը նույն Երուսաղեմում առաջին օրն իսկ (Գործք Բ 41). «մեկ լայտնեաց Աստուած հոգւովն զի հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ» (Ա Կորնթ. Բ 10):

Մտն երկու հազար տարի առաջ տեղի ունեցած Հոգեգալստյան իրադարձությունը ոչ միայն թերահավատ հոգիների և բոլորի վերակենդանացման համար եղածն է, այլև, ինչպես պիտի ասեր Ագաթանգեղոսը, «...իբրև հուր երևաց, որպեսպի խոտանը այրի և ընտիրը լցվի հոգու ուրախության բաժակների մեջ, անսպառ գանձի պարգևներով, որոնք չեն անցնում և որոնք լցված լինելով անսպառ հոսանքով, միանգամայն պայծառ վառվեն հրդեհվող հոգու պորությամբ»: Բոլոր ժամանակների մեջ մարդկային հոգին կհըրդե՞վի Սուրբ Հոգով, եթե մինչ այդ մեղքը չի մոխրացրել նրան, այսինքն՝ եթե չկա ապականությունը հոգու:

Կատարված է Նոր Ուխտի այս խորհուրդ-հայտնությունը: Նրանով այսօր դյուրին է ճանաչումը իմաստության և հանճարի հոգու (ինչպես որակել էր Եսայի մարգարեն) խորհրդի և պորության, գիտության և Աստուծո երկյուղի (ԺԱ 2): Բազում էին վկայությունները նախաքրիստոսյան, կամ ավելի ձիշտ կլինի ասել՝ Ս. Հոգու նախաէջքի շրջանի (Գ Թագ. ԺԹ 12, Բ Օրինաց ԼԲ 39 և այլն), սակայն միայն Նոր Ուխտի մեկ ներկայացրածն է ամբողջականը և կենդանին՝ լույսն ու հուրը մեր հոգիների, ճանապարհն ու ուղենիշը հավիտենականի (Բ Կորնթ. Զ 16, Եփես. Բ 22, Ա Պետր. Բ 4 և այլն): «Չայս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի» (Ա Կորնթ. ԺԲ 11), որով և՛ «առէք հոգին սուրբ», կամ որով հեղաշրջումը մեր հոգիների և հիմնումը Աշխարհամատնան՝ առաջին Եկեղեցին քրիստոսյան:

Ս. Հոգու էջքով հաստատվում է քրիստոսյան փառքի թագավորության շրջանը. «Ձի ձեզ են աւետիքս՝ և որդւոց ձերոց, և ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր» (Գործք Բ 39), կամ «որ պահն իմ լսէ և հաւատայ այնմ որ առաքեացն զիս...

և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս» (Հովհ. Ե 24):

Ս. Հոգին՝ Ս. Երրորդության երեք անձնից մեկը, հավասարապատիվ անձ է ինչպես Հայր Աստուծո, այնպես էլ Որդի Աստուծո հետ: Մեկություն են նրանք: Այսօր ևս հավատքով թող հաստատվի այս ճշմարտությունը: Սակայն Ս. Հոգու շնորհաբաշխ պաշտոնն այն է, որ նա մեկին տա իմաստություն և մյուսին՝ բժշկություն, մեկին՝ լեզուների իմաստություն, մյուսին՝ այլ բարձունք և այլն (Չաք. ԺԲ 10, Հովհ. ԺԴ 17, Ե 22—23, ԺԲ 26, Ա Կորնթ. Զ 17, Եբր. Ժ 29 և այլն), «...նախանձաւոր լերուք շնորհացն, որ լսն են: Այլ ես առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ» (Ա Կորնթ. ԺԲ 31):


Ս. Հոգին «ուր կամի նա շնչէ» (Հովհ. Գ 8), մանավանդ այսօր, եթե մենք մեր անձը հանձնել ենք նրան՝ սպասելով հավատք և հոգի պորացնող իր կրակին: Այդ դեպքում է, որ մենք գալիլիացի առաքյալների պես արժանի կլինենք աստվածային հայտնություններին կամ հրաշագործություններին կամ էլ սաղմոսերգուի հետ իրավունք կունենանք ասելու՝ «հարբելու եմ քո փառքի երեսին նայելու» (Սղմ. ԻԲ 5): «...հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» (Ա Կորնթ. Գ 17). առաքյալների պես «ընտրեաց զմեզ Աստուած ի սկզբանէ ի փրկութիւն սրբութեամբ հոգւոյն և հաւատովքն ճշմարտութեան» (Բ Թեսալ. Բ 12):

Միեւրի բարեպաշտ ժողովուրդ, այսօր նաև ինքնակատարելագործման օր է, մեր հոգու, մարմնի և մեր պագումների ներդաշնակումի օր. «հարբենք» Ս. Հոգով՝ մնալու համար միշտ Աստուծո և մեր Տիրոջ՝ Փրկչի հետ: Ս. Խորհուրդի այս առաջին ծանոթությունը տրվեց մեզ. «...Ոչ առէք զհոգին ծառայութեան միտանգամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան» (Հռոմ. Ը 15):

Այսպես, թող դառնանք Ս. Հոգունը, իսկ երբ հայտնվի Հիսուս Քրիստոսի «քաղցրությունն ու մարդասիրությունը», Նրա ողորմությամբ էլ, որպես պատասխանը մեր ճրջմարիտ հավատքի ու արդար գործերի, թող կարողանանք ապրել մինչև «յաւուրն յետնում» (Տիտոս Գ 4—5):

Նաև Ս. Ներսես Շնորհալու հետ միշտ և հանապազ աղոթենք. «Հաղորդս արա և զմեզ, Տէր, աղաչեմք զքեզ, աստուածային պարգևացդ, թողութեան մեղաց և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ», որպեսպի մեզ տըրվելիք պատասխանը լինի՝ «...Դուք ճանաչեիք զնա, զի առ ձեզ բնակեցէ և ընդ ձեզ եղիցի» (Հովհ. ԺԴ 14): Ամեն:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՔԱՐՅԱՆ



ՆՈՐԸՆԾԱ Տ. ՆԵՐՍԵՍ ՔԸՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆԻ
ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(24 հուլիսի 1983 թ.)

«Յանուն Հոր, եւ Որդոյ եւ Հոգոյն Սըրբոյ. ամէն»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, քրիստոնյա հոգևորականի համար շատ բնական և պատշաճ է եկեղեցու սուրբ խորանից, որտեղ ամեն կիրակի պատարագ ենք մատուցում մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի «պսոյրք և փորաշալի ԿՅարութիւն» օրհնելու և փառավորելու, քարոզի բնաբան ընտրել մի պատգամ սուրբ Ավետարանից մեր քրիստոնեական կյանքը իմաստավորելու ցանկությամբ:

Ինչպես դուք գիտեք արդեն, քրիստոնեական բոլոր եկեղեցիները, այդ թվում նաև Հայաստանայց ս. եկեղեցին, հիմնված են Քրիստոսի Ավետարանի պատգամների վրա, պատգամներ, որ ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս իր քարոզչությունների ընթացքում տարածեց իր շուրջը համախմբված մարդկանց մեջ: Իր մահից առաջ նա իր առաքելությունը իրականացնելու պարտականությունը հանձնեց իր տասներկու աշակերտներին՝ ասելով. «Ձի դուք երթայցեք եւ պտղաբերեք լինիցիք եւ պտուղն ձեր կացցէ», «որ դուք գնաք և պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա» (Հովհ. ԺԵ, 16):

Քրիստոսի արտասանած այս կարճ հրահանգին հետևելով՝ դարեր շարունակ անհամար հայ անհատներ իրենց կյանքը նվիրել

են եկեղեցու ծառայությանը, և այսօր իմ այս անդրանիկ պատարագի խորհրդավոր պահին, նոր կյանքիս ճանապարհի շեմին ցանկանում եմ խորհրդածության և ուխտի նյութ դարձնել այս պատգամը՝ «վի դուք երթայցեք եւ պտղաբերեք լինիցիք եւ պտուղն ձեր կացցէ»:

Պտուղ տալն աշխարհում անժխտելի օրենք է թե՛ բուսական, թե՛ կենդանական և թե՛ մարդկային կյանքի մեջ: Ամեն մի սերմ, որ գյուղացին ցանում է, սպասում է անհամբեր, որ այն ծլի, ծաղկի և պտուղ տա: Կյանքի մեջ էլ սկսած որևէ գործ պետք է իր նպատակակետն ունենա, որին մարդ անդադար ձգտելու է: Երբ նա հասնում է իր նպատակին, ասում ենք՝ այդ գործը պտուղ տվեց: Պտուղ տալը, հետևաբար, հարատևության նշան է: Եթե պատմությունը այսօր մեր առաջ է դնում մեծամեծ գործերի հիշատակներ, եթե մենք այսօր ոգևորվում ենք սրբոց Վարդանանց քաջագործության պատմությունը կարդալով, եթե մարդկությունը պատմության էջերում անկորուստ է պահել կատարված մեծ գործերը և գյուտերը, նշանակում է, որ այդ դեպքերը մարդկանց սրտերում և մտքերում մի անգամ հաստատուն արմատ բռնելուց հետո ծլել, ծաղկել և բարի պտուղ են տվել:

Բայց արդյոք ամեն գործ պտուղ է տալիս:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս իր մատուցումից առաջ իր աշակերտներին հրաժեշտ տալով և խրախուսելով, որ չվհասվեն, ավելացրեց. «Ձի դուք երթայցեք և պտղաբերեք լինիցիք և պտուղն ձեր կացցեք»: Այդ ի՞նչ պտուղի մասին էր խոսում Քրիստոս, ի՞նչ գործ պիտի կատարեին այդ գալիլիացի ձրերը, որ պտղաբեր պիտի լինեին, և, ավելին, այդ պտուղը պետք է հարատևեր՝ և պտուղն ձեր կացցեք»:

Մարդկության պատմության մեջ մեծ հեղաշրջում է առաջացրել քրիստոնեությունը մի այնպիսի ժամանակ, երբ մարդկությունը երես էր դարձրել իր Արարչից, երբ մի խոր անդունդ էր բացվել մարդու և Աստուծո միջև: Քրիստոնեությունը հանդես եկավ օտարացած մարդու երեսը կրկին անգամ դեպի իր Ստեղծողն ուղղելու և նրա առաջ երկնային թագավորության ճանապարհը հարթելու:

Քրիստոնեության հանդես գալու ժամանակ Հռոմեական կայսրության մեջ ժողովուրդներն ապրում էին պեխության և շվախության մեջ: Ժամանակի մարդկությունը այնպես էր տարված աշխարհի վայելքներով, որ քրիստոնեության բարձր, փրկարար սկզբունքները շատերին միանգամայն անմատչելի պիտի լինեին, և էին: Մարդիկ այլ կերպ էին մտածում ու գործում, քան քրիստոնեությունն էր նրանց առաջարկում, նրանք բոլորովին այլ գաղափարներ ունեին Քրիստոսի մասին և այլ սպասելիքներ նրանից: Գաղափարների այս տարբերության հետևանքն այն է լինում, որ Քրիստոս, նրա աշակերտները և քրիստոնեությունը որպես նոր գաղափարախոսություն ենթարկվում են խիստ հալածանքների: Սակայն բավական մեջ կային և անհատներ, որոնք ընդունակ էին ըմբռնելու և հասկանալու Քրիստոսի քարույծ սկզբունքները և ընդունելու այն ճանապարհը, որ տանում էր դեպի փրկություն, դեպի երջանկություն: Ահա այս երկրորդ ճանապարհը ընտրողներն էին, որոնք շարունակ Քրիստոսի հետ էին, որոնք և Քրիստոս սիրեց, հավատաց և պատրաստեց իրենց ապագա կոչման համար:

Քրիստոնեության առաջին պարտքն ու սուրբ նպատակն էր ուղիք կանգնեցնել մոլորյալ մարդկությունը, խորտակել մինչև այդ ժամանակ նրան շղթայող բոլոր կապանքները, դարձնել նրա երեսը դեպի իր Աստվածն ու Ստեղծիչը, կրկին անգամ հիմք դնել և ամրապնդել սիրո կապերը Աստուծո հետ: Քրիստոնեությունը ամբողջովին սեր է, այդ սիրո պատկերն ենք տեսնում Քրիստոսի ամբողջ կյանքի և գործունեության մեջ: Նրա արտասանած ամեն մի խոսքը, պատգամը, նրա կատարած գործը ամբողջովին սեր էր, սեր, որին մարդկությունը կարող էր, սակայն ըն-

դունակ չեղավ հասկանալու և ըմբռնելու: Մեր աքանչելի բանաստեղծ Ներսես Շնորհալի հայրապետը իր «սրտաբուխ աղոթքներից մեկում հետևյալ անմոռանալի տողով է ամփոփում քրիստոնեության ողջ էությունը. «Մեր անուն Յիսուս, սիրով քո ձևեա՛ սիրո իմ քարեղեն»: Այս կարճ նախադասությունը մեզնից յուրաքանչյուրը հեշտությամբ կարող է դարձնել իր ամենօրյա աղոթքը: Քրիստոս այս սիրով կապեց իր աշակերտներին իրեն և Աստուծո հետ և սուրբ ավանդ թողեց այդ նույն սիրով կապել և ամբողջ մարդկությունը Աստուծո հետ:

Բայց մի՞թե հեշտ էր այդ իրագործելը, մի՞թե այդ գալիլիացի ձկնորսները կարող կամ ընդունակ էին այդ վեհ գաղափարը իրականություն դարձնել, քանի որ նրանց հոգու աչքերը դեռևս կատարելապես չէին բացված: Նրանք դեռևս հույս ունեին այս անցավոր աշխարհում ստանալ այն բոլոր բարիքները, որ խոստանում էր նրանց իրենց Վարդապետը: Ահա այսպիսի մի ժամանակ Քրիստոս իր աշակերտների առաջ մի նոր ուղի գծեց, մի ճանապարհ ցույց տվեց, որով նրանք պետք է գնային: Հիսուս մինչև անգամ որոշակի ասում էր, թե աշակերտները այդ ճանապարհի վրա ի՞նչ գործ պիտի կատարեին և այդ գործի արդյունքը ի՞նչ պիտի լինեին. «Ձի դուք երթայցեք և պտղաբերեք լինիցիք և պտուղն ձեր կացցեք»: Նրանք՝ այդ համեստ ձկնորսները, պետք է գնային և պտղաբեր լինեին: Ինչպիսի՞ վեհ նպատակ, երբ մարդ իր գործով կարող է բարի պտուղ տալ: Բայց մի՞թե ամեն մի աշխատանք հաջողությամբ է պսակվում: Սակայն այն սերմերը, որ առաքյալները ցանելու էին, պետք է անպայման պտուղ տալին, որովհետև նրանք ոչ թե իրենց հոգու թելադրությամբ էին գործում, այլ իրենց մեջ բնակված Փրկչի հոգու և եթե մեկը չունենար Քրիստոսի հոգին, նա գործել չէր կարող, որովհետև՝ «Եթե ոք չհոգի Քրիստոս ոչ ունի, սա չէ նորա»: Եվ այս հոգին է, որ գրտնրվում է բոլոր հավատացյալների մեջ և բոլորին ընդունակություն է տալիս ապատագրվելու մեղքի կապանքներից և իրավունք է տալիս Աստուծո որդիներ լինելու. «Ձի ոչ առեք զհոգին ծառայության միսանգամ յերկիւղ, այլ առեք զհոգին որդեգրութեան, որով աղաղակենք՝ Աբբա Հայր», այսինքն՝ «Քանի որ չստացաք ծառայության հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրության հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր» (Հռոմ. 8, 16):

Եվ ահա մենք տեսնում ենք Քրիստոսի աշակերտներին կյանքի ասպարեկում: Փրկչի պատգամը՝ «Ձի դուք երթայցեք և պտղա-

բերք լինիցիք», մղում է նրանց աշխարհի ամեն կողմ: Առաքյալները անվախ կյանքի մեջ են մտնում և առ ոչինչ համարում աշխարհի տանջանքները: Այն առաքյալները, որոնք վտանգի ժամանակ իրենց Վարդապետին թողել ու փախել էին, հիմա այլևս վախ չեն պահում: Գողգոթայի վրա բարձրացված խաչը նրանց այնպիսի ոգի է ներշնչում, որ նրանք ոչ միայն չեն վախենում Հրեաստանում խաչեցյալ Քրիստոսին քարոզելուց, այլև համարձակ դուրս են գալիս Հռոմեական կայսրության դեմ, սասանեցնում նրա հիմքերը, խորտակում հեթանոս աշխարհի պարիսպները և քրիստոնեության առաջ ճանապարհ հարթում:

Օրհասական կռիվ է սկսվում քրիստոնեության ու հեթանոսության միջև: Վերջինս ոտքի է հանում իր բանակները և կատաղությամբ աշխատում ջարդել, փշրել նորակալված քրիստոնեությունը: Քրիստոնեությունը սակայն, հսկայական քայլերով առաջ է գնում, և Գողգոթայի վրա բարձրացված խաչը դղրդեցնում է ամբողջ Պաղեստինը, Հռոմեական կայսրությունը և շրջակա երկրները: Առաքյալները քրիստոնեական հավատքը ամեն տեղ տարածելով՝ երկնային սիրով կապում են ամենքին թե՛ միմյանց և թե՛ Աստուծո հետ:

«Ձի դուք երթայցեք և պտղաբերեք լինիցիք...»:

Եթե վերցնենք Եկեղեցու պատմությունը և մանրակնին քննության ենթարկենք, ապա կտեսնենք, որ նրա պատմության գրքի ամեն մի էջը նահատակների արյամբ է շաղախված: Հապարավոր մարդիկ այրվեցին, նահատակվեցին և այդ ամենը նրանք տարան «ի սիրոյն Քրիստոսի»: Առաքյալները անվեհեր, բաց ձակառով հղոր կայսրերի դեմ դուրս գալով՝ նրանց հալածանքներին միայն պատասխանում էին. «Մեք քարոզեցուք յխաչեւեալն Քրիստոս, Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն», այսինքն՝ «Մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին՝ ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների» (Ա Կորնթ. Ա, 23): Առաքյալների և քրիստոնյա նահատակների արյամբ սերմանված սերմերը տալիս են պտուղ, քրիստոնեությունը հաղթում է, և այսօր աշխարհի մեծ մասը ծունր է չոքում Գողգոթայի խաչի առաջ:

Քրիստոնեական բոլոր Եկեղեցիների շարքին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ևս հիմնվել է Քրիստոսի երկու առաքյալների՝ Թադեոսի և Բարթողիմեոսի քարոզչությունների շնորհիվ: Նրանք գործադրելով Քրիստոսի պատգամը՝ «Ձի դուք երթայցեք և պտղաբերեք լինիցիք...», առաջինը՝ 33 թվա-

կանին և երկրորդը՝ 44 թվականին եկել են Հայաստան, Քրիստոսի Ավետարանը քարոզել, հիմնել Եկեղեցի և Հայաստանում էլ նահատակվել: Հայաստանում, առաջին դարից սկսած, քրիստոնեությունը հետպետե վարձացավ և Դ դարում տապալեց հայոց հին կրոնը՝ հեթանոսությունը, և 301 թվականին քրիստոնեությունը հռչակվեց Հայաստանի պետական կրոն: Ե դարում Հայ Եկեղեցին, որ ինքնագլուխ էր, դարձավ կատարելապես ազգային, երբ ս. Սահակ կաթողիկոսը և ս. Մեսրոպ Մաշտոցը հայ տառերը նկարեցին, Սուրբ Գիրքը թարգմանեցին, և հետպետե ստեղծվեց Ե դարի հայ դասական քրիստոնեական գրականությունը:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, ձեր և իմ նախնիները թեև ահավոր արհավիրքներից ու մարտնչումներից տառապել ու հյուծվել են, այնուամենայնիվ դարերի հեռավոր խորքերից մարդկությանը ժառանգ են թողել հարգանք պարտադրող հարուստ և հիասքանչ մշակույթ: Հայ ժողովուրդը իր ճակատի արդար քրտինքով, իր ձեռքերի մեծ ճարտարությամբ, իր պայծառ հոգով և մտքով մեկ ընծայաբերել է հայ գիտության ջահը, հայ գեղարվեստի հմայքը, հայ գրականության փառքը: Մեր ժողովրդի ստեղծած մշակույթը ծառայել և ծառայում է մեկ նշանաբանի՝ «Ճանաչել զիմաստութիւն և վերատ, իմանալ վրանս հանճարոյ»:

Սրանից շուրջ 1700 տարի առաջ հաստատված ս. Լուսավորչի գահը դեռ կմնա կանգուն, նա իր գահակալն ունի: Ս. Լուսավորչի և նրանից առաջ ս. Թադեոսի և ս. Բարթողիմեոսի հաստատած Ս. Էջմիածնի այս Աթոռը և այս ս. տաճարը երկար դարերի ընթացքում ինչքան հարվածներ ստացան, ի՞նչ մորիկների ու փոթորիկների խաղաղք դարձան, բայց, այստիպանդեմ, կանգուն մնացին և կանգուն կմնան հետայսու մայր հողի վրա՝ լավագույն գրավականը հանդիսանալով Քրիստոսի պատգամի՝ «և պտուղն ձեր կացցեք»:


Իմ սնդրանիկ պատարագով իմ առաջ բացվում է ծառայության մի նոր ճանապարհ: Կյանքի այս նոր հանգրվանին, իբրև հայ հոգևորական, աստվածային Բահանալայետի՝ Հիսուս Քրիստոսի քաջալերիչ պատգամը նշանաբան ունենալով իմ պարտքն եմ համարում անշահախնդիր կերպով ծառայել ձեզ, իմ ժողովրդի զավակներին, սնուցանել նրանց հոգիները քրիստոնեական և սուգային-հայրենասիրական բարի սցազումներով: Մեծ երախտագիտությամբ հարգելով հիշատակը և վաստակը այն բոլոր սուրբ քահանաների, որոնք լույսով ողողեցին Հայոց աշխարհը, համեստաբար, ի խորոց

սրտի, աղոթում եմ այս ս. Սեդանից՝ «Արժանի արա և վիս ի ժամուս յայսմիկ զանապիտան ծառայս քո, որ համարձակիս և մերձենաս ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քո»:

Խորհրդավոր այս պահին որդիական ու նվիրական իմ պարտքն եմ համարում ջնորհակալության և երախտագիտության խոսք ուղղել Նորին Սուրբ Օծություն S. S. Վազգեն

Ա Ամենայն Հայոց Հայրապետին, որ արժանի գտավ տկար և նվաստ անձս կոչելու քահանայության իմ երկու ընկերների հետ՝ նվիրվելու մեր Եկեղեցու և ժողովրդի ծառայության սուրբ գործին:

Վեհափառ Տեր, «ջնորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղությամբ պահեցին զպատուիրանս քո»: Ամեն:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

«...Եկայք շինեցուք սուրբ վիտորան լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան
աշխարհի»:

Հայոց Եկեղեցու Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածին վանքով հիմնվել է 301 թ. Արշակունիների մայրաքաղաք Վաղարշապատում Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն: Ս. Էջմիածինն ունի աստվածային ծագում և ըմբռնվել ու սահմանվել է իբրև «տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան»¹:

Սակայն Հայրապետական Աթոռը միշտ հաստատ ու անշարժ չի մնացել Ս. Էջմիածնում: Երկրի քաղաքական ծանր վիճակից ու անապահովությունից դրդված՝ հայ կաթողիկոսները, իշխանները, թագավորները, ժողովրդի համաձայնությամբ, այն տեղափոխել են քաղաքական իշխանության կենտրոնացած վայրեր կամ այլ ապահով հանգրվաններ: Այսպես, սկսած Ե դարի վերջերից, Աթոռը փոխադրվել է տեղից տեղ. Ս. Հովհաննես Ա Մանդակունու օրոք (478—490)՝ Դվին 485 թ., Ս. Հովհաննես Ե Դրասխանակերտցու օրոք (898—929)՝ Աղթամար 927 թ., Ս. Անանիա Ա Մոկացու օրոք (946—968)՝ Արգիշա 947 թ., Ս. Սարգիս Ա Սևան-

ցու օրոք (992—1012)՝ Անի 992 թ., Ս. Խաչիկ Բ Անեցու օրոք (1058—1065)՝ Թավրիզ 1062 թ., Ս. Գրիգոր Բ Վկայասերի օրոք (1066—1105)՝ Ծամադավ 1072 թ., Ս. Գրիգոր Գ Պահլավունու օրոք (1113—1166)՝ Ծոփք 1116 թ. և ապա Հռոմկլա 1149 թ., և վերջապես Ս. Գրիգոր Է Անավարպեցու օրոք (1293—1307)՝ Սիս 1293 թ.²:

Հակառակ այս հաճախակի տեղափոխություններին, Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած Մայր տաճարը հայ ժողովրդի գիտակցության մեջ միշտ մնացել է իբրև Հայրապետական Աթոռի իսկական, սկզբնական և ազգային ամենանվիրական սրբավայրը:

Բոլորովին տարբեր միջավայր էր հանդիսանում Սիսը, ուր փոխադրվեց Հայրապետական Աթոռը Հռոմկլայի կործանումից հետո: Կիլիկյան հայկական թագավորությունը վաղուց սերտ հարաբերության մեջ էր Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Երբ խաչակիրներն անցնում էին Կիլիկիայով, Ռուբինյան իշխաններն ամեն կերպ աջակցում էին

¹ Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Երևան, 1977, էջ 110:

² Մ. արք. Օրմանյան, Հայոց Եկեղեցի, Կ. Պոլիս, 1912, էջ 42—50, տես նաև Ս. Բաբկեն Ա Կյուլեսերյան, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիպատ, 1939, էջ 6—7:

նրանց իբրև քրիստոնյաների: Խաչակիրներն Արևելքում գրավեցին շատ երկրներ և հիմնեցին ավատական իշխանություններ Արևմտյան Եվրոպայի երկրների պետական կառավարչական կարգով (Սիրիա, Երուսաղեմ, Լիբանան, Պաղեստին, Կապադովկիա): Աշխուժացան Կիլիկիայի առևտրական հարաբերություններն այս նոր հաստատված իշխանությունների, ինչպես նաև Հռոմ, Ջենովա, Վենետիկ, Ֆլորենցիա և այլ քաղաքների հետ: Տեղի էին ունենում խառն ամուսնություններ հայ ազնվական տների և օտար ազգի իշխանական տների միջև:

Կիլիկիայի արքունիքն ու իշխանական տները առանձին հակում էին ցուցաբերում դեպի կաթոլիկ երկրները որպես քրիստոնյա քաղաքակիրթ ու վարձացած պետություններ: Սրանով է բացատրվում Կիլիկիայի պետական կառուցվածքի, քաղաքական օրենսդրության, տիտղոսների ու շատ սովորությունների համանմանությունը այդ երկրների հետ: Այս իրողությունը, սակայն, քաղաքական անկայուն ու ծանր վիճակ էր ստեղծում Կիլիկիայում: Կիլիկիան իր գոյությունը պահպանելու համար ստիպված էր անհավասար պայքար մղել մոնղոլների, Եգիպտոսի ու Սիրիայի մեմլուկների և Փոքր Ասիայում հաստատված սելջուկ թուրքերի հետ: Ուստի, քաղաքական այսպիսի անբարենպաստ պայմաններից ելնելով, Կիլիկիայի թագավորների ու իշխանների պատկանելի մասը իր երկրի բախտն ու ապագան կապում էր Եվրոպայից ակնկալվող ռավական օգնության հետ: Եվրոպական երկրների պետական մարմիններն իրենց դեկավարներն ունեին հանձնիս կաթոլիկ Եկեղեցու պետերի, որոնք այդ ժամանակ հյուրության զագաթնակետին էին հասել և թագավորներ էին օժտում ու թագավորներ գահադրում: Այս պատճառով էլ Կիլիկիայի թագավորներն ու իշխաններն առաջին հերթին պարտավոր էին հաճոյանալ Հռոմի պապերին, կաթոլիկ Եկեղեցու պետերին: Սրանք էլ իրենց հերթին շուրջ խոստումներ էին տալիս խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու և հայերին ապատելու մահմեդականների ճնշումից՝ փոխարենը պահանջելով հայկաթոլիկ Եկեղեցիների «միություն»: Կիլիկիայի իշխաններից ու թագավորներից շատերը Հայ Եկեղեցու ավանդության, ծեսի, դավանության և ազգային դիմագծի հաշվին ցանկանում էին ի գործ դնել այդ «միությունը»՝ փրկելու համար իրենց պետությունը մոտալուտ կործանումից: Շատ ավելի դժվար էր Սսի հայրապետների վիճակը: Նրանք մի կողմից պետք է կատարեին թագավորների ու իշխանների կամքը, իսկ մյուս կողմից պետք է պաշտպանվեին արևելյան հայ վար-

դապետներից, որոնք նրանց մեղադրում էին նորամուծությունների, կաթոլիկ հոգևորականության կամքը կատարելու մեջ: Անշուշտ եղան Հայ Եկեղեցուն հավատարիմ կաթոլիկներ, սակայն նրանք ինչ կարող էին անել տիրապետող կաթոլիկամետ հոսանքի դեմ, որը բավականին ուժեղ էր: Այդպիսիների վրա հերյուրանքներ բարդելով՝ զահեղեց էին անում նրանց կամ այլ միջոցների դիմում:

1375 թվականին վերջնականապես կործանվեց Կիլիկյան հայկական թագավորությունը՝ խաբված և անօգնական: Սկսվեց Կիլիկիայի, Հայ Եկեղեցու և Հայրապետական Աթոռի պատմության ամենատխուր և դաժան ժամանակաշրջանը: Հաճախակի կատարվում էին ասպատակություններ կողոպուտի, թալանի, ու ավերի նպատակով: Բռնակալների ոտքերի տակ ավերակ էին դարձել ամբողջ երկիրը: Անընդհատ տեղի էին ունենում վանգվածային զաղթեր Սիս մայրաքաղաքից և Կիլիկիայի այլ վայրերից դեպի Հռոդոս, Իտալիա, Ֆրանսիա, Կիպրոս և այլ վայրեր³: Դատարկվել էին քաղաքներն ու գյուղերը, շեներն ու ավանները:

Քաղաքական այսպիսի տխուր ու ծանր սլայմանների հետ մեկտեղ հոգևոր կյանքում ծայր էին առել բարոյական անկումն ու քայքայումը, եկեղեցական ավանդության ոտնահարումներն ու կաթոլիկների ապոկեոլոգիայի կատարվող նորամուծությունները: Շատ մտալի և ողբերգական զույներով է նկարագրում ժամանակի պատմիչ Թովմա վարդապետ Մեծփեցին իր «Հիշատակարանում» Կիլիկիայի հայ հոգևորականների արարքները⁴: Հայ ժողովրդի ու Եկեղեցու վրա ծանրանում էին նաև կաթոլիկների ու նրանց հետ գործակցող հայերի, ապա նաև մամուլների, թաթարների ու թուրք սելջուկների անօրինությունները: Իսկ 1426 թ. Կիլիկիայի վերջին հայ իշխան Կոստանդինը, չկարողանալով դիմադրել Եգիպտոսի Մուլաֆար սուլթանի հարձակմանը, Կիլիկիայից արտագաղթող բավաճապար հայերի գլուխն անցնելով՝ թողեց երբեմնի Սիս մայրաքաղաքը՝ ապաստան գտնելով Կիպրոսում⁵: Կիլիկիան գրեթե դատարկվեց հայությունից: Հարկավոր էր այսպիսի մթնոլորտից դուրս բերել Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Հայրապետական Աթոռը նորից փոխադրել մեկ այլ ապահով տեղ: Այս հարցը անհանգստացրել էր

³ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հ. III, էջ 785:

⁴ Թ. Մեծփեցի, Հիշատակարան, Թիֆլիս, 1892, էջ 55—59:

⁵ ԳԱ Հայ ժողովրդի պատմություն, հտ. Դ, Երևան, 1976, էջ 39:

շատ հայրենասեր ու եկեղեցանվեր անձանց՝ Ստեփանոս Օրբելյանին, Խաչատուր Կեչառեցուն, Հովհան Որոտնեցուն, Գրիգոր Տաթևացուն: Հռչակավոր ու եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին ուներ հեռատես մի ծրագիր. նա Սսից Հայրապետական Աթոռը հետագայում առանց դժվարությունների Մայր Հայրենիք փոխադրելու նպատակով աշխատեց վերացնել Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը⁶, որպեսզի մեկ միասնական Հայրապետական Աթոռ: Իսկ Սիսն էլ գտնվելով այդպիսի անմխիթար վիճակում՝ հեշտ կլինե՞ր Հայրապետական Աթոռի փոխադրությունը այնտեղից դեպի մայր երկիր: Թեև ձախողվեցին Գրիգոր Տաթևացու ջանքերը. սակայն նրա կիսատ մնացած գործը գլուխ բերելու նպատակով ոտքի կանգնեցին նրա երկու մեծ և հայրենասեր աշակերտները՝ Հովհաննես վրդ. Հերմոնացին և Թովմա վրդ. Մեծոփեցին: Այս սրբազան գործին լծվեցին նաև Արտազի Գրիգոր եպիսկոպոս Ջալալյանը, Սյունյաց մեծ իշխան Ռուստամ Օրբելյանը, Կիլիկիայի և շատ այլ վայրերի ապագաներ հոգևորականներ և աշխարհականներ:

1430-ական թվականներին Հայաստանը գտնվում էր կարա-կոյունլուների տիրապետության ներքո: Նրանք Երևանը դարձրել էին Արարատյան դաշտի և ամբողջ Արևելյան Հայաստանի վարչական կենտրոն: Դրանից հետո Երևանը աստիճանաբար դառնում է նաև Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի կենտրոն: Արարատյան դաշտը, որ հնուց ի վեր հայ ժողովրդի պետական, քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքի օրրանն էր, այժմ նորից էր աշխուժանում և իր վրա բեռնում այդ ժամանակ արդեն իսկ աշխարհով մեկ ցրված հայության հայացքը: Հայրենասեր Ռուստամ Օրբելյանը, որն Իսքանդար Կարա-Կոյունլուի մերձավոր խորհրդականներից էր, ուներ քաղաքական որոշ հեռանկար. այն է, Արարատյան նահանգի կենտրոնում, նվիրական Ս. Էջմիածնում վերահաստատել Հայրապե-

տական Աթոռը, որով կարելի կլինե՞ր շաղկապել հայ ժողովրդի՝ տարբեր բռնապետությունների տակ հեծող հատվածները և դրանով էլ հող նախապատրաստել անկախության վերականգնման համար: Այդ նպատակով, նա Ս. Էջմիածինը տնտեսապես ամրապնդելու և ապահովելու համար 1431 թ. «վաճառք» անվան տակ Գրիգոր եպս. Ջալալյանցի անունով, որպես «զնող», վանքին է նվիրում 7 խոշոր գյուղեր՝ Վաղարշապատը, Աշտարակը, Բաթնիսը, Աղավնատունը, Նորագավիթը, Թղենիսը և Մուղնին⁷:

Իր հերթին Հովհ. վրդ. Հերմոնեցին, որպես ապոկեփի ու հեղինակավոր անձ իր մեծ ուսուցիչ Գրիգոր Տաթևացուց հետո, նամակներ ու հրավերներ է ուղարկում բոլոր թեմերի հոգևորականներին՝ «զալ Վաղարշապատ ամենայն միաբանութեամբ ի յօրինութիւն Էջմիածին...»⁸: Հրավերն ուժեղ արձագանք է գտնում և մեծ ուրախություն առաջ բերում ամբողջ հայության մեջ: Այս հարցի լուծումն համազգային նշանակություն է ստանում, որովհետև ողջ հայ ժողովուրդը Ս. Էջմիածնի հավերժ անսասնության մեջ էր տեսնում հայության պահպանման, ապահովության և երջանկության երաշխիքը:

1440 թ. վերջը ու 1441 թ. սկիզբը անցնում է ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման և այն հաջող անցկացնելու նախապատրաստական աշխատանքներով, որովհետև այդ անչափ կարևոր գործի հաջողությունը կապված էր հակառակությունների չհանդիպելու և ընդհանուրի հավանությունը ստանալու հետ: Վաղարշապատում բացվելիք ազգային-եկեղեցական այդ մեծ ժողովի գումարման ժամանակը նշանակված էր ապրիլի 16-ը, Ս. Ջատկի տոնակատարությունից հետո:

Հայաստանի զանազան կողմերից և այլ վայրերից եկած և Երևանում հավաքված ժողովականների թիվը, ըստ Թովմա վրդ. Մեծոփեցու, եղել է «առելի քան վերքե հարիր անձինս», որոնք Երևանի կուսակալ Յաղուբեկի Կորքերի առաջնորդությամբ ու ընկերակցությամբ, «փողով, թմբուկով և զոչմամբ բարձրագոյն» ուղևորվում են «ի սուրբ քաղաքն Վաղարշապատ» իրենց բաղձալի խորհուրդն իրագործելու: Ահա թե ինչպես էին ժողովականներին դիմավորում բնակիչները. «փողն զանգակացն զոչէր, երիտասարդքն զոչէին, ծերքն աղաղակէին և զԱստուած ցնծութեամբ օրհնէին, մանկունքն խալտա-

⁶ Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը հիմնվել էր 1113 թ.: Երբ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց տակավին քսան տարեկան Տ. Գրիգոր Գ Պապավոնին, Աղթամարի Դավիթ եպս. Թոռնիկյանը ըմբոստացավ այս ընտրության դեմ և մի քանի իր նման դժգոհ եպիսկոպոսների ձեռքով Աղթամարում շփոթեց կաթողիկոս: Այս առիթով 1114 թ. Շուղրի Կարմիր վանքում գումարվեց եկեղեցական ժողով, որը բանադրեց Դավիթ եպիսկոպոսին ու նրա հակաթոռ կաթողիկոսությունը: Այն իր գոյությունը պահպանեց մինչև 1895 թ.:

⁷ Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը. հտ. 1, Երևան, 1968 թ., էջ 76: Կամ Ս. Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1871, էջ 128:

⁸ Թ. Մեծոփեցի, «Հիշատակարան» էջ 64:

յին, կանայքն երկրպագութեամբ և լալով պանենեսեան վարիուրեցուցանէին...»⁹:

Նախքան ժողովի բացվելը, հետագա անսխործությունների ու արժապատու ձգտումների առաջն առնելու նպատակով, ժողովականները հրավիրագիր ուղարկեցին իրենց անունից Սսի Տ. Գրիգոր Թ Մուսաբեկյանին՝ խնդրելով գալ և շարունակել իր կաթողիկոսությունը Ս. Էջմիածնում: Նա գումարվելիք ժողովին տվեց իր մերժումն ու հրաժարակալը՝ պատճառաբանելով իր ծերությունը:

Վաղարշապատի համապատասխան եկեղեցական ժողովը բացվում է 1441 թ. մայիսի 25-ին, Քրիստոսի Համբարձման տոնին: Եվ ահա Ս. Էջմիածնում հայտնվում է Ս. Գրիգոր Լուսավորչի մատնաքով ոսկեծույլ Աջը, որը խորհրդանշում էր կաթողիկոսական իշխանության և նոր կաթողիկոսի ընտրության վավերականությունը: Աջը բերել էին Կիլիկիայից 4 հայրենասեր և ողջամիտ եպիսկոպոսներ:

Ժողովում նախ քննության է առնվում Տ. Գրիգոր Թ Մուսաբեկյանի հրաժարականը, և բոլոր մասնակիցների համաձայնությամբ ժողովը «...դադրած կհռչակե Մուսաբեկյանի կաթողիկոսությունը...»¹⁰: Ապա ժողովը խանդավառ ու սրտագին մթնոլորտում, միահամուռ հռչակում է Մայր Աթոռի՝ 956 տարվա թափառումներից հետո Ս. Էջմիածին հայրենադարձությունը և իր բնօրրանում վերահաս-

տատված Աթոռին կաթողիկոս օծում Տ. Կիրակոս Ա Վիրապեցուն:

Հայրապետական Աթոռի այս վերջին փոխադրությունը կրոնա-եկեղեցական նշանակությունից բացի ուներ նաև քաղաքական նպատակներ. հայերին հեռու պահել եվրոպական երկրների ձեռքին խաղալիք դառնալուց, դառնալ միջոց օտար երկրներում ցրված բազմահազար հայերին Մայր Հայրենիքին կապելու, արգելել նրանց օտարացումն ու ձուլումը այլ ազգերի հետ:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին պատմական կարևորություն ունեցող այս բախտորոշ իրադարձության հիշատակումը մեծ ջուղով կատարում է ամեն տարի Փրկչի Համբարձման տոնի հետ միասին՝ հայրապետական մաղթանքով:


Երկար ու ձիգ տարիներ են անցել, բազում արհավիրքներ ու փոթորիկներ են եկել ու անցել Ս. Էջմիածնի և Հայրապետական Աթոռի վրայով, սակայն, որպես անսասան ժայռեր, երկուսն էլ տոկացել և կանգուն են մնացել, որովհետև գտնվում են հայրենի հողում, իրենց կենսատու Մայր Հայրենիքում: Եվ ահա այս է գաղտնիքը, որ միշտ անսասան ու հավերժական է մեր հավատքի ամրոց Ս. Էջմիածինը, որը «...մեր Սինա լեռն է, մեր Ակրոպոլիս է, մեր Ս. Պետրոսն է»¹¹:

ՍՏԵՓԱՆ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

⁹ Թ. Մեծովեցի, Հիշատակարան, էջ 58—59:


¹⁰ Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ, Բեյլուք, 1959, էջ 2104:

¹¹ Ամենայն Հայոց Հայրապետի քարոզը Կաթողիկոս Ս. Էջմիածնի տոնի առթիվ, «Էջմիածին» ամսագիր, 1957 թ., հունիս, էջ 7:





ՄԻ ՊԱՆՆԵԹԱՅԻ ՍՎԵԹԻՑՆՈՎԵԼԻ ՄԱՅՐ ՏՈՎԱՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Համայն Վրաստանի Կաթողիկոս Ս. Իլիա Բ-ի հրավերով և Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վապգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ սույն թվականի հուլիսի 1-ին Մայր Աթոռից մի պատվիրակություն մեկնեց Թբիլիսի՝ մասնակցելու Գեորգիկյան պայմանագրի 200-ամյակին և Վրացական Ուղղափառ Եկեղեցու կաթողիկոսական Աթոռի ինքնագլխության 1500-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններին:

Հայ Եկեղեցու պատվիրակությունը բաղկացած էր՝ Մայր Տաճարի լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանից, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Գևորգ եպ. Սերայդարյանից և Մայր Աթոռի միաբան Ս. Մոմիկ վրդ. Սարգսյանից:

Ս. Էջմիածնից Վրաստան ժամանած հայ պատգամավորներին դիմավորեցին Վրաց Եկեղեցու մի խումբ հոգևորականներ՝ գլխավորությամբ Սուխումիի և Աբխազիայի Ս. Դավիթ միտրոպոլիտի, և Վրաստանի հայոց թեմից Ս. Դավիթ քնն. Ջելվելանը:

Հայ և վրացի հոգևոր հայրերը առաջնորդվեցին Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ Մայր եկեղեցի, ուր դիմավորվեցին Վրաստանի հայ հոգևորականների կողմից՝ թեմակալ առաջնորդ սրբապանի գլխավորությամբ: Ապա «Հրաշափառ» շարականի հնչյունների ներքո հոգևոր հայրերը մուտք գործեցին եկեղեցի, ուր տեղի ունեցավ «ժամանման աղոթք» և արտասանվեց «Հայր մեր»-ը հայերեն և

վրացերեն լեզուներով: Այստեղ Վրաստանի հայոց թեմակալ առաջնորդ Ս. Գևորգ եպիսկոպոսը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Ս. Էջմիածնից ժամանած հյուրերին:

Համայն Վրաստանի Կաթողիկոսի անունից հյուր պատգամավորներին ուղղված ողջույնի և բարիգալստյան սրտագին խոսք ասաց նաև Ս. Դավիթ միտրոպոլիտը:

Այնուհետև հյուրերը առաջնորդվեցին «Մետեխի» առանձնատուն-հյուրանոցը:

Հուլիսի 2-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Թբալիսիի Շախմատի պալատում տեղի ունեցավ հոբելյանական նիստ, որին ներկա եղան Հայ Եկեղեցու պատգամավորները: Նիստին ներկա էին նաև հոբելյանական հանդիսություններին հրավիրված Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ և Ուկրաինայի եպարխ Ս. Ֆիլարետը ի գլուխ Ռուս Եկեղեցու պատգամավորության, Անտիոքի և Բուլղարիայի պատրիարքական Աթոռների, զանազան քույր եկեղեցիների ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ:

Նիստին ներկա էր նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Գենրիխ Միխայլովը:

Նիստը բաց արեց Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոսը, որից հետո Սուխումիի և Աբխազիայի միտրոպոլիտ Ս. Դավիթը հանդես եկավ Գեորգիկյան պայմանագրի 200-ամյակին նվիրված զեկուցումով:

Վրաց Ուղղափառ Եկեղեցու ինքնագլխու-



թյան 1500-ամյակի առթիվ մի ընդարձակ պեկուցում կարդաց նաև Ուրբինսկու միտրոպոլիտ Ս. Կոստանտինը: Երկու պեկուցումներն էլ լավեցին մեծ հետաքրքրությամբ:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Ս. Սիոն պատրիարքական Մայր Տաճարում տեղի ունեցավ հսկման արարողություն, որին ներկա եղան բոլոր հրավիրյալները:

Հետևյալ օրը, կիրակի, հուլիսի 3-ին, առավոտյան ժամը 10-ին, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Մցխեթայի պատրիարքական Սվեթիցխովելի Մայր Տաճարում: Պատարագեց Նորին Սրբություն Ս. Իլիա Բ Կաթողիկոսը: Պատարագի վերջում, Ս. Իլիա Բ Կաթողիկոսի քարոզից հետո, եկեղեցու բնակից քույր Եկեղեցիների ներկայացուցիչները հաջորդաբար ընթերցեցին իրենց հոգևոր պետերի ուղարկած ողջույնի ուղերձները: Հայ Եկեղեցու անունից Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վաչագեն Ա-ի խոսքը, որի ռուսերեն թարգմանությունը կատարեց Ս. Գեվորգ եպիսկոպոս Սերայդարյանը (Հայոց Հայրապետի խոսքը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում էջ 3):

Այնուհետև, հանդիսավոր իրադրության մեջ, Վրաց Կաթողիկոսին հանձնվեց Հայոց Հայրապետի ուղարկած նվերը՝ արծաթյա սկիի և ոսկյա հուշամեդալ Ս. Ս. Վաչագեն Ա Կաթողիկոսի դիմանկարով:

Նույն օրը, ժամը 20-ին, Վրաց Ուղղափառ Եկեղեցու կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ «Արագվի» ռեստորանում: Նորին Սրբություն Ս. Իլիա Բ Կաթողիկոսի ողջույնի խոսքից հետո, հանուն Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ողջույնի խոսքով հանդես եկավ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը, որը Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնն ու շնորհավորանքը փոխանցելուց հետո, ի մասնավորի ասաց.

«Պատմական խոր արմատներ ունի Հայ և Վրաց Եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որը երբեք չի թուլացել և չի խախտվել փորձություններով և երկարատև մեր պատմության ընթացքում: Այդ բարեկամությունը առավել սերտացավ և ամրապնդվեց հատկապես վերջին երկու դարերի ընթացքում՝ սկսած այն շրջանից, երբ մեր երկու ժողովուրդները ապաստարանեցին պարսկական դաժան տիրապետությունից ռուս քրիստոնյա և քաջարի ժողովրդի եղբայրական աջակցությամբ...»:

Հուլիսի 4-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, տեղի ունեցավ ընդունելություն Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունում: Վրաց Կաթողիկոս Նո-

րին Սրբություն Իլիա Բ-ի գլխավորությամբ պատգամավորներին ընդունեց Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ մեծարգո արև. Գիլաշվիլին:

Այստեղ նույնպես, ի թիվս այլ պատգամավորների, խոսք առավ Ս. Հուսիկ արքեպիսկոպոսը՝ ողջունելով մեծախարգ նախագահին Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից:

Ժամը 18-ին Ս. Իլիա Բ Պատրիարք-Կաթողիկոսը իր վեհարանում ընդունեց Հայ Եկեղեցու պատվիրակության անդամներին: Վրաց Կաթողիկոսի և հայ հոգևորականների միջև տեղի ունեցավ սրտագին ջերմ կրոնց, ապա նվերների փոխանակում:

Հուլիսի 5-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայ Եկեղեցու պատվիրակության անդամներն այցելեցին Թբիլիսիի Ս. Էջմիածնի եկեղեցին, ուր տեղի ունեցավ աղոթք և օրհնություն: Ապա հայ պատգամավորները, վրացի հոգևորականների ուղեկցությամբ, մեկնեցին «Մոջի վանքի» հայ մշակույթի գործիչների պանթեոնը, ուր Բաֆու գերեզմանի շուրջ թաղված հանգչում են անվանի հայ մտավորականների, գրողների, դերասանների, նկարիչների, երգահանների ու երգիչների աճյունները:

Այստեղ Հայ Եկեղեցու հոգևոր հայրերը, վրացի հոգևորականների հետ, կատարեցին համատեղ աղոթք և հոգեհանգիստ հայ մշակույթի երախտավորների հիշատակին:

Նույն օրը, ժամը 20-ին, «Մթացմիկոս» ռեստորանում Վրաց Ուղղափառ Եկեղեցին, ի պատիվ հանդիսություններին ժամանած հյուրերի, տվեց հրաժեշտի ճաշկերույթ, որի ընթացքում ճառով հանդես եկավ Ս. Գևորգ եպ. Սերայդարյանը: Սրբապան հայրը շնորհակալություն հայտնեց ցուցաբերված ուշադրության և հարգալից հյուրամեծարության համար, ապա ոգեկոչեց կույզ հորեպանների հիշատակը՝ բաժակ բարձրացնելով Նորին Սրբություն Ս. Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի քաջամոլության և արևշատության համար:


Հուլիսի 6-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, բոլոր պատգամավորները հրաժեշտ տվեցին հյուրընկալ Վրաստանին և վերադարձան իրենց երկրները:

Հայ Եկեղեցու ներկայացուցիչներին ճանապարհելու համար Վրաց Եկեղեցու հայրերը և Թբիլիսիի հայ հոգևորականաց դասը մեկնեցին մինչև «Վրասնի մոստ»՝ վրացական-ադրբեջանական սահմանը, ուր ջերմ պագմունքներով տեղի ունեցավ եղբայրական հրաժեշտի բաժանումը՝ կրկին տեսության բարեմադրություններով:

ԳԵՎՈՐԳ ԵՊՍ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ



ԱՄԵՐԻԿԱՆ ՀԵՆՐԵՅԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԸ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՎԵՐԱՄԱՆԻ ԱՅԳՈՒՄ



ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՅՐ
ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

«Ես հայ եմ, որ դժբախտ ճակատագրի բերումով ծնվել եմ օտար ափերում: Սակայն հակառակ այս դառն իրականությանը ես միշտ ինձ հայ եմ զգում և կմնամ հայ, քանի որ հավատքով, մտքով ու ամբողջ էությանմբ կապված եմ իմ արմատներին»:

Այս ոգին ու ներշնչումն ունեին սույն թվականի հունիսի 18-ին առաջին անգամ Մայր Հայրենիք ոտք դրած մի խումբ երիտասարդներ: Նրանք Ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության (A.C.Y.O.A) անդամներից էին, որոնք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով այցի էին եկել Հայաստան: Նորածին մանկան նման, որ բնազդական մղումով ձգտում է իրեն ծնողին, ամերիկահայ այս երիտասարդներն էլ իրենց հոգում տարիներ շարունակ զգացել են այրող մի մղում դեպի հին և դարերով ոտնակոխ եղած, սակայն այժմ երիտասարդ ու ծաղկող իրենց հայրենիքը: Մղում նաև վերանորոգության, հավատքի, ինքնաճանաչման...

Ամերիկահայ երիտասարդների խմբի ղեկավարն էր Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքի հայոց Ս. Փրկիչ եկեղեցու հոգևոր հովվի օգնական բարեջնորհ Օնիկ սարկավազ Թերպյանը՝ իրեն օգնական ունենալով վաստակաշատ տիկին Ապատուհի Տառնեքյանին, որի երրորդ այցելությունն է Մայր Հայաստան: Այս իսկ արդեն բավական է կարծիք կազմելու նրա կարոտի, ջերմ սերո ու նվիրվածության մասին դեպի վերածնված

Մայր Հայաստանն ու իր հարապատ ժողովուրդը:

Երիտասարդների խումբը բաղկացած էր 27 երկսեռ անդամներից՝ հավաքված ԱՄՆ-ի Արևելյան և Արևմտյան թեմերի տարբեր նահանգներից: Նրանց առաջ իր հյուրընկալ դռները կրկին բացեց քառագագաթ Արագած լեռան փեշերին հաստատված Բյուրականի «Հայկաշեն» հայրապետական ամառանոցը, որտեղից բացվում է Արարատ աստվածաշնչական ս. լեռան և Արարատյան դաշտավայրի զմայելի համայնապատկերը:

Հունիսի 19-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ ս. պատարագի, ամերիկահայ երիտասարդներին ընդունեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոպապայանը, որոնք ի բացակայության Վեհափառ Հայրապետի ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին նրանց:

Հաջորդ օրվանից սկսած, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախաձեռնությամբ, նախօրոք մշակված Ծրագրի համաձայն, ամերիկահայ երիտասարդների հետ սկսվեցին շուրջ միամսյա ուսուցողական պարապմունքներ, որոնց ընթացքում նրանք սովորում էին հայոց լեզու, հայկական երգեր ու պարեր: Իրենց ազատ ժամերին ամերիկահայ երիտասարդները հնարավորություն ունեցան լինելու Հայաստանի տեսարժան վայրերում և ծանոթանալու Մայր Հայրենիքի մշակութային կյանքին: Նրանք այցելեցին

թանգարաններ, պանթեոն, Մատենադարան, եղան Էրեբունիում, Գառնիում, Դվինում, Ծիծեռնակաբերդում, Սարդարապատում և այլն: Ուխտագնացություններ կատարեցին և աղոթեցին Հայաստանի տասնյակ եկեղեցիներում: և պատմական վանքերում:

Հուլիսի 7: Դասերն ու պարապմունքները վերջացել են: Ամերիկահայ երիտասարդները հավաքվել են Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի շենքում մի տեսակ հանրագումարի բերելու այս կարճ ժամանակամիջոցում իրենց ձեռք բերած գիտելիքների արդյունքները: Շատ հուզիչ ու ջերմ մթնոլորտում է անցնում հավաքույթը: Երիտասարդները խմբով կատարում են մի շարք հայրենասիրական երգեր, պարեր ու արտասանություններ: Բոլորն էլ գոհ և մխիթարված են: Վերջում խմբի անունից կոմիտեի բոլոր աշխատակիցներին ջերմ շնորհակալություն է հայտնում Վահան Ղասաբյանը՝ ավելացնելով. «Կրնա ըլլայ, որ մենք ժամանակի ընթացքին մոռանք մեր սորված որևէ երգ, պար, արտասանություն կամ հայերեն բառեր, սակայն երբեք չենք մոռնար, որ մենք հայ ենք, որ ունինք ծաղկող ու բարգավաճող Հայաստան»:

Հուլիսի 11: Նախավերջին օրը: Երիտասարդները կրկին հավաքվել են Վեհարանում՝ այս անգամ հրաժեշտ առնելու համար: Խմբի անդամներին ընդունում են գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Ս. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրոյանը: Ս. Սիոն սրբազանը բարի ճանապարհ է մաղթում երիտասարդներին և իր հայրական խրատներն ու պատգամն է տալիս նրանց՝ նշելով, որ, ուր էլ որ ապրելիս լինեն, երբեք չմոռանան իրենց մայրենին, երբեք չկտրվեն

վերածնված Մայր Հայրենիքից և հայության հավատքի ամրոց Ս. Էջմիածնից:


Այնուհետև ամերիկահայ երիտասարդների անունից շնորհակալության խոսքով հանդես է գալիս խմբի ղեկավար բարեշնորհ Օննիկ սարկավազ Թերպյանը՝ ջերմ և սրտաբուխ խոսքերով արտահայտելով խմբի ողջ անդամների խոհերն ու պագումները և հայտնելով խորին երախտագիտություն Նորին Սուրբ Օծույթյուն Ս. Ս. Վապգեն Առաջին կաթողիկոսին, որը առիթ ընձեռեց իրենց այցելելու Հայաստան: «Մենք գիտեինք Հայաստանի մասին, կարդացած էինք կարգ մը գիրքեր, տեսած էինք բազում պատկերներ Հայաստանի տեսարժան վայրերու: Սակայն այժմ եկանք և մեր սեփական աչքերով տեսանք, սրտերով պզգցինք և հոգեպես լիցքավորվեցանք: Հպարտ ենք և մխիթարված: Կվերադառնանք հայրենիքի կարոտը մեր սրտերուն մեջ»:

Ապա երիտասարդներից մի քանիսը մոտենում են և իրենց ձեռքերում տոպրակներով լի Հայաստանի հողը տալիս են Ս. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրոյանին՝ օրհնելու, որպեսպի տանեն իրենց հետ օտար ափերում իրենց մահացած հարապատների գերեզմաններին ջաղ տալու:

Հուլիսի 12: Երևանի «Չվարթոնգ» օդանավակայանից առավոտյան վաղ օդ է բարձրանում ինքնաթիռը՝ իր հետ տանելով ամերիկահայ երիտասարդներին իրենց ջերմ ու անուշ հիշողություններով, հայրենական ապրումներով և անջնջելի տպավորություններով:

Բարի ճանապարհ ձեռք, սիրելի հայորդիներ:

ՍՏԵՓԱՆ ՍՐԿ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եվնիկ քին. Պետրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ձի՛նչ օգուտ իցե, եղբարք իմ, եթե ասիցե ոք հաւատս ունեւ եւ գործս ոչ ունիցի. միթե կարիցեն հաւատքն ապրեցուցանել վնա» (Հակոբոս Բ 14) բնաբանով:

Հուլիսի 9-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ ժամանեց ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի պատվիրակությունը՝ ներկայացուցիչների պալատում դեմոկրատների դեկլարանների տեղակալ Թոմաս Ս. Ֆոլիի գլխավորությամբ:

Վեհաբանում, հանդիսությունների դահլիճում, հյուրերին ընդունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը և համառոտ տեղեկություններ հաղորդեց նրանց Հայ Եկեղեցու պատմության և նրա այսօրվա կյանքի մասին:

Այնուհետև հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի թանգարաններում ցուցադրվող եկեղեցական նմուշներին:

Վերջում հյուրերը շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար՝ խնդրելով իրենց հարգալից պգացումները փոխանցել Ամենայն Հայոց Հայրապետին:

*
* *

Հուլիսի 10-ին, կիրակի.—Վարդավառ: Պաժառանկեպարտին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, օրվա մեծ տոնի առթիվ, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսում «Կատարումս օրինաց եւ մարգարեից՝ դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր» (պատարագամատույց) բնաբանով:

*
* *

Հուլիսի 11-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քին. Ֆրանգյանը: «Ձկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն նւշեցելոց»:

Հուլիսի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Ս. Շահեն արքեպ. Աճեմյանը:

Հուլիսի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Մովսիս վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ և տպավորիչ քարոզ է խոսում Ս. Շահեն արքեպ. Աճեմյանը՝ «Բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան վեա» (Ղուկ. է 28) բնաբանով:

Հուլիսի 18-ին, երկուշաբթի.—Այսօր Ս. Շահեն արքեպ. Աճեմյանը մեկնում է Վանկումեր (Կանադա)՝ մասնակցելու եկեղեցիների Համաշխարհային խորհրդի վեցերորդ համաժողովին:

Հուլիսի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Հուլիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում Ս. Ներսես քին. Ներսեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի դուք երթայցեք եւ պողաբերք լինիցիք եւ պտուղն ձեր կացցե» (Հովհ. Ժե 16) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 25-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռում գտնվող Ս. Ներսես քին. Ներսեսյանը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից մեկնում է Լոնդոն՝ իր պաշտոնատեղին:

Հուլիսի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, «Հայկաշեն» հայրապետական ամսօրանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր խորհրդի հերթական նիստ:

Հուլիսի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս վրդ. Չաքայանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Ծ Շ Տ ՈՒ Մ

Մայր Աթոռ վերջերս տեղյակ դարձավ Լոս Անջելոսում լույս տեսնող «Ասպարեզ» օրաթերթի 14 փետրվար 1983 համարում հրատարակված զրույցարտչական բնույթ կրող մի գրության՝ Էդվարդ Հովհաննեսյան ստորագրությամբ, Սուրբ Էջմիածնում նոր կառուցված Հայ Եկեղեցական Արվեստի Թանգարանի վերաբերյալ, որով հողվածագիրը հայտարարում է, թե ապգային բարերար տիար Ալեք Մանուկյանի Մայր Աթոռի նվիրաբերած գումարը (հինգ հարյուր հազար դոլար) իբր թե փոխանցված է Սովետական Պետական Դրամատան և օգտագործված քաղաքական ինչ-որ նպատակների:

Այսու լիազորված ենք կատարելու հետևյալ ճշտումները.—

1.— Ինչպես Մայր Աթոռի բոլոր բարերարների նվիրաբերած գումարները տարիների ընթացքում, նույնպես և վերոհիշյալ թանգարանի բարերար տիար Ալեք Մանուկյանի տրամադրած գումարը փոխանցված է Ժնևի Union de Banques Suisses դրամատանը, Վեհափառ Հայրապետի անվան հատուկ հաշվին:

2.— Տիար Ալեք Մանուկյանի նվիրաբերած վերոհիշյալ գումարից (մեկ հարյուր հազար դոլար) փոխանցված է Իտալիա՝ Միլանից գնված մարմարների համար: Երկու հարյուր հազար դոլար փոխանցված է Ֆինլանդիա՝ թանգարանի ներքին կահավորման և էլեկտրական լուսավորության սարքավորումների համար: Երեսուն և ութ հազար դոլար փոխանցված է Հալեպ՝ տիար Գեվորգ Այվապանին՝ այլոմիհիումից պատրաստված դռների և լուսամուտների համար:


3.— Տիար Ալեք Մանուկյանի տրամադրած գումարից պիտի վճարվի նաև թանգարանի օդափոխման սարքավորման համար, որը պետք է պատրաստվի արտասահմանում:

Չայս հանձնում ենք ուշադրությանը՝ «Ասպարեզ» օրաթերթի հարգելի խմբագրության և ընթերցողների:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Ս. Էջմիածին,
19 հուլիսի 1983 թ.





ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐՍՈՒԴԱՐՅԱՆՑ (Ծննդյան 150-ամյակի առթիվ)

Անխոնջ հետապնդող, հմուտ պատմաբան, աշխարհագրագետ ու բանահավաք, ջերմ հայրենասեր ու անվանի կրոնական գործիչ,—այսպես է ներկայանում մեզ Մակար Բարխուդարյանցը, որի ծննդյան 150-ամյակը լրացավ անցյալ տարի:


Հայ մշակույթի մեծ երախտավորի կյանքն ու գործը լուսաբանող որևէ հետապնդություն դժբախտաբար չունենք այսօր: Մեզանում դժբախտաբար մոռացության է տրված բարի ու համեստ գործչի անունը, նրա պատմագիտական ուշագրավ երկասիրությունները մատենագիտական հազվագյուտ նմուշներ են այժմ:

Մակար Բարխուդարյանցը ծնվել է 1832 թ., Արցախի իսաչեն գավառի իսանածախ գյուղում: Նրա մանկությունն ու պատանեկությունը անցել է իր բանաստեղծական ծննդավայրում: Արցախյան բնաշխարհի կախարդական գույները, հնամենի կոթողների անպուգական պատկերները, սուրբ մասունքները անջնջելի տպավորություն են թողել նրա կյանքում:

Սկզբնական կրթությունը Մ. Բարխուդարյանցը ստանում է հայրենի գյուղի քահանայի մոտ, այնուհետև աշակերտում իր ժամանակի անվանի վարդապետներին ու եպիսկոպոսներին:

1862 թ. ուսման ծարավը երեսնամյա Մ. Բարխուդարյանցին տանում է Երուսաղեմ: Ս. Հակոբյանց վանքի միաբան և հոգևոր դպրոցի տեսուչ, իր հայրենակից Մելիքսեդեկ Մուրադյանցի առաջնորդությամբ նա հարստացնում է իր գիտելիքները, նրա գրիչը դառնում է ավելի բեղուն:

Այդ թվականից էլ Մ. Բարխուդարյանցն սկսում է իր գրական, պատմագիտական



գործունեությունը: Մելիքսեդեկ Մուրադյանցի խորհրդով նա ուխտում է անմնացորդ նվիրվել իր պաշտելի ազգի ու հայրենիքի, մայրենի Եկեղեցու շահերի պաշտպանությանն ու բարօրությանը:

1869 թ. Մակար Բարխուդարյանցը ընդունում է հոգևոր կոչում՝ ստանալով սարկավագական աստիճան, իսկ 1870 թ. Եսայի

Պատրիարքի կողմից ձեռնադրվում է վարդապետ: 1880 թ. Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով նա դառնում է Ս. Էջմիածնի միաբան:

Հաջորդ տարում Մ. Բարխուդարյանը հրավիրվում է Շուշի: Որպես կրոնական առարկաների ուսուցիչ սկսվում դասավանդում է տեղի ռեալական, այնուհետև՝ թեմական դպրոցում: Այդ տարիներին նա շրջում է հայրենի երկրի գավառները, հավաքում ազգագրական, պատմական հարուստ նյութ:

1888 թ. սեպտեմբերի 1-ին Մ. Բարխուդարյանը նշանակվում է Սաղիանի վանքի վանահայր՝ միաժամանակ ստանձնելով վանական դպրոցի տեսչի պաշտոնը: 1889 թ. նա արդեն Շամախու Մայր եկեղեցու քարուպիչ էր: Արխիվային վավերագրերից տեղեկանում ենք, որ նրա այդ տարիների գործունեությունը խիստ արդյունավետ է եղել:

1892 թ. Մ. Բարխուդարյանը կարգվում է Ալեքսանդրապոլի առաջնորդի փոխանորդ: Այնտեղ մի քանի ամիս մնալուց հետո, նա վերադառնում է Ս. Էջմիածին և վերստին նշանակվում Սաղիանի վանքի վանահայր:

1894 թ. ձեռնադրվելով եպիսկոպոս, Մ. Բարխուդարյանը նշանակվում է Շամախու թեմի առաջնորդ: 1896 թ. դեկտեմբերի 20-ին ապատվում է այդ պաշտոնից և վերադառնում Ս. Էջմիածին, որտեղ Նորին Վեհապետության կոնդակով նշանակվում է Մայր տաճարի լուսարարապետ և Վանական կառավարչության անդամ: Այնուհետև նա եղել է Սինոդի անդամ:

1904 թ. տկարության պատճառով նա հրաժարվում է Սինոդի անդամի պաշտոնից: Նշանակվելով Ագուլիսի Ս. Թովմայի վանքի վանահայր՝ նա ցանկանում էր ծերության վերջին օրերն անցկացնել այնտեղ, սակայն մահը շուտով վրա է հասնում. 1906 թ. փետրվարի 6-ին Ս. Էջմիածնում 74-ամյա Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը կընքում է իր մահկանացուն:

Բազմազան և բազմաբնույթ են Բարխուդարյանի երկասիրությունները: Նա գրել է գրական-ժողովրդական երկեր՝ «Միրյա և Աննա», «Արալը տարին կտարի», «Չնաշխարհիկ տղա», «Չորսն ու նշանածը», «Պղը-Պոտի», «Նախապաշարմունք», «Աստուծո օրհնած տունը», կրոնական բնույթի երկեր՝ «Մատչելի քարոզներ», «Աստվածային հրահանգ Հանրապարտուց», պատմա-աշխարհագրական բնույթի երկեր՝ «Գաղտնիք Ղարաբաղի», «Աղվանից երկիր և դրացիք», «Պատմություն Աղվանից երկրի», «Արցախ»:

Մ. Բարխուդարյանի գրական-ժողովրդական երկերը թեև աչքի չեն ընկնում բարձր գեղարվեստականությամբ, սակայն ունեն մի

մեծ դրական հատկանիշ՝ ճանաչողական անժխտելի արժեք: Իր հայրենի բնաշխարհից, մեծ մասամբ հարապատ Խանածախի մարդկանց կյանքից վերցված նրա հուպիչ պատմությունները շաղախված են ժողովրդի կյանքի, սովորությունների, կենցաղի, ժողովրդական տոների, գյուղական միջավայրի մանրամասն, հավաստի նկարագրություններով: Դրանցում ամփոփված է հարուստ ազգագրական նյութ: Ազգագրական անուրանալի արժեք են ներկայացնում հատկապես «Պղը-Պոտի» երկը և անտիպ գործերից «Նախապաշարմունքը»:

Մակար Բարխուդարյանի պատմա-աշխարհագրական բնույթի առաջին գործը «Գաղտնիք Ղարաբաղի» երկասիրությունն է, որի մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Արցախին վերաբերող մի շարք դրվագներ: Այնուհետև Մ. Բարխուդարյանը լրջորեն նվիրվեց մեր ժողովրդի պատմական անցյալի, նրա սքանչելի մշակույթի հանգամանակից հետազոտությանը՝ «ըստ ամենայնի հետևելով ճշմարտությանը և անխոնջ հետախույզությանը»:

Յոթ ամիս նա շրջեց Դաղստանի (Խապարաց և Ալանաց երկիրը), Դարբանդի, Ղուբայի (ձղբա և Լփնաց երկիր), Բաքվի, Շամախու, Շաքիի և Բաղասականի գավառները: Հետազոտության արդյունքը եղավ «Աղվանից երկիր և դրացիք» գիրքը: Հետո նա յոթ ամիս հետախույզեց Մուղանի, Գագարացվոց, Գագա դաշտերը, Արցախի բոլոր գավառները: Դրա արդյունքը եղավ «Արցախ» երկասիրությունը: Երկու գրքերն էլ արժանացան Իզմիրյան մրցանակի: Հետո ծնվեց «Պատմություն Աղվանից երկրի» երկհատոր աշխատությունը: Հետևելով հայ դասական մատենագրության, օտար պատմաբանների, իր ժամանակի հայ պատմագրության ավանդներին, օգտագործելով բազմաթիվ արխիվային վավերագրեր, ինչպես նաև իր անձնական հետազոտությունների արդյունքները, նա ստեղծեց մի գործ՝ «Արցախը», որը նշանակալից երևույթ է հայ պատմագիտության մեջ և այսօր ևս ունի մնայուն արժեք: Յոթանասունամյա հասակում նա երիտասարդական ավյունով նվիրվեց այս երկի ստեղծման աշխատանքներին:

Մ. Բարխուդարյանի «Արցախը» պատմա-աշխարհագրական, մշակութային հարուստ նյութ է պարունակում: Այն տալիս է նահանգի համակողմանի նկարագիրը, բոլոր գավառների, քաղաքների, գյուղերի, բերդերի, կամուրջների, վանքի ու եկեղեցիների մանրամասն հետազոտությունը, վիմագիր արձանագրությունները, ձեռագիր մատյանների հիշատակարանները:


Մակար Բարխուդարյանցը ամենից առաջ աչքի էր ընկնում իր հետաքրքրությունների լայն շրջանակով և խուլարկու բնավորությամբ: Ամբողջ հոգով նա նվիրված էր իր սիրելի գործին: Նրան մտահոգում էր հայ մշակույթի անկյալ վիճակը, իր ժամանակակիցների աններելի անտարբերությունը. «Այնքան անհոգ և անտարբեր ենք, որ չգիտենք, թե ինչ հնություններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիներից մեկ ավանդ մնացած. չգիտենք, թե պատմական փշրանաց ինչ հիշատակարաններ կան թաքնված մեկ շրջապատող լեռների, ձորերի և դաշտերի մեջ. չգիտենք, թե ապաշին անցյալ պատմության մույթ կետերը լուսաբանող ինչ արձանագրություններ կան ավերակ վանքերի և անապատների, մատուռների և եկեղեցիների, խաչարձանների և տապանաքարերի վրա և մագաղաթյա գրչագիրների հիշատակարաններում: Մեր անտարբերությունից օգուտ են քաղում օտարները»:

Մակար Բարխուդարյանցի աշխատությունը երկար տարիների տքնաջան և ծանր աշխատանքի արդյունք է: Նա շրջել է Արցախի բոլոր գավառները, գերադասել անձամբ

տեսնել ամեն մի կոթող. «Աչքովս տեսնեմ երկրի դիրքը, ձեռքով շոշափեմ ողջ հնությունները, ուշի ուշով ակնենմ արձանագրությունները, խոսուն և անխոս քարերը, կանգուն և ավերակ շինությունները, կոթողները»:

Այսօր մեկ պարմանք է պատճառում, թե ինչպիսի տիտանական աշխատանք է կատարել հմուտ հետազոտողը, ինչքան հանգամանորեն և ճշտորեն է կատարել տեղադրությունները, պարզել կոթողների կառուցման, վերակառուցումների և ավերումների ժամանակները: Մի կողմից ժամանակը, մյուս կողմից կոպիտ ու չարանենգ մարդու ձեռքը ավերել են հնամենի բազում կոթողներ, որոնց հանգամանակից նկարագրությունը Մակար Բարխուդարյանցի երկասիրության մեջ ականատեսի վկայություններ են և այսօր սկզբնաղբյուրի դեր են կատարում, օգնում մեկ ամբողջական ու խոր պատկերացում կապմելու Հայաստանի Արցախ գեղատեսիլ նահանգի պատմական անցյալի և հոյակերտ մշակույթի մասին:

ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ԺԳ.—ԺԵ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

ԺԳ.—ԺԵ դարերը հայ հոգևոր երաժշտության պատմության մեջ պատրոշվում են որպես վարճացած ավատատիրության շրջանի ետջնորհալիական փուլը: Այն՝ ունի առանձնահատուկ նշանակություն: ԺԳ դարում հայ հոգևոր մասնագիտացված երգարվեստը (ինչպես և միջնադարի հայկական ողջ մշակույթը), վարճացման վերջնափուլը դարավոր ճանապարհի վրա հասնում է իր գլխավոր բարձրակետին. որից հետո, աստիճանաբար բոլորվելով, ԺԵ հարյուրամյակի կեսերից դիմագրավում է ուշ միջնադարյան դժնդակ պայմանները:

Բնութագրվող ժամանակների հայ հոգևոր երաժշտության ուսումնասիրությունը կապված է լուրջ դժվարությունների հետ: Նույնիսկ մի կողմ թողնելով միջնադարյան խաչավոր ձեռագրերի երաժշտական բովանդակության բացահայտման դեռևս չափապանց դանդաղ նախապատրաստվող գործը, բախվում ենք հետևյալ բարդություններին:

Մեզ հետաքրքրող շրջանի տաղային ստեղծագործությունից (որը մեծակերտ-վարդարական ոճը ներկայացնող ամենաեական երևույթն է նշված դարերի հայ երաժշտության մեջ), սակավաթիվ նմուշներ են հասել մեզ՝ ավանդաբար պահպանված եղանակներով հանդերձ: Այդ նմուշների մի մասն էլ տակավին անանուն է, թեև բնույթով հեղինակային, որով և՛ հեղինակային պատկանելության առումով՝ կարոտ լուսաբանության:

Այնուհետև, տաղային ստեղծագործության ոլորտին վերաբերող «ծանր», «ստեղի», «պարտուղի» շարականների հորինման ասպարեկում Ներսես Շնորհալուց հետո որոշ գործեր ընդհանրապես հայտնվել են թեև, բայց քիչ, և որպես ավելի համեստ մտա-հղացումների մարմնավորումներ:

Դարձյալ, տաղային ստեղծագործության հետ անմիջաբար առնչված՝ պատարագի մեղեդիներից, սրբասացություններից և նըմաններից մեծակերտ-վարդարական ոճի աչքի ընկնող օրինակները կամ Շնորհալուն են («Ամենակալ ես տեր պորութեանց», «Բազմութիւնք հրեշտակաց», «Հրեշտակային կարգաւորութեամբ», «Ով է որպէս տեր Աստուած մեր» և այլն). և կամ՝ երաժշտամտածողության նույն հունի մեջ Կիլիկիայում, հաջորդ հարյուրամյակում կերտված ու դեպի տվյալ ոճի վարճացման բարձունքներն ուղղված, անհայտ հեղինակների ստեղծագործություններ («Ի կոյս վիմէն», «Բանին հօր ծոցոյ մարմնարան», «Այսօր մեռեալքն», «Այսօր հարսն լուսոյ» և այլն):

Դրանց մեջ կարող են լինել նաև վերա-եղանակավորված գործեր: Մեզանում ևս (ինչպես Բյուզանդիայում և այլուր), ԺԳ.—ԺԵ դարերում հանդես են եկել՝ ավելի վաղ ստեղծված միաձայնային կոթողները մեղեդիական մտածողության նոր պահանջների համեմատ վերաեղանակավորած կատարող (երգիչ) երաժիշտներ: Նրանք հեղինակ կամ հեղինակակից դառնալու ձգտումներ թեև չեն ունեցել, սակայն օժտված են եղել ստեղծագործական շատ ավելի մեծ իրավունքներով, քան այն՝ ինչ վերապահվում է արդի կատարողներին: Որով մեր պարտքն է, ըստ կարելիության, որոշել նրանց գործունեության արդյունքները ևս:

Նշված խնդիրների շրջանակներում մեր ներկա և ապագա անելիքներն առավել իրատակվում են, երբ վարճացած ավատատիրության պատմաշրջանին վերաբերող ետջնորհալիական ժամանակների երաժշտա-գեղարվեստական արտադրանքը քննում ենք ըստ հայ մասնագիտացված երգաստեղծության

Կիլիկյան և Հայաստանյան դպրոցների ներկայացուցիչների գործերի: Մասնավորապես պարզվում է¹, որ ուշ միջնադարի ընթացքում մեր կրած երաժշտական կորուստների մեծագույն և կարևորագույն հատվածը վերաբերում է հայ մասնագիտացված երգաստեղծության Կիլիկյան դպրոցի ետշնորհալիական շրջանին: Այստեղից էլ, մեզ հետաքրքրող հարյուրամյակների երաժշտական դիմապատկերը ստվերագծելու չափ նյութեր հայթայթվում են:

Այսպես, Կիլիկյան գեղարվեստական արտադրանքից ուսումնասիրության ոլորտը ներթափանցում են՝ մեկական ծանր շարական Ներսես Լամբրոնացուց և Հակոբ Կլայեցուց, մի տաղ Կոստանդին Սսեցուց և ԺԳ—ԺԴ դարերում վերաեղանակավորված կոթողներից երկու նմուշ (Գրիգոր Նարեկացու «Հատուն հատուն» և ԺԱ դարի հավանաբար Անեցի անունով հեղինակի «Տիրամայրն» տաղերը): Կենտրոնական Հայաստանում, նույն ժամանակներում ծաղկած երաժիշտ-բանաստեղծների ժառանգությունը ևս՝ բնավ ամբողջապես չէ, որ հասել է մեզ: Եվ սակայն, հաջատու: Տարրուեցու, Վարդան Արևելցու, Հովհաննես Երզնկացու (Պուլի), Մխիթար Այրիվանեցու և Առաքել Սյունեցու նման հեղինակների ստեղծագործությունից պահպանվել են առանձին, երևելի երկեր:

Տարբեր առիթներով մենք անդրադարձել ենք դրանցից մի քանիսին, ինչպես՝ Խաչատուր Տարրուեցուն և հայոց Պատարագի նախերգին («Խորհուրդ խորին»)՝², Հովհաննես Երզնկացուն, որպես երաժիշտ-բանաստեղծի³ ու տեսաբանի⁴, Մխիթար Այրիվանեցուն և Ավագ հինգշաբթի օրվա «Միրտ իմ սասանի» գանձ-երգին⁵ և այլն: Ներկա հոդվածում

մենք ընթերցողին կծանոթացնենք Կոստանդին Սսեցուն և նրա «Խաչն ի նախնուն երևեցա» տաղին, կներկայացնենք Հովհաննես Երզնկացու «Այսօր ձայնն հայրական» հորդորակը, աղև կանգ կառնենք Առաքել Սյունեցու և նրա «Ով պարտիպան» տաղի վրա:

Կոստանդին Սսեցին (Սրիկ մականվանեալ)⁶ ԺԳ դարի Կիլիկյան նշանավոր տաղասացներից է: Ղ. Ալիշանը «Քաջ երգահան և տաղաչափ» է համարում նրան⁷: Հ. Տաշյանի հավաստմամբ՝ Սսեցու գրչին պատկանում է 18 տաղ⁸: Դրանցից մի քանիսի գրական բնագրերը հրատարակված են պարբերական մամուլում, անցած հարյուրամյակի երկրորդ կեսին⁹: Սսեցուն վերաբերող գրա-

⁶ «Սրիկ»-տուր ձայնի: Է մականունն այլևայլ երաժշտի» գրում են «Նոր բառգրքի» հեղինակները (հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 762): Չեռագրերում քննարկվող մականունը աղավաղման էլ է ենթարկվել: Աղճատման հետևանքով առաջ եկած ձևերից է՝ օրինակ, Սիրիկը (տես Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7730, էջ 55բ, ուր գրիչը միանգամից երկու սխալ թույլ տալով, «Ով վարմանայի» տաղի վերաբերությամբ տեղեկացնում է՝ «ի Սիրիկ»: Ի դեպ, նույն այս վերագրմանը հանդիպել է նաև Հ. Տաշյանը, որ հայտնում է, թե (տաղն) «այլուր Գրիգորիսի Աղթամարցու կրնձայուի (տես նրա՝ Ցուցակ Լայրեկն ձեռագրաց... էջ 1103): «Սիրիկ» մականվան մեկ այլ աղճատումն է՝ Սորեկ, որ հանդիպում է ճաշոցում (ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872, էջ 29—«տաղ ի Սորեկայ Կոստանդեայ»), որ և հիշատակում է Հր. Աճառյանն էլ (տես նրա՝ Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 675): Այս բոլորը բացառվում է հետևյալով ևս: Միջնադարում տարբեր գրիչներ հաճախ լիկ իրենց հիշողությանը վստահելով է, որ վերականգնել են ինչպես տվյալ ստեղծագործության հեղինակին, նույնպես և նրա անվան գրության ձևը: «Սրիկ» մականունը, որպես գրության ճիշտ ձև, հավաստված է մեր ժամանակակից մամուլում էլ (տես Ա. Մնացականյան, Դիտողություններ իմ տաղարաններում կատարված մի շարք աղավաղումների մասին, Հայկ. ՍՍՀ Ժողովրդական կից Պետական ձեռագրատուն (Մատենադարան), «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 174):

⁷ Ղ. Ալիշան, Միսուան և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 517:

⁸ Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1103:

⁹ Խոսքը «Սիրուն» և «Բազմավեպ» հանդեսների մասին է, որոնցում տպագրված են Սսեցու երեք տաղերի գրական բնագրերը:

—Տաղ Ներսեսի հայրապետի
ի Կոստանդին Սսեցու
Սրիկ կոչեցելով

¹ Մանավանդ երբ անանուն ստեղծագործություններից, առավել ստուգության սիրույն, տեսադաշտում առայժմ ընդգրկում ենք լույս մի-երկու երգ, որոնց մասին հաստատապես գիտենք, թե կենցաղավարել են նաև վերաեղանակավորված տարբերակներով:

² Ն. Թախիպյան, Հաղարծնի վանքը և Խաչատուր Տարրուեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու (արվեստագիտություն), № 2, Երևան, 1975:

³ Նույնի՝ Հովհաննես Երզնկացի Պուլը և հայ միջնադարյան երաժշտական մշակույթը (ծննդյան 750-ամյակի առթիվ), Հայկական հայագիտական հանդես, № 10, Պեյրուք, 1983:

⁴ Նույնի՝ Հովհաննես Երզնկացի Պուլը հայ միջնադարյան երաժշտության տեսաբան, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1983, № 2—3:

⁵ Նույնի՝ Մխիթար Այրիվանեցին և Ավագ Հինգշաբթի օրվա «սիրտ իմ սասանի» գանձ-երգը, «Հայկական արվեստ» (ժողովածու), № 2, Երևան, 1983:

կան-բանասիրական ու ձեռագրական տվյալները հավաքելու և ի մի բերելու ուղղությամբ ժամանակին օգտակար ջանքեր է թափել Կ. Կոստանյանը ևս, բայց ցավոք, գործն ավարտին չի հասցրել¹⁰:

Մեզ ծանոթ խաչավոր բազմաթիվ ձեռագրերում եկեղեցական վանական տոներին երգելի Սսեցու տաղերը, մեղեդիներն ու հոյհորականները հանդիպում են թե՛ առանց հեղինակի հիշատակության (հաճախ), թե՛ ընդհանուր կարգի հետևյալ ու նման նշումներով՝ «Կոստանդի», «ի Կոստանդեա», «ի Կոստանդեա Նուաստէ», «ի Կոստանդն ոգեալ» և այլն¹¹, և թե՛ ավելի որոշակի ցուցումներով, ինչպես. «Աղամայ լացն ի Սրիկ Կոստանդէ» («Աղամ նստել դուռն ի դրախտին») ¹², «Տաղ ի Սրիկ Կոստանդէ» («Աստուածածին կոյս երանեալ») ¹³, «Տաղ ի Սրիկ Կոստանդէ» («Աստուածածին մայր լուսոյ») ¹⁴, «Մեղեդի ի Սրիկ Կոստանդէ» («Ի Խանդավառական տօնիս») ¹⁵, «Տաղ բազմախորհուրդ ի Սրկայ» («Խաչն ի նախնումն երևեցաւ») ¹⁶, «Յորդորակ ի Սրկայ Կոստանդէ» («Կայր կոյսն ի յայրին») ¹⁷, «Տաղ Յարու-

թեան ի Սրիկ Կոստանդէ» («Կանանցն կանխեալ եկին ի գերեզման») ¹⁸, «Մեղեդի ի Սրիկ Կոստանդէ» («Կոյս անապական») ¹⁹, «Տաղ սրբոյն Սարգսի վարավարին, Սրկան» («Պարծանք հանդիսից խմբից») ²⁰, «Մեղեդի անոյշ ի Սրիկ Կոստանդէ ոգեալ» («Քաջամարտիկ մեծ վինտրին, Թեոդոսի յաղթող վկային») ²¹, «Մեղեդի ի Սրիկ Կոստանդէ» («Քրիստոս բանդ հար») ²² և այլն:

Վերոհիշյալ ստեղծագործությունները (ներառյալ Սսեցու անունով հրատարակվածները ու նաև Կ. Կոստանյանի հավաքած անուններից մի քանիսը), դեռևս 18-ի չեն հասնում, որով երբևիցե պետք է հայտնաբերվեն ու հաշվի առնվեն ժամանակին < Տաշյանին մատչելի եղած տվյալները ևս: Կարևոր է գիտակցել նաև, որ ձեռագրական բերված փաստերից մի-երկուսն էլ ստուգելի են տակավին: Իր տեղում խոսեցինք «Ով պարմանալի» տաղը Սսեցուն վերագրելու սխալի մասին: Այստեղ պետք է ցույց տանք < արության «Կանանցն կանխեալ» տաղի վերաբերյալ պահպանված տեղեկությունների հակասական բնույթը: Տեսանք, որ մեր Մատենադարանի ձեռագրերից № 425-ի տրվյալներով այն՝ Սրիկ Կոստանդի հեղինակությունն է: Նույն տաղը, սակայն, № 3503 ձեռագրում ունի լոկ՝ «ի Կոստանդեա» ցուցումը²³, (որը գրական բնագրում արդեն իսկ առկա «Կոստանդին» ծայրակապի կրկնությունն է), իսկ № 7735 ձեռագրում՝ «Ի Կոստանդին կաթողիկոսէ» խորագիրը²⁴: Վերջինս հավանաբար Կոստանդին Ա Բարձրբերդցին է (1221—1267), բայց տեղեկությունը բոլոր դեպքերում ճշտելի է: Ապագային թողնելով այս և նման մի քանի կետերի համակողմանի քննության հարցը, այժմ հաստատենք հետևյալը: Կասկածից դուրս է այն, որ վերն հիշատակված տաղերի զգալի մասն իրոք պատկանում է Կոստանդին Սսեցու գրչին: Արդ, հեղինակային պատկանելության առումով առավել վստահելի ստեղծագործություններից են «Կայր կոյսն ի յայ-

«Նշմամբ ձայնի բերկրանաց

Գովմեք ըզհայրըն շնորհաց»...

և այլն, 10 տուն («Միոն», Երուսաղեմ, 1867, էջ 170):

— Սրիկ Կոստանդին

Տաղ ի Ծնունդ Քրիստոսի

«Հըրճուիք այսօր մեք հոգեպես»...

և այլն, 8 տուն («Բազմավեպ», Վենետիկ, 1874, էջ 6):

— Սրիկ Կոստանդին

Տաղ ի Ծնունդ Քրիստոսի

(կենկապ)

«Կայր կոյսն ի յայրին

Կայր և գուարճանայր.

Կամեր ծնանել

Ձկեանս ազգի մարդկան»...

և այլն, 17 տուն, բոլորն էլ կենկապով, որ ցույց է տալիս Կոստանդին Սսեցու կամ Սրիկ Կոստանդի, որպես տաղաչափի, մեծահմուտ վարպետությունը (տես նույն տեղում, էջ 329):

¹⁰ Տես Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Կ. Կոստանյանի դիվան, Նյուք Յե 279, էջ 228—229, 230—231, 232—234:

¹¹ Այսպիսին է պարագան, օրինակ, նույնիսկ կիլիկյան հին և ընտիր Գանձարաններից մեկում (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3503):

¹² Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3595, էջ 66բ:

¹³ Նույն տեղում, ձեռ. № 423, էջ 220ա:

¹⁴ Նույն տեղում, ձեռ. № 425, էջ 301ա:

¹⁵ Նույն տեղում, ձեռ. № 9053, էջ 75բ:

¹⁶ Նույն տեղում, ձեռ. № 425, էջ 257բ, և 340ա:

¹⁷ Նույն տեղում, ձեռ. № 9053, էջ 10ա:

¹⁸ Նույն տեղում, ձեռ. № 425, էջ 241բ:

¹⁹ Նույն տեղում, էջ 30բ:

²⁰ Նույն տեղում, ձեռ. № 2541, էջ 214ա:

²¹ Նույն տեղում, ձեռ. № 425, էջ 165ա, ձեռ. № 474, էջ 115բ:

²² Նույն տեղում, ձեռ. № 425, էջ 85ա, ձեռ. № 474, էջ 29բ:

²³ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3503, էջ 173ա:

²⁴ Նույն տեղում, ձեռ. № 7735, էջ 296ա:

րին» տաղը կամ հորդորակը²⁵ և «խաչն ի նախնոմն երևեցաւ» տաղը: Այն՝ Սսեցու անունով պահպանված երկերից միակն է, որ, ինչպես ցույց տվեցին մեր որոնումները, եղանակով հանդերձ հարատևել է մինչև մեր օրերը և, հետևաբար, կարող է մեզ մի ճաշակ տալ հեղինակի երաժշտական ձիրքի մասին (Չայնագրություն 1)²⁶:


Գրական բնագիրը ութ վանկանի ոտանավոր է, քառավանկ երկու անդամներով և

քառատող տներով: Ծանր եղանակը սակայն, որ համապատասխանում է կիսատանը, ընդ որում է ոչ երկար տողերի միջի դադարները և: Այնպես որ, երաժշտական կառուցողական հիմնական միավորները՝ դասույթները, երևակում են ոտանավորի յուրաքանչյուր անդամը (օրինակում դա ցույց ենք չյուր անդամը (օրինակում միջոցով): Նրբագեղորեն տվել տողատման միջոցով: Նրբագեղորեն վարդապետուն մեղեդին ինքն է խոսում իր մասին: Չայնեղանակը վարտողի է՝ Գ.Կ., որ


Ծանր



Խաչն ի	Գախ	-	Նուրմ
Մը - խի	թա	-	րիշ
Մեք ի	յայն		փայտն
եւ խո	Գարն	-	եալ



ե - րե	-	ւե - ցաւ.
ե - դեւ	-	Սե - րայ.
եմք յու	-	սաց - եալ.
եր - կըր	-	պա - գեմք.



Ծաղ	-	կեալ	ի	դրախտն
Նա	-	խա	-	զակ
Յոր	-	Տէր	Յի	սուս
Աստ	-	ուա	-	կալ



աստ	ուա	-	ծա	-	տուրկ.
հօրն	Ա	-	դա	-	մայ:
բե	ւե	-	ռե	-	ցաւ.
սուրբ	Գը	-	շա	-	Գիս:

Չայնագրություն 1

²⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. №3503, էջ 325ա (գրական բնագիրն այստեղ, տպագրվածի համեմատությամբ, որոշ տարբերություններ ունի: Հմմտ.՝ «Կայր կոյսն ի յայրին

Կայր և երկնանայր» և այլն)

²⁶ Տես Չայնագրեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 169—170:

լրանում է առաջին «վերնախաղի» շուրջ գոյացող հանգանակով (փոխանակ «խոսրովայինի»): Այս եղանակը (որին ուշ միջնադարում ևս դիմել են առանձին բանաստեղծ-երգահաններ), երաժշտամտածողության միջնադարյան միաձայնային սկզբունքի ամենաբնութագրական կողմերից մեկի կրողն

է: Դա պարզ երևում է մեղեդիի վերոհիշյալ դասայինների վերջավորությունների հարաբերությունից էլ: Դրանք (հմտ. օրինակում երաժշտական տողերն ավարտող ձայնաստիճանները), կարճ տարածության վրա գոյացնում են «վերնախաղ» — «խոսքովային» — «պարոյկ» փոքրացրած դաշնակը, որը շեջտված կերպով հակացուցական է ետմիջնադարյան (մասնավորապես եվրոպական) երաժշտարվեստի գեղագիտության տեսակետով: Վերջապես, հոգուտ Կոստանդին Սսեցու, նշենք նաև այն, որ վերն հիշատակված խաղավոր ձեռագրերի լուսանցքներում նրա տաղերի մեղեդիները ոչ հազվադեպ մատնանշվում են որպես գրական այլ բնագրերի հետ ևս չուգորդվելու արժանի չափանմուշ եղանակներ:

Հովհաննես Երվակացին (Պուլը) ԺԳ դարի մեր ականավոր իմաստասերն ու գիտնական վարդապետը, եղել է նաև շնորհաշատ բանաստեղծ և բավականորեն գործունեություն ծավալած երևելի երաժիշտ: Որպես երաժիշտ-գիտնական, Երվակացին կարկառուն դեմք է եղել Մերձավոր Արևելքի չափացույցերով: Նա օժտված է եղել երգչային գեղեցիկ ձայնով ու կատարողական հազվագյուտ շնորհքով: Միջնադարյան հայ հասարակության բոլոր խավերն էլ ըստ արժանվույն գնահատել են դա, և նրան մկրտել՝ «քաղցրիկ», «քաղցրաձայն» և «Պիլպիլ (բլբլ) վարդապետ» մականուններով: Որպես բանաստեղծ-երաժիշտ (երգահան) Երվակացին իր նշանակալի գործունեությամբ մի կողմից՝ խորացրել է տաղային արվեստի աշխարհականացման ընթացքը, մյուս կողմից՝ կարևոր ավանդ մուծել հոգևոր երգարվեստի պարզացման մեջ: Երվակացու կանոնական շարականների խումբը, ըստ միջնադարյան հեղինակների հաղորդած տեղեկությունների, նոր շրջանի հայ բանասիրության մեջ կուտակված տվյալների, այլև մեր կատարած երաժշտագիտական հետազոտական աշխատանքների արդյունքների, ներկայացնում է հետևյալ պատկերը²⁷:

— Գրիգոր Լուսավորչին նվիրված կանոնի ԳԿ մեծ օրինությունը՝ «Այսօր պտարճացեալ ցընծայ եկեղեցի» և ԳԿ ձաջուն՝ «Լերինք ամենայն»:

— Ներսես Մեծի ողջ կանոնը («Որ պոյս անճառ», յոթ երգ):

— Նիկողայոս Հայրապետին նվիրված ԴԿ ստեղծ ծանր մանկունքը՝ «Հիացան անւարմիւնքն»:

— Յոթ խոտաճարակներին նվիրված ԲԶ

շարականը՝ «Յաւուր վերջին ժամանակի» (որ մեկ հասել է միջակ-չափավոր և ծանր երկու տարբերակներով):

Շարականագիր Երվակացին մեր առջև հառնում է որպես հայրենակներ բանաստեղծ-երաժիշտ, որի ներշնչման հիմնական աղբյուրը հանդիսանում է սեփական ժողովրդի պատմությունը, հոգևոր մշակույթն ու այն կերտած լուսավոր դեմքերը: Ընդհանուր առմամբ՝ Երվակացու շարականներին հատուկ են բանաստեղծական ապրումի անկեղծությունը, լեզվական բարձր մշակույթը, պատկերավոր ոճն ու առհասարակ «արվեստավոր» նկարագիրը, ինչպես դա նշել էր տակավին Գ. Ավետիսյանը՝ Լուսավորչին նվիրված շարականների մեկնության կապակցությամբ²⁸:

Ուշագրավ է Երվակացու տաղաչափական ու երաժշտական վարպետությունը: Նա քաջ ծանոթ է եղել հայ շարականերգության հին ու ավելի նոր մեծ ներկայացուցիչների ստեղծագործությանը, ներառյալ Ներսես Շնորհալու դարակազմիկ ժառանգությունը և առհասարակ հայ երգաստեղծության կիլիկյան դպրոցի մշակների գեղարվեստական արտադրանքը, և հմուտ կերպով կիրառել տաղաչափական ու մեղեդիական մի շարք ձևեր ու հնարանքներ:

Դա երևում է Երվակացուց իր եղանակով հանդերձ մեկ հասած տաղային միակ ստեղծագործությունից ևս, որ է՝ Ջրօրինեաց «Այսօր ձայնն հայրական» հորդորակը: Նախ նշենք, որ նրա հեղինակային պատկանելության խնդիրը կարիք ունի լուսաբանության, և կամ՝ արդեն արված դրական հաստատումների²⁹ լրացման ու ամրապնդման: Երվակացին հմայված է եղել ինչպես Ջրօրինեաց խորիմաստ արարողություններով, նույնպես և Գրիգոր Գ. Պառլավունու «Ով պարմանալի» գեղեցիկ տաղով, ու, ի վերջո, դրան ճարտարորեն ագուցանել է «Այսօր ձայնն հայրական» չքնաղ հորդորակը: Բարեբախտաբար, թե՛ մեկը և թե՛ մյուսը մասնագիտական բարձր մակարդակով ձայնագրել է նաև Կոմիտասը և անկրկնելի վարպետությամբ ներդաշնակել դրանք³⁰: Այստեղ մեկ հետաքրքրում է Երվակացու հորդորակն իր մայր եղանակով:

Ցավոք, մեր Մատենադարանի ձեռագրե-

²⁸ Տես նրա՝ Բացատրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 191:

²⁹ Ա. Սրապյան, Հովհաննես Երվակացի, Երևան, 1956, էջ 131:

³⁰ Տես Կոմիտաս վարդապետ, Տաղք և Ալելուք Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցու, Փարիզ, 1946, էջ 7—10:

²⁷ Հմտ. մեր աշխատությունը՝ Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 26 և 37:

րում հակասական են նրա հեղինակային պատկանելության մասին տվյալները: Այն բերվում է կամ առանց հեղինակի նշման³¹, և կամ որպես հեղինակ հիշատակվում են մեկ՝ ոմն Խաչատուր³² (Կեչառեցի՝ն), մեկ էլ՝ Ատոմ Երեց անունով մի բանաստեղծ-երաժիշտ³³: Հիմքեր ունենք ենթադրելու, որ նշված ձեռագրերի ստեղծման ժամանակ, տվյալ միջավայրում, գրիչների ձեռքի տակ եղած համապատասխան նյութերը պակասավոր են եղել: Բավական է ասել, որ այդ ձեռագրերից № 5521 գանձարանի գրիչը, որն, ի դեպ, ոչ այլ ոք է, քան Ժե դարի կեսերին ծաղկած նշանավոր երգիչ, խալա-գետ և պատմիչ, Աղթամարի վանքի միաբան Մինասենց Թովմա վարդապետը, չէր կարող պատահաբար պանջ առած լինել մեկ պե-ղեցնող ստեղծագործության խալագրությունը: Նա որոնել է, բայց չի գտել այն պարունակող հին, ընտիր գրչագրեր: Բայց որ այդպիսիք եղել են, այն էլ Երվակացու անվան հիշատակությամբ, ու մինչև մեր օրերն իսկ հասել են՝ ապացուցվում է մի քանի խո-շոր հայագետների ցուցումներով:

Այսպես, Ղ. Ալիշանը տակավին անցած հարյուրամյակի 60-ական թվականներին անդրադառնալով Երվակացու ժառանգությանը, մատնանշում էր նրա «սրբապան երգերը, ինչպես են Ջորոհնեաց տաղքն՝ Յամենայն ժամ օրինեմք պեղե, և Այսօր ձայնն հայրական»...³⁴: Հետո՝ Եղ. Դուրյանը, խոսելով Երվակացու «մանր երկասիրությունների» մասին, նույնպես հիշատակում էր՝ «Յամենայն ժամ օրինեմք և Այսօր ձայնն հայրական Ջորոհնեաց տաղերն»³⁵: Ավելի ուշ Գ. Ջարպիսանյանը ևս հաստատեց նույնը, նկատելով, որ հոգևոր տաղերում և շարականներում է իսկապես փայլում «Երվակացույն բանաստեղծական հանձարն ու եռանդը, մանաւանդ Ջորոհնեաց հանդիսին համար շինուած տաղերուն մէջ, որ են «Յամենայն

ժամ օրինեմք» և «Այսօր ձայնն հայրական»³⁶: Կասկածից վեր է, որ սույն և նման հավաստումներն արվել են ձեռագրական փաստերի հիման վրա, միայն՝ առանց համապատասխան հղումների: Այս առումով ավելի լրիվ են Կ. Կոստանյանի դիմանի «Տաղ Ջորոհնեաց» խորագրով նյութում Երվակացու անվան տակ բերված է ճիշտ մեկ հետաքրքրող հորդորակը («Այսօր ձայնն հայրական») ու հետևյալ ծանոթությունը. «Տաղս ընդօրինակվեցավ Ժե դարում գրված տաղարանից և բաղդատվեցավ մի այլ օրինակի հետ, որ թվական չունի»³⁷: Այստեղ էլ նշված է, թե հայկական ձեռագրական հատկապես ո՞ր հավաքածուի գրչագրից է քաղված տաղն ու նրա՝ մեկ հատուկ հետաքրքրող խորագիրը, բայց այլևս մի կողմ դնելով մանր նկատումները, և հիշյալ վաստակաշատ հայագետների հավաստումները որպես հիմք ընդունելով, բերենք, վերջապես, հորդորակիս կոմիտասյան ձայնագրությունը (Ձայնագրություն 2):

Երվակացու հորդորակը «Ով պարմանայի» տաղի հետ օրգանապես կապված է նախ իր նյութով ու տրամադրությամբ, արտահայտելով տվյալ տոնին հիմնալիորեն պատշաճող երկնային անանձնական մի ուրախություն: Իսկ գնայուն ընթացքով և ծորերգային բնույթով, այն՝ յուրատեսակ ու շատ անհրաժեշտ հակադրություն է ստեղծում տաղի ծանր ու երկարաձիգ-ոլորուն եղանակի համեմատությամբ: Հորդորակիս բանաստեղծական բնագիրը բաղկացած է կրկնակով տներից, որոնցում կրկնակի տողերից առաջինը՝ քառավանկ երեք անդամներով («Այ յորդորե, գետ յորդորե, գետ Յորդանան»), խախտում է յոթ կամ ութ վանկանի երկանդամ ոտանավորի չափը: Ըստ այդմ, երաժշտա-բանաստեղծական կառույցն էլ ունի

յալը. «Հաւանաբար,—գրում է նա,—իրենն է նաև «Ով պարմանայի» գեղեցիկ տաղը ի նոյն խորհուրդ», բայց սա՝ ճիշտ չէ, իհարկե):

³⁷ ՉԱԳԱԹ, Կ. Կոստանյանի դիմանի, նյութ № 279, էջ 41:

Այստեղ նշենք նաև, որ վերևի մեջբերումներում մի քանի անգամ հիշատակված «Յամենայն ժամ օրինեմք»-ը եղանակավոր մեծ քարոյ է, և ոչ թե տալ: Դա պարզ արտահայտված է անցած հարյուրամյակի վերջերին հրատարակված ձաջոցում, որտեղ քարոյս վերջնական է Երվակացու անունով և խալավորումով հանդերձ (անշուշտ՝ ըստ հին ձեռագիր աղբյուրների. տե՛ս ձաջոց Գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872, էջ 18): Քարոյս բերված է նաև Ձայնագրեալ Պատարագի հավելվածում (տե՛ս Ձայնագրեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 206):

³¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5934, էջ 3բ:

³² Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 8029, էջ 223բ:

³³ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5521, էջ 15բ (ուր «Այլ տաղ ի յԱտոմ երիցու» խորագրի տակ բերվում է «Այսաւր ձայնն հայրական»-ը, բայց՝ առանց խալաւնշանների):

³⁴ Ղ. Ալիշան, Յուզիկք Հայրենեաց հայոց, Բ. տպ., հատ. 2, Վենետիկ, 1921, էջ 428:

³⁵ Եղ. Դուրյան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էջ 65—66:

³⁶ Գ. Ջարպիսանյան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 767 (այստեղ հեղինակը ոգևորվելով Երվակացու մասին ավելացնում է նաև հետև-

Գնայուն

Այս - օր չայ - նրն հայ - րա - կան
 յերկ - նից իզ - եալ հա - ճո - յա - կան
 սի - րն - ցն - լոյ որդ - լոյ վր - կայ :
 Նի յոր - դո - րէ գնս յորդո - րէ .
 գնս Յոր - դա - նան : Յոր - դո - րա - կան
 չայ - նի եր - գնր մեծ
 կա - րա - պն - քն Յով - հան - նէս :

Ձայնագրություն 2

քայնակային (կուպետային) ձև, որում համաչափության գիտակցված, գեղարվեստական խախտում կա՝ կրկնակի առաջին տողի հետ պոգորդվող եղանակի ավելի մեծ ծավալի շնորհիվ:

Մեղեդին ընթանում է շատ ինքնատիպ մի ձայնեղանակում. ԱԿ՝ երկրորդ բնական

«վերնախաղով» /1/: Կշռույթը նույնպես ուշագրավ է: Ուտանավորի յուրաքանչյուր անդամի հետ պոգորդվում են մեղեդիական գեղակերպ պտույտներ, որոնցում շեշտված ու անշեշտ վանկերի փոխեփոխ երկարացումները մի հատուկ կշռական հաջորդություն են ստեղծում: Այս պայմաններում,

կան թե՛ սաղմոսների միջնադարյան երգեցողությանը վերաբերյալ կարևոր դիտումներ, և թե՛ օգտակար խրատներ: Վերջապես, «Աղամզթի» բազմագիտակ և ճարտար տաղաչափ⁴⁵ հեղինակից մեկ հասել են նաև՝ «Աղօթք ոտնալուսի ի վերայ ջրոյն և իւղոյն»⁴⁶, «Կարգ ձեռնադրութեան», «Տաղ ձեռնադրութեան»⁴⁷, այլև մի ամբողջ շարք ուրիշ երգված տաղեր, որոնք ևս որպես «քերթված» է հրատարակել Պոտուրյանը, և որոնցից մի քանիսն անցնելով հայոց Պատարագի մեջ, իրենց եղանակներով հանդերձ հարատևել են մինչև մեր ժամանակներն իսկ:

Դրանցից «Աստուածն ամենի»⁴⁸ և «Դասքն հրեական»⁴⁹ տաղերին անդրադարձել էինք ժամանակին: Դիտել էինք, որ երկու ստեղծագործությունները յուրովի լրացնում են իրար, մասնավորապես, նրանցում օգտագործված երգչային ձայնի հնչամասերի առումով. առաջինում՝ ցած ու միջին, երկրորդում՝ միջին ու բարձր: Այս հանգամանքն ինքնին հուշում էր, որ Սյունեցին կերտած կլիներ նաև ստեղծագործություններ, որոնցում համադրված լինեին երգչային երեք հնչամասերն էլ: Եվ իրոք, պարզվեց, որ այդպիսին է Սյունեցու «Ով պարտիպան» տաղը՝ վերոհիշյալ «Դասքն հրեական» հարության մեծ տաղի տասներեքերորդ տան հիման վրա ստեղծված երևելի երկը⁵⁰: Վերջինս նույնպես պահպանվել է հայոց Պատարագում: Ահա այն՝ ըստ Ն. Թաճյանի ձայնագրության (Ձայնագրություն 3ա, 3բ)⁵¹:

կան մատենագիտության» առաջին հատորում (Երևան, 1969) «Մատենագիտական բնագրեր» բաժնում հեղինակը Առ. Սյունեցու անունով առաջ է բերում վերոհիշյալ «Լասն շարական արարողաց» քերթվածը (էջ LXIX), որը Պոտուրյանի գրքում պետեղված է ի՞նչ համարի տակ (տես Մ. Պոտուրյան, Առաքել Սիւնեցի և իր քերթումները, նշվ. հրատ., էջ 321—323):

⁴⁵ Հմմտ. A. Tchobanian, La Roseate d'Arménie, Tome premier, Arakel de Sunik (pages choisies), Paris, 1918, p. 9—10.

⁴⁶ Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, նշվ. հրատ., էջ 998:

⁴⁷ Գիրք աստիճան տալոյ դայրաց և սարկազաց և քահանայից, Կ. Պոլիս 1752, մասն Բ, էջ 237:

⁴⁸ Տե՛ս մեր հոդվածը՝ Մայր Աթոռի տպարանը և հայ երաժշտարվեստը, «Էջմիածին», 1972, № 12, էջ 94—96:

⁴⁹ Տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասի 1893 թ. հոգևոր երգերի ժողովածուն, «Կոմիտասական», № 2, Երևան, 1981, էջ 91 և 105:

⁵⁰ Հմմտ.՝ Մ. Պոտուրյան, Առաքել Սիւնեցի և իր քերթումները, Վենետիկ, էջ 211 և 212:

Ելևէջի, կշռույթի և առհասարակ հյուսվածքի հարստության առումով այս նմուշն ինքն է խոսում իր մասին: Ստեղծվարտողի երվանագեղ ձայնեղանակը շփման որոշակի եզրեր ունի Ակնա ժողովրդա-գուսանական միջնադարյան ծանր երգերի հետ⁵²: Որով երաժշտականորեն աշխարհիկ արվեստի բավական բացահայտ կապերի մեջ գտնվող նմուշներից է դիտարկվող գործը (ինչպիսին է պարագան նաև, ասենք, «Տիրամայրն» տաղի դեպքում): Ըստ հորինվածքի, տաղը եռմասանի է, եզրափակիչ հավելյալ մեղեդիական կազմավորումով (տես օրինակում I, II, III և IV նշումները): Ըստ որում բոլոր մասերն էլ հագեցած են համաձայնությանի պարտություններով: Այդուամենայնիվ, միջին կամ երկրորդ մասը տարբերվում է և հատկապես՝ կշռույթով: Նրանում երաժշտության պարզացումը իրացվում է կարճագույն և երկարագույն տևողության հնչյունների առավել վառ հակադրության հիման վրա:

Համաձայնության ունի հնգյակ-ությակ կառուցվածք: Այնպես որ, եղանակի հիմնաձայնը («վերնախաղ» կիսվար), իր սեփական պաշտոնով հանդես է գալիս թե՛ առաջին և թե՛ երկրորդ ությակներում: Մեղեդիի ընդհանուր առմամբ վարընթաց ուղղվածությունը իրագործվում է ըստ երկրորդ «վերնախաղ» կիսվար—«պարոյկ»—առաջին «վերնախաղ» կիսվար նախագծի, որ վարտություն է ենթադրում: Վերջինս կատարվում է, նայած տեղին, երկրորդ «խոսքովային», երկրորդ «էկորձ» ու երկրորդ «փուլ» ձայնաստիճանների բնական և կամ կիսվարով ձևափոխված տարբերակների նպատակամետ կիրառության միջոցով:

Դիտարկվող կոթողում նաև պզակորեն հաճախեցված է ելևէջի ամբարձումների և անկումների բնական հերթափոխությունը: Դրանց տրված է կտրուկ և շեշտակի բնույթ: Երկրորդ «վերնախաղ» կիսվարից «պարոյկի» միջոցով դեպի առաջին «վերնախաղ» կիսվար իջնող մեղեդիական տարրողական շարժումը, որն այլ դեպքերում ծածկվում է երաժշտական ամբողջական կազմավորումներ, այստեղ կրկնված է մի քանի անգամ

⁵¹ Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 161—162:

⁵² Հմմտ.՝ Շար Ակնա ժողովրդական երգերի, ձայնագրեց Կոմիտաս վ. Գևորգյան, Էջմիածին, 1895 (մասնավորապես՝ «Պեզրկյան իջեր է խանը» երգը): Տես նաև՝ «Գուսանական երաժշտություն», ՀՍՀ, հ. 3, Ե., 1977, էջ 254) որ մեկն է հայկական միջնադարյան երաժշտության վերաբերող 30-ից ավելի մեր այն հոդվածներից, որոնք ՀՍՀ-ի հատորներում հրատարակված են առանց ստորագրության:

(հիմն. օրինակում 1 և 2, 4, 5, 6 և 7): Եվ վերջապես, ութնյակային համաձայնության այստեղ որպես կանոն, պարտություն կիրառումով է բացահայտվում, ասացինք: Բայց

հանդիպում են և առանձին մեղեդիական պտույտներ (ինչպես օրինակ՝ տաղիա երկ-րորդ մասի սկզբնական վերջնաժամ պտույտը, օրինակում 3), որոնք շոշափելի կերպով

Մանր
1. Ով պար -
սիւ պան,
2. ա - աւ ուր
3. աւ
4. րան
5. զ3ի սուս
6. մի - ա
7. ծին

5.
որկար - ծեմ

III 6

դու

ևս

ևր

IV


ման

Զայնագրություն 3բ

Նախապատրաստում են անցումը դեպի այնպիսի ութնյակային համաձայնություն, որը կարող է երևակվել և ուղղակի՝ առանց վարտություն միջնորդության: Երաժշտաոճական այս վերջին գծերը պարզ ցույց են տալիս, որ տաղս վերաբերում է վարգացած ավատատիրության շրջանի վերջին և ուշ միջնադարի սկզբներին:

Այդ հանգամանքը, սակայն, չի փոխում ստեղծագործության որակային ընդհանուր հատկանիշները: Ամբողջապես առած՝ այն

իր վիպա-քնարական տարերքով ու դրա հետ պոզորդված՝ վարգացման մի նոր մակարդակի վրա վերահարուցվող հմուտ վարպետությամբ, ճկուն ու պիրկ ելևէջով և բարդ գծագրերի ապատ կշռությամբ, պատշաճապես շրջանակում է Կենտրոնական Հայաստանի եռշնորհալիական երաժշտա-գեղարվեստական արտադրանքը ներկայացնող նմուշների շարքը (մինչև ԺԵ դարը): Նրանում բարախում է տակավին՝ հայ երգաստեղծության վարգացած ավատատիրության շրջանի վարկերակը:



ՅՈՒ. ԹԱՄԱՆՅԱՆ

(ճարտարապետ)

ՂՐԻՄԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՐՏԱՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական ճակատագիրը, դեռևս միջին դարերում, հայ ժողովրդի մի զգալի մասին ստիպեց թողնել իր հայրենի հողը և ապաստան գտնել հարևան երկրներում։ Ուր որ հաստատվել են հայերը, նրանց գործունեությունը ընթացել է հասարակական-տնտեսական, կառուցողական, մշակութային, դպրության, ճարտարապետական բազմաթիվ հուշարձանների ստեղծման ուղղությամբ։

Միջին դարերում խոշոր գաղթօջախներ ստեղծվեցին Լեհաստանում, Մոլդավիայում, Բուկովինայում և ուրիշ շատ տեղերում։ Ղրիմում ստեղծվեց առավել հզոր գաղութ։ Ինչպես ցույց են տալիս մի շարք հետապոստություններ, այդ գաղութը առաջացել էր դեռ XI դարում, երբ սելջուկ ասպատակների հարվածների ներքո երկիրը սկսեց ամայանալ, որի հետևանքով արտագաղթը ուժեղացավ, իսկ թաթար-մոնղոլական բռնապետության ահավոր տարիներին ավելի վանգվածային բնույթ ստացավ։

Երկրի տնտեսության քայքայման հետ ուժեղացավ հայերի հոսանքը դեպի հեռավոր երկրներ։ Ղրիմահայ գաղութի հիմնական հանգրվանը հանդիսացավ Կաֆա-Թեոդոսիա քաղաքը։ Վերջինս այդ ժամանակ սկսեց ձեռք բերել միջազգային առևտրի մեջ իր ուրույն տեղը և արագ վարգանալ։ Ղրիմի հայերի պատմությունը լավ հասկանալու համար նոր աղբյուր են հանդիսանում ջենովացիներ

րի ժամանակ կապված նոտարական ակտերը, որոնց շնորհիվ հնարավոր է լինում շատ և շատ հարցեր ճիշտ մեկնաբանել։ Դրանք հանդիսանում են հետապոստման համար մի նոր օղակ։ Այդ հարցը բարձրացրել է գիտաշխատող Է. Դանիլովան (Սիմֆերոպոլ), 1982 թվականի հոկտեմբերին Երևանում կայացած Հայաստանի մշակութի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական հինգերորդ գիտական կոնֆերանսում իր կարդացած զեկուցման մեջ։


Սկսելով հայերը բնակվել են քաղաքի ներսի թաղամասերում, բայց հետագայում (XIII դարի վերջում), քաղաքի բնակչության աճին կուզընթաց, բնակություն են հաստատել նաև քաղաքային պարիսպներից դուրս։ Այդ ակտերում տեղեկություններ կան քաղաքի զբլիսավոր դարպասի մոտ և այլ տեղերում տներ ձեռք բերելու մասին։

Այս հարցը ծավալուն ուսումնասիրություն է պահանջում, ուստի մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ մանրամասնորեն անդրադառնալ դրան։

Հայերի վթաղեցրած թաղամասը Թեոդոսիայում, կամ ավելի ճիշտ Կաֆայում, կոչվել է Ս. Ստեփանոս։ Սովորաբար այն ժամանակ թաղամասերը կոչվում էին եկեղեցական ծխերի անուններով։ «Այդ թաղամասը ծովափին էր, բլրի ստորոտի մոտ, որի վրա գրունդվում էր հասարակական սպանդանոցը։ Նրա հետ էին կապված մսի խանութներ ու-


նեցող կամ կաշի մատակարարող շատ հայերի առևտրական շահերը»¹:

Կաֆայում հայերի ձեռքով կառուցվել են մեծ թվով պաշտամունքային շենքեր, բնակելի տներ, ինժեներական կառուցվածքներ: Անհրաժեշտ է նշել հատկապես ջրմուղի կառուցումը, որը հանդիսանում է միջնադարի համար լուրջ ճարտարագիտական կառուցվածք²: Կառուցել են պաշտպանական բնույթի շինություններ, հատկապես Թեոդոսիայում հայկական պարիսպը, նաև կամուրջներ և այլ շինություններ: Ի. Ի. Բաբկովի հոգովաձև ներկայացնում է Ղրիմի հայերի ջրաշինարարական գործունեությունը, որը ինքնին շատ արժեքավոր նյութ է այդ հարցի հետազոտման և պարզաբանման համար:



հայրենիքից հեռու, ինչ որ անխափելի կապերով կապված են եղել իրենց բուն արմատների հետ: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Ճիշտ է, մեծ է տեղական պայմանների, հարևան ազգությունների մշակույթի փոխազդեցությունը, սակայն հենց այդ փոխազդեցության հետևանքով է, որ ստեղծվել է տեղի հայկական ճարտարապետական դպրոցը:

Ղրիմում պահպանված հայկական ճարտար-



ԱՆՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ
ՆԱՏԱԿԱԳԻԾԸ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՏԵՎԱՆՔՈՎ
ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱՏԱԿԱԳԻԾԸ

Նկ 1.

Ղրիմի հուղկական հուշարձանների թե՛ ուսումնասիրությունը և թե՛ պահպանումը առավել մեծ կարևորություն է ներկայացնում մեր օրերում, երբ քաղաքների ու բնակավայրերի շինարարական վարձացման հետևանքով կարող են վնասվել պատմական հուշարձանները:

Հայկական գաղթօջախներում ստեղծված ճարտարապետության ուսումնասիրությունը մեզ բերում է այն հանդման, որ մեր ճարտարապետ նախնիները, ստեղծագործելով

րապետական հուշարձաններից են՝ Թեոդոսիա քաղաքի Հովհաննես Մկրտչի, Հովհաննես Աստվածաբանի, ս. Գրիգոր, ս. Գևորգ, ս. Ստեփանոս, Հրեշտակապետաց և ս. Սարգիս եկեղեցիները, ինչպես նաև Սուրբ-Խաչ վանքը Հին Ղրիմ քաղաքից ոչ հեռու, Ամենափրկիչ եկեղեցին Բոգատոյե գյուղի մոտակայքում, մի եկեղեցի Եվպատորիա քաղաքում և ուրիշ հուշարձաններ:

Մեր սույն հոդվածով կփորձենք ներկայացնել Թեոդոսիայի ս. Սարգիս կամ, ինչպես այլ անվամբ հայտնի է, Չորավար³ հուշարձանը:

Առաջին հայացքից պարզ է դառնում, որ այս հուշարձանը ենթարկվել է մի շարք վերակառուցումների և փոփոխությունների (նկ. 1), որոնց հետևանքով ստեղծվել են տարբեր չափերի իրար կից կառուցվածքներ, ո-

¹ Է. Վ. Դանիլովա, Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական հինգերորդ գիտական կոնֆերանս, Վեկուցումների թեզեր, Երևան, 1982, էջ 64:

² И. И. Бобков, Очерки по исторической и культурной географии Крыма. I водоснабжение армянского монастыря XV в. в Двукорной бухте у Феодосии. «Известия гос. географического общества», № 71, вып. 7, 1939 г.

³ О. Х. Халпахчьян, Армяно-Русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957, стр. 21.

րոնք հասկանալի են դառնում միմիայն ուսումնասիրության շնորհիվ:


Հուշարձանի հատակագծի (մեզ հասած) հետապտտումը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ նախնական կառուցվածքը եղել է միանավ եկեղեցին, ուր արևելյան աբսիդը, ինչպես դա նկատելի է Ղրիմի հայկական հուշարձաններից շատ-շատերում, իր ծավալով հիմնական ուղղանկյունուց դուրս է դրվել և ունեցել է բոլորակ ձև: Այդ հիմնական ծավալը ենթարկվելով բազմաթիվ վերակառուցումների, այնուամենայնիվ պահպանվել է մինչև մեր օրերը և փաստորեն կազմել այսօրվա հուշարձանի կորիզը:

Այդ ծավալից հյուսիս պահպանվել է մի փոքր շինություն, որը կառուցվել է ավելի ուշ, և նույնիսկ պատերը զննելիս կարելի է նկատել պատերի միացման տեղում վերակառուցման հետքեր (նկ. № 2):

սյունավարդ շքամուտք: Այդ շքամուտքը հիմա դիտվում է իբրև զանգակատուն: Որոշ հետապտտողներ այդ կառուցվածքը համարում են եռահարկ զանգակատուն⁴: Սակայն դա քիչ հավանական է, քանի որ նրա մասամբ պահպանված այժմյան վիճակը հնարավորություն չի տալիս ենթադրելու նրա եռահարկ լինելը:

Առաջին հարցը, որ պետք է հետաքրքրի հետապտտողին, վեր բարձրացող աստիճանների տեղադրման հարցն է. աստիճանները ենթադրաբար պետք է տեղադրված լինեին քանդված սրահի ներսում, սակայն այս բանը հաստատելու համար կախաններ չեն պահպանվել:

Ս. Սարգիս եկեղեցու պահպանված շքամուտքը իր ձևերով մի կողմից մոտենում է Արուճի տաճարի արևմտյան շքամուտքին, մյուս կողմից Ղրիմի ճարտարապետական



Նկ. 2. Ղրիմի Ս. Սարգիս եկեղեցու ընդհանուր տեսքը արևմուտքից

Նշված վերակառուցումներից ամենացայտունը պետք է համարել գավթի կառուցումը: Գավթի ժամանաբար կառուցվել է XVIII դարի կեսերին, երբ կատարվել են մեծ վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ: Գավթին կից գոյություն է ունեցել սրահը, որը արևմտյան մասում ունեցել է


դպրոցում տարածված Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարավային շքամուտքին: Դժբախտաբար վերջին շքամուտքից միայն մնացորդներն են պահպանվել: Կարելի է նշել նաև Բոգատոյե գյուղի Ամենափրկիչ եկեղե-

⁴ Օ. Խ. Խալախչյան, там же, стр. 21.

ցու հարավային և հյուսիսային շքամուտքերը:

Ս. Սարգիս եկեղեցու շքամուտքը եղել է ավելի շքեղ կառուցված և ունեցել է շատ

մենտալ ձևերի կրկնություններ, նրա կառուցման տարեթիվը տանում են ավելի խոր անցյալ, քան սովորաբար դա ընդունված է գիտական գրականության մեջ:



Նկ. 3. Ղրիմի Ս. Սարգիս եկեղեցու շքամուտքի քանդակները

հետաքրքիր քանդակներ (նկ. 3): Հենց այդ քանդակների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գտնելու այն կուգահեռները, որոնք կապում են այդ հուշարձանը բուն Հայաստանի հուշարձանների հետ: Այդ քանդակների վարդյակների և այլ մանրամասնությունների ուսումնասիրությունը, որոնցում գտնում ենք վաղ քրիստոնեական շրջանում օգտագործված օրնա-


իրավացի է Հ. Խալիպաչյանը, որը կուգահեռներ է գտնում այդ կառուցվածքի և Հայաստանի Եղվարդի Աստվածածին եկեղեցու քանդակապարզման և օրնամենտների մեջ⁵:

Սակայն բուն հուշարձանի կառուցման ժամանակը որոշելու հարցում չի կարելի համաձայնվել ո՛չ Ա. Լ. Յակոբսոնի և ո՛չ էլ Հ.

⁵ Օ. Մ. Խալիպաչյան, там же, стр. 21.

Խալփախյանի հետ: Յակոբսոնը այդ կառուցվածքը համարում է XV դարի երկրորդ կեսի կառուցվածք⁶, իսկ Հ. Խալփախյանը՝ XIII դարի վերջի գործ: Մեր կարծիքով, դա ավելի վաղ շրջանի կառուցվածք է, բայց այս դրույթը հաստատելու համար առայժմ կռվանները բավարար չեն: Վ. Միքայելյանը, որը մի ամբողջ մենագրություն է նվիրել Ղրիմի հայկական գաղութի պատմությանը, գրում է. «Ղրիմի միջնադարյան ճարտարապետու-

Այն փաստը, որ հայկական օջախներ Ղրիմում ստեղծվել են շատ վաղուց և որ կապեր են հաստատվել դեռևս XI դարում և ավելի վաղ, հատկապես Բյուզանդիայի հայ բնակչությանը բռնի տեղափոխելու քաղաքականության հետևանքով, հնարավորություն է տալիս ս. Սարգիս եկեղեցու կառուցումը կապելու առաջին բնակչություն հաստատողների շինարարական գործունեության հետ: Հուրճանի բազմաթիվ վերակառուցումները



Նկ. 4. Ղրիմի Ս. Սարգիս եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից

թյանը անդրադառնալիս չպետք է անտեսել սբ. Սարգիս եկեղեցին, որը հայկական ամենահին շինությունն է թերակղզու վրա»⁷: Նա այն համարում է XI դարի կառուցվածք, Ղրիմում ջենովացիների հաստատվելուց (XIII դար) առաջ (նկ. № 4):

⁶ А. Л. Якобсон, Армянская средневековая архитектура в Крыму, Византийский временник, 1956, т. 8, стр. 170.


⁷ Վ. Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմությունը, Երևան, 1964, էջ 324:

խանգարում են ճիշտ որոշելու, թե նրա ո՞ր մասն է որից հետո ավելացված, սակայն մի բան է մնում հաստատ, որ միանավ եկեղեցին, դուրս դրված արևելյան ավազ խորանով, նախնական կառուցվածքն է:

Այն միտքը, որ հուշարձանը բազմիցս ենթարկվել է վերակառուցումների, հաստատվում է նաև նրա պատերի վրա գտնվող որմնանկարների ուսումնասիրությամբ: Հետազոտողները պնդում են որմնանկարչական երեք շերտի գոյության մասին: Է. Կորիսմալյանը, որը մի ամբողջ մենագրություն է նվիրել Ղրի-

մի մանրանկարչության ուսումնասիրությանը⁸, ցույց է տալիս ամենահին որմնանկարչական շերտի գտնված տեղը. դա գլխավոր խորանի գմբեթարդն է և թաղը:

շատ արժեքավոր մի արձանագրություն, որից մենք տեղեկանում ենք, որ այն պատրաստել է 1371 թվականին վարպետ Շնոփորշախը:



Նկ. 5. Ղրիմի Ս. Սարգիս եկեղեցու բակում գտնվող նշանավոր մանրանկարիչ Նիկողայոս Ծաղկարարի շիրմաքարը

Դժբախտաբար որմնանկարների ներկա վիճակը հնարավորություն չի տալիս ավելի մանրամասն խոսելու նրանց մասին, սակայն կարելի է համաձայնվել հետապոստոլների այն կարծիքի հետ, որ իրոք տեղի է ունեցել երեք հիմնական վերանորոգում, որոնց ընթացքում նաև վերանորոգվել են որմնանկարները: Վերանորոգման աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել լրացուցիչ, այդ կարծիքը հաստատող տվյալներ:

Ղրիմի հայ ճարտարապետական դպրոցում կարևոր դեր են խաղացել խաչքարերը, որոնք այստեղ հիմնականում ագուցված են պատի մեջ: Պահպանված արձանագրություններից կարելի է շատ հարուստ տեղեկություններ ստանալ հուշարձանի պատմական կյանքի մասին:

Սուրբ Սարգիս եկեղեցու փայտյա դուռը, որն այժմ պահպանվում է Էրմիտաժում, ունի

Երբ 1968 թվականին պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության կողմից կապմակերպված Ղրիմի հայկական հուշարձանների վերանորոգման աշակցող հանձնաժողովը (Ասատուր Մնացականյան, Է. Կորիմապյան, Գ. Գրիգորյան և Յու. Թամանյան) ծանոթանում էր ս. Սարգիս եկեղեցուն, պատահաբար նրա անդամներից Ասատուր Մնացականյանի ուշադրությունը գրավեց մի մեծ քար, որը դրված էր բակի աստիճանների մեջ (նկ 5): Նրան հաջողվեց կարդալ արձանագրությունը: Այդ քարը նշանավոր հայ մանրանկարիչ Նիկողայոս Ծաղկարարի շիրմաքարն էր:

Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հատուկ արշավախմբի ջանքերով (հնագետ Գ. Գրիգորյան) հայտնաբերվել են բազմաթիվ արժեքավոր արձանագրություններ, որոնցից մեկն է ս. Սարգիս եկեղեցու ներսում հարավային պատի վրա գտնվող արձանագրությունը: Այդ արձանագրությունից


⁸ Э. М. Корхмазян, Армянская миниатюра Крыма, Ереван, 1979, стр. 98.

տեղեկանում ենք, որ հայ նշանավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին 1888 թվականին հուշարձանի վերանորոգման համար նվիրաբերել է մի քանի արժեքավոր կտավներ⁹:

⁹ Գ. Григорян, Новые данные об армянских эпиграфических надписях Крыма и Северного Кавказа, Историко-филологич. журнал, 1970, № 3, стр. 300.

Ինչ հետաքրքրական կուզադիպում, երկու նշանավոր հայ նկարիչների աճյունները հանգչում են նույն պատմական կառույցի մոտ: Այս փաստը շատ խորհրդանշական է:

Թեոդոսիա քաղաքը, որը հանդիսանում է Ղրիմի հայկական գաղթօջախի կենտրոններից մեկը, իր ճարտարապետական և պատմական հուշարձանների միջոցով հնարավորություն է տալիս մեզ ծանոթանալու այդ շրջանի հայերի ստեղծած մշակույթի և արվեստի բազմաբովանդակ ժառանգությանը:





ԲԱՐԵԼԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՀՈՎՀԱՆ
ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՄԻ ՃԱՌԸ՝ ՆՎԻՐՎԱԾ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻՆ

Համաքրիստոնեական գրականության փառքերից մեկի՝ Հովհան Ոսկեբերանի մատենագրական ժառանգությունը պարունակող հունարեն ձեռագրերի քանակն այսօր հասնում է շուրջ երկու հազարի: Պարագա, որ վկայությունն է բովանդակ միջնադարում հեղինակի վայելած մեծ ժողովրդականության: Անվերապահ գնահատանքն ու նրա մատենագրական վաստակի բացարձակացումը, սակայն, տեղիք են տվել շփոթ վերագրումների: Այս պատճառով նրա անվամբ հայտնի երկերից շատերը, իրականում այլ հեղինակների պատկանելով, պետեղվել են Migne-ի հայրաբանական մատենաշարի «Dubia» և «Spuria» («անվավեր» և «կեղծ») բաժիններում:

Բայց առանձին դժվարություն է հարուցում մասնավորապես այն պարագան, երբ տիեզերական Եկեղեցու այս մեծահռչակ ներկայացուցչի երկը մեկ ավանդված է այլ հեղինակի անվան տակ: Այս տեսակետից նկատառելի է հայ թարգմանական գրականության մեջ ինքնությունն անհայտ հեղինակի՝ Բաբելաս Ալեքսանդրացու անվամբ ավանդված ճառ-ներբողը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին: «Յաղագս սրբոյ Կարապետին և Մկրտչին Յովհաննու, ասացեալ երանելոյն Բաբելայ եպիսկոպոսի Աղեքսանդրոս» խորագիրը կրող խնդրո առարկա ճառը Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 232

(էջ 90ա) և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանի № 154 Գ (էջ 1790) ձեռագրերում¹ նուև Բարսեղ Կեսարացու անվամբ է ավանդված («Ի յիշատակ Յովաննու Մկրտչի, ասացեալ Բարսղի հայրապետի», «Սրբոյն Բարսղի արքեպիսկոպոսի Կեսարու Կապադովկացոյ ասացեալ ի սուրբ Մկրտիչն և ի Կարապետն Յովհաննես»), որ Բարսեղ հեղինակային անունը, < Անապայանի դիտուով, «հավանաբար Բաբելաս-Բաբեղաս անվանաձևի աղավաղումից է առաջացել»²:

Հովհաննես Մկրտչի գլխատմանը նվիրված ճառ-ներբողների հետ միասին Beck-ը այս երկը տարակույսով վերագրում է Անատոլիոս Թեսալոնիկեցուն (Թ—Ժ դար), սակայն միաժամանակ մատնանշում դրանց՝ Ոսկեբերանի անվամբ ավանդված լինելը³: Սակայն դեռևս Montfaucon-ը, անշուշտ ոչ առանց

¹ Տե՛ս Հ. Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 502—503: Ն. եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 455: Հ. Ս. Անապայան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 1040—1041:

² Հ. Ս. Անապայան, նշվ. աշխ., էջ 1040:

³ Տե՛ս H. G. Beck, Kirch und theologischen literatur im Byzantinischen Reich, München, 1959, s. 552.

հիմքի, ճանս պետեղել էր Հովհան Ոսկեբերանի «անհարապատ երկերի շարքում» (հտ. Ը, էջ 39)⁴: Montfaucon-ի վերագրումը հավաստվում ու էլ ավելի հիմնավոր է դառնում հունարեն ձեռագրերի նկարագրությունը ներկայացնող ձեռագրագրության նախնական հետազոտությունների ու մասնագիտական հետազոտությունների տվյալներով: Որ «Ὁσπερ τις ἀνὴρ φιλέσθης ἐν τινὶ τόπῳ ἀσώδης: ὑπὸ δὲνδρα σκιαζόμενος... πένθος καταλείψαντες ἐπὶ τῷ τῆς μυσταγωγίας φεγγῶς ἀγλαΐσμενοι...» սկիզբ ու վերջ ունեցող սույն ձառն⁵ հունական միջավայրում ավանդվել ու հայտնի է եղել իրոք Հովհան Ոսկեբերանի անվամբ, հաստատվում է ճանի, հավանաբար հնագույն (Ը—Թ դար) ընդօրինակությունը հանդիսացող God. Paris, gr. 443, Fol. 2v մագաղաթյա կրկնագիր հատվածական Տոնացույցի (Jahressammlung) նախնական, անառարկելի վկայությամբ⁶: Ճանի հետագա ընդօրինակություններից են God. 57 Johannes Klosters; God. Bodl. Baroce. 171, m.s. 10; God. Vatic. Ottob. gr. 1, m.s. 11; God Paris, Suppl. gr. 211, m.s. 10; God. Vatic. gr. 455, m.s. 10⁷, ինչպես

նաև՝ God. Mutinens. gr. 190 (III F 12) Fol. Br-v որ սակայն բացակայում է սկսվածքը: Ոսկեբերանի անունով այն առկա է նաև իտալո-հունական տոնացույցային ժողովածուների ներկայացուցիչը հանդիսացող God. Vatic. gr. 1633, m.s. 10—11 ձեռագրում⁸:

Հրապարակվող ճանի հեղինակային պատկանելության ճշգրտման իրենց նպատակարար են բերել նաև Ոսկեբերանի երկերի հայերեն թարգմանությունները: Ճառում կիրառվող «անտառախիտ» և «գլխագարություն» («գլխագար») բառերը Ոսկեբերանի ոճին ընտանի ձևերից են, որոնք օգտագործվում են հեղինակի՝ Պողոս առաքյալի թղթոց («Արտեանունս թոյրաթոխս, ներքոյ և արտաքոյ անտառախիտ, մացառաձեւ պբօքն պասկեալ...», «գլխագար թմրութիւն կամ արբեցութիւն...», «Ունաք իբր գլխագարութիւն ասէին վնմանէ...»⁹) և Հովհաննու Ավետարանի մեկնության մեջ («Յանտառախիտ մարից դաշտացն», «...մի ոք ի ձեւն անտառախիտ փշոց...», «ոտնացաւութիւն և գլխագարութիւն...», «Այդ իսկ առաւել ի գլխագարութիւն բերէ զձեպ»¹⁰):

Արդ, ինչի՞ հետևանք է Բաբելաս—Ոսկեբերան շփոթը: Նախանիկիական Եկեղեցու ստատությունից հայտնի է, որ Բաբելասը Անտիոքի փառաբանված հովվապետ ս. Իգնատիոս Աստվածապգացի աթոռակալ-հետևորդներից էր, և 237 թվականից այդ քաղաքի հոգևոր հովիվը: Եկեղեցու այս փութաջան սպասավորը աչքի է ընկնում հեթանոս հելլենների և հուլիանյան աղանդի դեմ մղած իր անտեղիտայի պայքարով: Բաբելաս Անտիոքացին չարաչար նահատակվեց Դեկիոս կայսեր օրոք, 250 թ.¹¹: Հայտնի են Ոսկեբերանի

⁴ Գ. Չարքանյան, Մատենադարան հայկական բազմամասնական ամսագրի, Վենետիկ, 1889, էջ 325: Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ., էջ 1040:

⁵ Shu Migne, PG, t. 59, col. 521—526: Bibliotheca Hagiographica Graeca (= BHG), Bruxellis, 1909, p. 121 (867): Հայտնի է ճանի ասորերեն և արաբերեն թարգմանությունը եւ. տե՛ս M. Geard, Clavis Patrum Graecorum, V. II. Ab Athanasio ad Chrysostomum, Brepols-Turnhout, 1974, p. 565 (4578).

⁶ Shu A. Ehrhard, Überlieferung und Bestand der Hagiographischen und Homiletischen Literatur der Griechischen Kirche, Bd. 1. Leipzig, 1965, s. 92—94.

⁷ Հրապարակվող ճանի նման օգոստոս 29-ի տակ են պետեղված նաև Հովհան Ոսկեբերանի կամ նրա անվամբ անհարապատ, դարձյալ Հովհաննու Սկրոչին նվիրված, քննվող երկից տարբեր, ճառերն ու ներբողները, որոնք պարունակվում են հետևյալ ձեռագրերում God. Paris, gr. 1470, nr. 67 (որ, բոլոր Ehrhard-ի, բերված է Ոսկեբերանի Մատթեոսի մեկնությունից. նշվ. աշխ., S. 265) God. Vatic. gr. 1673, Fol. 178—180v; God. Paris, gr. 1453, m.s. 11; God. Paris, gr. 1177, m.s. 11, God. Marcián, gr. 360, m.s. 11; God. Vatic. gr. 1671, m.s. 10. տե՛ս Ehrhard, նշվ. աշխ., ss. 265, 369, 434, 675, նաև՝ Geard, նշվ. աշխ., pp. 562 (4570), 618 (4859), 619 (4862, 4867), 626 (4913, 4914), 629 (4929, 4935), 643 (5023): C. Datema, An unedited homily of Ps. Chrysostom on the birth of John the Baptist (BHG 843 K), „Byzantion“, 1982, t. 52, p. 72—82.

⁸ Ehrhard, նշվ. աշխ., Bd. I, ss. 145, 203—204, 279, 297, 678, 681, 699, Bd. II, s. 117:

⁹ Ehrhard, նշվ. աշխ., Bd. II, s. 141.

¹⁰ Shu «Յովհաննու Ոսկեբերանի... մեկնություն թղթոցն Պաղոսի, հ. Ա, Վենետիկ, 1862, էջ 660: ՆԲՀ, Ա, էջ 559:

¹¹ ՆԲՀ, Ա, էջ 243, 559: ἀσώδης («անտառախիտ»)՝ը կիրառվում է նաև Ոսկեբերանի λογος εις τὴν τριγωνα ἡτοι εις τὴν ἐκκλησίαν («ի տատրակն») երկում Migne, PG, t. 55, col. 559), սակայն բացակայում նրա հայերեն թարգմանության մեջ. Հ. Ա. Վարդանեան, Յովհաննու Ոսկեբերանի ճառ «ի տատրակն», «Հանդես ամսօրեայ», 1922, էջ 338: Ըստ երևութիւն թարգմանական գրականության արդեցության տակ բառը կիրառվել է նաև Մովսես Կողարեկատվացու Աղվանից պատմության մեջ. Մովսէս Կողարեկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, աշխատ. Վ. Առաքելյան, խմբ. Ս. Ավագյան, Երևան, 1983, էջ 21:

¹² «Եւսեբիոս Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 490: Dictionnaire Hagiographique, t. 1, տե՛ս Encyclopédie Théologique, pub. M. Migne, t. 40, Paris, 1850, p. 341.

Բաբելաս հայրապետին նվիրված երկու ճաները՝ «In S. Babylam» և «Liber in S. Babylam et contra Gentes» («Յաղագս սրբոյն Բաբելայ վկային» և «Գիրք յերանէին Բաբելաս և ընդդէմ Յովհաննոսի և Հելլենացոցն»¹²): Բացառված չէ, որ ժամանակի ընթացքում Բաբելասի մասին գրող հեղինակի երկը, ներմուծվելով հայ միջավայր, շփոթով վերագրվեր Բաբելասին և հայերեն ձեռագրերում կենցաղավարներ «Բաբելայ եպիսկոպոսի Աղեքսանդրոս» անվամբ:

Ճառի հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում լեզվի պարզությամբ ու ոճի հստակությամբ: Նկատի առնելով լեզվաոճական այս բարեմասնությունները՝ Նոր Հայկապան բառգրքի հեղինակները ամենայն իրավամբ այն համարում են «վայելուչ թարգմանություն»¹³: «Հապուազիտ՝ ճառս ոչ միայն վարդապետական և հռետորական տեսակետով,—

¹² S^bu Migne, PG, t. 50, col. 527—534, 533—572: Ճառերի ռուսերեն թարգմանությունը՝ Полное собрание творений св. Иоанна Златоуста, т. 2, СПб., 1896, с. 568—617:

¹³ ՆԲՀ, Ա, էջ 10:

գրում է Հ. Բ. Սարգիսյանը,—այլ և լեզուին մաքրության և գեղեցկակերտ բառերուն համար մեծարգի է¹⁴:

Հրատարակվող ճառ-ներբողը շահեկան է հայոց լեզվի, հայ թարգմանական գրականության ու խոսքարվեստի առավել համակողմանի ուսումնասիրման համար: Այն իր նպաստը կարող է բերել հայ միջնադարյան ճառերի և քարոզների բարոյաբանության, ինչպես նաև՝ ողբագրության պերճախոսական ակունքների բացահայտմանը:

Ճառի հայերեն թարգմանությունը հրապարակվում է ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № № 3782 (ԺԲ դ.—Ա), 7729 (1200—1203 թթ.—B), 1522 (ԺԳ դ.—C), 6228 (ԺԶ դ.—D) ձեռագրերի¹⁵:

Պահպանում ենք ձեռագրերի «ե», «աւ» ուղղագրությունը:

¹⁴ Հ. Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ..., էջ 275:

¹⁵ Ձեռագրերի համառոտ նկարագրությունը տե՛ս Օ. Եգանյան, Ա. Չեյրուխյան, Փ. Անթաբյան, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1082, 575, հ. Բ, Երևան, 1970, էջ 597—599, 274—275:

A186w
B356w
C459w
D 28w

ՅԱՂԱԳՍ ՍՐԲՈՅ ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՄԿՐՏՉԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՍԱՅԵԱԼ ԵՐԱՆԵԼՈՅՆ ԲԱԲԻՂԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ*

Որպէս այր ոք անապատասեր յանտառախիտ տեղուղ ուրեք ընդ ծառով հովանացեալ հաւուցն գեղեցկաձայնութեանց հնչմամբ եւ ջրոյն բարեջաչին հաւասանաբն հեշտացեալ առ ի հանդարտութիւն ձայնիցն:

Յորժամ Աւետարանն քարոզեաց Վեռովդեայ վանդեզնութիւնն ե՛ր վկանանցն անձեռութիւնն, ե՛ր վանառակ երգոցն հեշտութեանցն խելագարութիւնն, ե՛ր վսեղանն պիղծ, ե՛ր վպարզսն անպարկեշտ, ե՛ր // Վգործսն անսուրբ, ե՛ր վամփոփումն պարկեշտ մարմնոյն այլայլմէ լընանիմ, քանզի համբանամ, սիրելիք, յորժամ յանդիման ինձ նկատեմ Վեռովդի վեալ իրսն. եթէ իցէ ասել վայն իրս եւ վերս, որ վայնպիսի գործեաց զչարիս: «Յայնմ ժամանակի լուա Վեռովդէս Չորրորդապետ պամբան Յի-
B357w սուսի, եւ ասէ ցծա//նայս իւր. նա է Յովհաննէս, զոր ես գլխատեցի. նա

յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ պարութիւնք լինին նովա»¹: Խոստովանի վմարգարէին սպանումն, զոր ոչ կարէ ստել. եւ գիտէր, եթէ, զոր եսն սպանի, մարգարէ է եւ այր սուրբ, զի թէ ոչ գիտէր, ոչ ասէ վնա» ի մեռելոց յարուցեալ», եւ յաղագս այնորիկ՝ վարութիւնք նովա լինելն: Ով չար խղճի մտացն կենակից լինի պիղծ անձինն ե՛ր տանջէ մինչեւ ցմահ, ե՛ր յետ մահու առանց հրաժարելոց դատի: Եւ յաղագս որո՞յ պատճառի սպան վմարգարէն. վասն զի քարոզ ճշմարտութեանն լինէր եւ վանաւրեն գործս նորա ի ձեռն յանդիմանութեանն կամէր լուծանել եւ, որում պարտ եւ արժան էր իբրեւ վթագաւոր պահապան լինել արինաց, նա անառակ հեշտութեամբք անառակաբար վարէնս լուծանէր, քանզի թագավոր այն է, որ վարէնս արդարս առաքէ եւ յառաջագոյն գործէ. ո՛չ, որ ապականէ, զի որպէ՛ս արդեւք այլազգ լինքենէ իջխեցեալ պաշխարհի բարեկարգութեան յարմարեցէ եթէ ոչ արդար արինաւք

* Ի տարբերություն հայերենի բնագիրը հետևյալ խորագիրն ունի՝ Εἰς τὴν ὁρχήσῃ τῇς Ἡρωδισσῆς καὶ εἰς πον ἀποτομῇ τῇς κεφαλῆς Ἰωάννου τοῦ προδρόμου καὶ Βαπτιστοῦ,

¹ Մատթ. ԺԴ 1—2:

իբրեւ երասանակաւ զգծուար երեսս անպզամ մարդկան սանձեաց: Բայց Հերովդէս թագաւոր էր ոչ ժողովրդեանն, այլ հեշ ցանկութեան, վասն զի եւ յորմէ եւ յաղթի ոք, նորին եւ ծառայէ, այլ եւ անիրաւ սպանութիւնս կապմէր: Եւ զո՞ հապան. զայր արդար, քան A186^բ զոր «մեծն// ի ծնունդս կանանց»² ոչ ոք յարեաւ, որպէս Տէր վկայեաց: Չայր, որ յանապատի բնակէր, յանապատի՝ յանջեն, յանջուր, յանծառ, յանպտուղ, յանկոխ, յանդալարաբեր: Յանապատի բնակելով Յովհաննէս՝ ոչ փախչելով ի համացեղից եւ յազգական մարդկան սպգէս, այլ փախչէր ոչ տեսանել եւ ոչ լսել զգարջելի մարդկան չարիս: Ինքն ոչ սերմանէր եւ ոչ հնձէր երբեք, յաղագս որոյ ոչ հաց ունէր եւ ոչ՝ գինի, ոչ՝ սեղան եւ ոչ՝ մահիճս զհեշտութեանցն սպասատրս եւ ոչ՝ կակուղ, D 28^բ փետրալից անկողինս// զթուլացուցանողս եւ զլուծանողս զկանանցեացն զմարմինս, ոչ՝ ճրագ, ոչ՝ աշտանակ, ոչ՝ աթոռ, ոչ՝ բաժակ եւ ոչ՝ պնակ, վասն զի արտաքոյ աշխարհիս էր եւ ոչ իւրիք աշխարհիս իրաւք վարէր եւ բնա- C460^ա կէր:// Ոչ յոսկեձեղուն տուն այլ ինքնաձեղուն վիմաւք նմա աթոռ եւ սեղան, եւ մահիճք յատակն էր, եւ միս՝ մարախն եւ խորիխս՝ մեղրն վարենի: Նմա տաշտ՝ ձեռնն իւրոյ հանդիպեալ էր եւ գինի ուրախութեան՝ քարաբուղիս հստակ ջուրն: Չնա կալեալ Հերովդէս՝ կապեաց: «Քանկի Հերովդէս, ասէ, կալեալ կասկեաց զՅովհաննէս եւ եղ ի բանդի ըստ կնոջ Փիլիպպոսի՝ եղբար իւրոյ»³:

Ո՛վ խառնակ իրացն. Յովհաննէս զկասեալ անձն նորա շղթայիւք մեղացն ի ձեռն յանդիմանութեանն լուծանել ախորժէր եւ նա զլուծիչն կաւէր: Բայց սակաւն թեպէտ եւ կապեալ լինէր Յովհաննէս բարբառէր եւ, բանդ արգելեալ, յանդիմանէր: Վասն զի յնոյր զգրեալն թէ՝ «խառնի զկկառութիւնս քո առաջի թագաւորաց եւ ամաչէի»⁴: Քանկի ոչ երկնչէր Յովհաննէս ի մահուանէ, այլ երկնչէր չհասնել զճշմարտութիւնս: Չնա սպան Հերովդէս: Չնա սպանելով ոչ մի սաանութիւն առնէր, այլ՝ բապում: Վասն զի որ զվարդապետ եւ զաւատակար անձնն սպանանէ, ոչ միայն ստանանէ, այլ այնքան, որքան կենդանին

էր, կարէր կենդանագործել ի ձեռն Բանին:

Եւ ե՛րբ զնա հապան, ամաւք է ասել, ամաւք ոչ ասողի, այլ արարողի զպաւնութիւնս: Քանկի զմեղեան իւրոյ հար տանելով Հերովդէս՝ «կաքառեաց դուտրն Հերովդիսայ ի մէջ բապմականացն եւ հաճոյ եղել նմա ուստի եւ երդմամբ խոստացաւ նմա տալ զինչ եւ խնդրիցէ: Եւ նա, յառաջագոյն խրատեալ ի մարէն, տուր ինձ, ասէ, այսր ի վերայ սկտեղ զլուխն Յովհաննու Մկրտչի»⁵:

Ո՛վ ծնունդն չար. մարգարէին շնչելով սպանումն. փոխանակ զոր պարտ եւ B358^ա արժան էր // սուրբ արս յիւր սեղանն հոգալ եւ կոչել եւ այնպէ՛ս արդեւք նորա խոտորեալ անձն ուղղեալ լինէր: Քանկի ընդ սրբոյն ասէ սրբեացիս եւ ընդ խոտորելոյն ասէ խոտորեացիս: Փոխանակ զոր պարտ էր այրեաց տնարիւնել եւ որբոց ողորմել, զի ի ձեռն յոլովից եւ վանապան աղաթից զիւր կեանսն անդրդուելի պահեացէ, այժմ հանդերձ արաւքք անառակաւք եւ պազջատեալ կանանքք զուարճացեալ եւ յոլով գինեաւ ծանրագլխեալ եւ նախ քան զգինին հեշտութեամբ սխալեալ եւ ի շռայլեալ կանանցն խաբեալ՝ զկարապետն տուրնջեան՝ զառաւատն զՅովհաննէս սպանմամբ խորտակէր**:

Չայն ճրագ փշրելով՝ Հերովդէս զինքն խաարեցոյց, քանկի նորա խեցեղեն անաթն յերկիր լուծանէր, այլ սակաւն C460^բ հոգւոյն իւրոյ ճառա//զայթարձակ փայ- A187^ա լումն, որք ի// դժոխս էին զճառագայթսն զեղեցկապէս ծագէր, քանկի մարգարէ էր եւ գիտէր, եթե քան զՏէրն յառաջագոյն ժամանէր ի դժոխսն, առաքէր առ նա զոմանս յաշակերտաց իւրոց ասելով «Դո՛ւ էս, որ գալոց, եթե՛ լայլ ոք վստահանամք»: Ոչ անգիտանալով հարցանէր, քանկի որպէս արդեւք անգիտանայր զՏէրն, որ երբեմն ինքն գուցանէր զնա ասելով. «Ահա գառն Աստուծոյ, որ բառնալ զմեզս աշխարհի»⁶: Չիս՝որ անգիտանայր Տեսող լեալ Հոգւոյն յերկնսստ իջեալ ի վերայ նորա եւ լսող լեալ Հաւր ձառնին, որ ասէր յաղագս նորա. «Դայ է Որդի հմ սիրելի, ընդ որ հաճեցայ»⁷:

Բայց ալմիկի հարցանէ զիարդ. «Դո՛ւ

² Դուկ. Է 28:

³ Մատթ. ԺԴ 3:

⁴ Սաղ. ձԺԸ 46:

⁵ Մատթ. ԺԴ 6—8 նման. Մարկ. Զ 22:

⁶ Յովհ. Ա 29:

⁷ Մատթ. Գ. 17:

** C կորուսանէր:

Ա 29^ա Էս, // որ գալոցն էս եթե՝ այլ ոք». ոչ ասաց եթե՝ «դու էս, որ եկիրդ», քանզի եկն յերկիր, այլ՝ «Դու էս, որ գաս». ո՛ր. յայտ է, թե ի դժոխս, եթե յայլ ոք յուսամք: Վասն զի ասէր յինքեան Յովհաննէս. «միգուցէ ախորժիցէ հրեշտակ պարագուցանելով ի դժոխս առաքել, եւ զիւր գործս կատարիցէ կամ թէ կամիցի միով ձայնիս վամենեսին յարուցանել, որպէս եւ Ղապարու արար. յաղագս այնորիկ ոչ կարէր որոշել զկամս Տեառն, հարցանէր ասելով. «Դո՛ւ էս, որ գալոց էս, եթե յայլ ոք վատահամք ի դժոխս»:

Ձնա հարցանելով սպան Հերովդէս. եւ զիա՛րդ եսպան. «Ձծնունդն, ասէ՛, տաւնելով Հերովդէս՝ կաքաւեաց դուստր Հերովդիայ մէջ բազմականին⁸»: Արժանատր խաղու էր սեղանն, քանզի ուր այջրանք եւ հպտանք, եւ արբեցութիւնք, եւ երգք, անդ եւ ոչ ինչ հաստատութիւնք, այլ ամենայն ինչ սասանեալ եւ դրդեալ՝ կանխաւ գուշակելով զՀերովդի գլխագարութիւնն⁹:

Լուարուք տեսաներք կաքաւեաց, որք ի բազմադարձ ոտսն եւ ի լուծեալ համբակսն¹⁰՝ զձեր աչս պշուցանէք, եւ, զսիրտս ձեր նոցա լուծեալ, նոցա մարմնովքն լքուցանէք: Լուարուք որպիսի թոշակ մահու բազմադարձ ոտքն կաքաւելոյն ծաղկեցուցանեն:

Եւ նա ասէ՝ յառաջագոյն տեղեկացեալ ի մարէն. «տուր ինձ այս ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի¹¹»: Ո՛վ մատակ առնեծուն քարբաժնունդ մանկանն. ոչ ոսկի հայցեաց, ոչ՝ արծաթ, ոչ՝ քարինս պատուականս, այլ՝ զգլուխն Յովհաննու Մկրտչի: Եւ եթէ յաղագս հաւատոյ էր խնդրեալ բազմապատուականագոյն էր քան զոսկի եւ քան զարծաթ Յովհաննէս եւ քան զքարինս պատուականս, բայց ոչ խնդրեաց յաղագս հաւատոյ, զի պատուեցէ, այլ զի պանդիմանիչն սպանանելով՝ մարն շնորհեցէ համարձակութիւն ի չար մեղսն:

Եւ լուեալ թագաւորն՝ բարկացաւ, տրտմեցաւ ոչ վասն սպանման մարգարէին, այլ յաղագս երկիւղի բազմութեանն, // զի ամենեքեան իբրեւ զմարգարէ ունէին զնա, զի վասն երկիւղածութեան տրտմէր ոչ զի զսկզբանն ար-

դեք կապեալ զնա ի բանդին դներ¹²****, B359^ա այլ// տրտմեցաւ վասն բազմութեանն: Եւ էր յայնժամ անձն Հերովդի իբրեւ յերկ ծովու նա ըմբռնեալ, եւ յուրաքանչիւր պատահումս¹³**** հակամիտէր առնել սպանումն, յերկնչէր յաղագս ամբոխին, եւ ոչ առնել վասն երդմանցն եւ բարձակցացն ոչ թողուցանելով: Եւ ծանրացեալ թշուառականն՝ ի կնոջն բազմահոսանս հեշտութիւն վարեալ լինէր պատճառանաւ իւն երդմանն: Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս, զի չար է երդնույն: Յիշեցէք այժմ զՏէրն, որ ասէր. «Ես ասեմ ձեզ ամենեին մի երդնույ¹⁴», զի թէ ոչ էր երդունեալ թշուառականին յայնժամ ոչ արդեք առնէր զսպանումն: Պարտ էր նմա բոլորովին իսկ ոչ երդնույ: Բայց թէպէտ եւ երդուաւ լաւագոյն էր նմա սուտ երդնույ, զի լընտր//ման չարեացն լաւ է զնուազագոյնն ընդունել: Առաքեաց գլխատեաց զՅովհաննէս. ո՛ր ձեռն յանդգնեցաւ, սիրելիք, ի սուրբ պարանոցն Յովհաննու մերձեցուցանել զսուրն, յորմէ գազանք յանապատին պատկառէին, յորմէ առիծքն դողային, յորմէ իծք եւ քարքք եւ վիշապք սարսէին, զոր վայրենի մեղուքն յաղագս առն սրբութեան աշխատեալք կերակրէին, զի ի բազմաց ծաղկաց, բանջարոցն յանապատին իբրեւ յանգանակեալք զցատոցն ոսկէտեսակս անկանելով՝ զմեղոն նմա ընծայէին, զայն ձեռն դահճի եհատ, ոչ սարսափելով ի հրեշտակատեսիլ երեսաց նորա, եւ ոչ դողացաւ ի դիմաց նորա, որք պայծառութիւնն աստուածատես երեսաց առաքէին: Բայց կարծեմ թէ արբեցութեամբ

Ա 29^բ բլրն խաւարեալ // էր, որ առաքեցաւ դահիճն: Սուր ունէր, այլ աչ առ ոչ ունէր: Հատեալ լինէր գլուխն Յովհաննու՝ արին ոչ կաթեցուցանելով, վասն զի ոչ եկեր հաց եւ ոչ արք գինի: Եւ էր գլուխն Յովհաննու ի վերայ սկտեղն յնթիւն, եւ յայնժամ գոչէր առ Հերովդէս. «ոչ է արժան առնույ քեզ զկին եղբար քո¹⁵», զի եւ յետ մահու արդարն կենդանի էր, եւ գլուխն հատեալ էր, բայց ձայնն՝ կենդանի: Ո՛վ խակութեանն. յորժամ սկտեղ ուտէր զմիսն, ի նմա զգլուխ առնն դներ: Ո՛չ

¹⁰ Մատթ. Ե 34:

¹¹ Մատթ. ԺԴ 4:

***** C արկանէր զնա:

***** C «պատահումս»-ից հետո եկող «երկնչէր»-ը գրիչը ջնջել է:

⁸ Մատթ. ԺԴ 6:

⁹ Մատթ. ԺԴ 8:

*** AB խելագարութիւն:


**** B համբակ տիւրք:

էր բաական քեզ, ո՛վ Հերովդէս, մանկանցն ի Բեղդէհեմ լեալ խողխողմունն: Ո՛չ վարհուրեցոյց զքեզ հարցն եւ մարցըն կականումն ողբոցն: Ո՛չ խոնարհեցուցին զքեզ բազմահոս արտասուացըն ի վեր բղխեալք յաղբերացն, յորժամ հարցն լանջք կոծեալք լինէին, // յորժամ մարքն զհրեանց որովայնն ի տղայոցն տարածամ թառամեալ ողբային, յորժամ ի ստեանցն հոսեր կաթն եւ զերկիրն սպիտակեցուցանէր: Քանզի ո՛ր գազան յայնժամ ոչ արտասուէր զանմեղ տղայոցն զաննենգաւոր անձինս անիրաւաբար սպանեալս տեսանելով: Միթէ՞ եւ նոքա զքեզ յանդիմանեցին, ո՛վ Հերովդէս, որոց ոչ լեզու հաստատուն խաւսէր: Ո՛չ էր բաական քեզ այն խակութիւնն, այլ եւ զՅովհաննէս գլխատեցէր, զորոյ եւ ոչ զմի մալ

հերոյն արժէիր: Վժնունդս Հռաքելայ խողխողեցէր, զեկեղեցոյ խրատիչն Յովհաննէս գլխատեցէր:

«Որո՛ւմ այդոցիկ եղեց քեզ քալիչ» ասէ Տէր, ո՛վ քաղաք արեան, յորում Հերովդէս թագաւորեաց: Վա՛յ ինձ, որ թուէր թագաւոր լեալ բարեկարգութեան, նա առակութեան առաջնորդ եղեւ: Ի նմանէ իշխեցեալ հրեայքն եւ զսպանութիւն ի նմանէ ուսեալք՝ ի Քրիստոսաւսպանութիւնն յանդգնեցան: Նա զտղայսն եսպան, զՅովհաննէս գլխատեաց: Նոքա զԵսայի սղոցեցին, զԵրեմիայ խեղդեցին, զՆաբովթ քարկոծեցին, զՉաքարիայ սպանին եւ զՔրիստոս խաչեցին: Բայց նոցա չարեացն սուգ թողցուք եւ ի խորհրդածութեան լոյսն ընթացուք՝ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաիտեանս. ամեն:





ԵՂՎԱՐՈՒԻ Ս. ՋՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԵՆԱՍՏԱՆԸ

VII դարը իրավամբ համարվում է հայկական ճարտարապետության ոսկեդար: Դա նորարարությունների, համարձակ մտահղացումների իրականացման մի պատմաշրջան էր, որը հայ մշակույթն ու արվեստը հարստացրեց մի ամբողջ շարք մեծարժեք ստեղծագործություններով: Յոթերորդ դարյան ճարտարապետության և շինարարական արվեստի բարձր դրսևորումներից մեկն է Եղվարդի մոտ գտնվող Ս. Ջորավար եկեղեցին: Կառուցվել է դարի 70-ական թվականներին Հայաստանի կառավարիչ իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661—685 թթ.) կողմից: Վերջինըս իր նստավայրը դարձնելով Արագածոտնի Արուճ ավանը, չի բավարարվում այնտեղ ծավալած շինարարական գործունեությամբ, ձեռնարկում է նաև Ս. Ջորավարի կառուցումը: Այս մասին իր «Հայոց պատմության» մեջ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Շինե՛ (Գրիգոր Մամիկոնյանը—Կ. Մ.) նաև նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ի նմա յարդարեալ ըստ յարևելից կուէ դաստակերտին մեծի Եղիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից վնա հաստատե՛ ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»¹: Պատմիչի այս վկայությունը հայ ճարտարապետության ուսումնասիրողների համար առայժմ եղած միակ և հավաստի փաստարկն է, որպեսզի Ս. Ջորավար եկեղեցու կառուցումը Գրիգոր Մա-

միկոնյանին վերագրվի, քանի որ շինարարական արձանագրություն չի հայտնաբերվել: Սակայն գրականության մեջ չի ընդգծվել այն հանգամանքը, որ իշխանը սկսելուց առաջ տեղ սոսկ եկեղեցի չի կառուցել: Դրասխանակերտցու հաղորդածից երևում է, որ Եղվարդի մոտ Գրիգոր իշխանը կառուցել է «նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց», այն է «տուն բնակութեան կուսակրօնից», որում և «եկեղեցի պայծառապաճոյճ»: Այսինքն Ս. Ջորավարը, որը կառուցված է բնակավայրերից հեռու (Եղվարդից 3 կմ հյուսիս-արևելք) եղել է մենաստանի եկեղեցին, իսկ ամբողջության մեջ Գրիգոր Մամիկոնյանի հիմնածր ըստ էության եղել է մենաստան: Կուսակրոնների կացարանի և հարակից շինությունների ավերակների քարակույտերը երևում են մինչև օրս, եկեղեցու հյուսիսային կողմում: Դրանց մասին Թորոս Թորամանյանը 1909 թ. գրում է. «Ուշադրության արժանի են որձաքարով շինված շենքերու մնացորդները, որ շատ ընդարձակ տեղ բռներ են, կան երբեմն մեծ շենքերու մնացորդներ. ոմանք գաճ ու կրով են շինված, բայց շատը առանց կրաշաղախի»²: Մենաստանի կառուցվածքներից դեռ կանգուն է մի մատուռ, որը ավելի ուշ շրջանի շինություն է (XII—XIII դդ.), գուցե կառուցված հնի տեղում: Ինչպես երևում է, միջնադարում այստեղ բավական

¹ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 91:


² Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 158:

բվով հոգևորականներ են բնակվել, որոնցից մեկը հայոց Մաշտոց Ա կաթողիկոսի (897—898 թթ.) հայրն էր: Այստեղ գրվել են նաև ձեռագրեր:

Մենաստանի եկեղեցին՝ Ս. Չորավարը, VII դարի հայ եկեղեցական ճարտարապետության ինքնատիպ և բարձրարժեք կառույցներից մեկն է: Տ. Մարությանը նշելով, որ այն կառուցել է իշխան Գրիգոր Մամիկոնյանը, ենթադրում է. «Ըստ երևույթին, դրանով էլ պետք է բացատրել եկեղեցու «Չորավար» անվանումը»³: Եկեղեցին երբեմն թյուրիմացաբար կոչվել է «Չորավոր»: Այս հուշարձանը կոչվել է նաև Ղառավալանք (Ագռավալանք), որը ժողովրդական մի ավանդության ծնունդ է⁴: Ս. Չորավար եկեղեցու անունը, սակայն, ծագում է քրիստոնեական Ս. Թեոդորոս Կորավարի անունից, որին նվիրվել է այն, ինչպես ժամանակին իրավացիորեն նշել է Գարեգին Հովսեփյանը: Եկեղեցու պատին Ենոք (Ինոք) քահանայի և ում Սիոնի նվիրատվական արձանագրություններում այն անվանվում է «ՍԲ ԶԱԻՐԱՎԱՐ»: Իսկ Մաշտոց կաթողիկոսի կենսագրության մեջ կոչվում է մենաստան «անուամբ սրբոյն Թեոդորոսի»⁵:

Ս. Չորավարը մինչև օրս հայտնի հայկական հնագույն ութ խորանով բոլորաձև եկեղեցին է: Դա Թ. Թորամանյանը համարում է «բոլորովին տարբեր ոճ» և ավելացնում. «Այս ոճի առաջին օրինակն է թերևս, Շղվարդի Գր. Մամիկոնյանի շինած Ս. Չորավոր անունով եկեղեցին»⁶: Այս կապակցությամբ Ստ. Մնացականյանը գրում է. «Հայկական ճարտարապետության մեջ Չորավարն ունի իր խիստ որոշակի և հաստատուն տեղը, այն հնագույնն է մեզ հասած բազմաբսիդ կառուցվածքների մեջ և նրա ձևերի ապոե-

ցությունները նկատելի են ավելի ուշ կառուցված այլ հորինվածքներում»⁷: Ուսումնասիրողները Ս. Չորավարի յուրատիպ հատակագծի ծագման նախադրյալներից առաջինը համարում են Չվարթնոցի փառահեղ տաճարի իրագործումը հայ իրականության մեջ: Սակայն Ս. Չորավար եկեղեցու շնորհալի ճարտարապետը չի ընդօրինակել ինչ-որ պատրաստի հորինվածք, այլ գտնվելով նոր կառուցված Չվարթնոցի տպավորության տակ, ելնելով իր շինության ոչ մեծ չափերից, ստեղծագործաբար մշակել է բազմախարկ, բազմանիստ՝ ութ խորանով եկեղեցու զաղափարը⁸:



Ս. Չորավար եկեղեցու հատակագիծը

Եկեղեցին կառուցված է դարչնագույն տուֆ քարով: Ներկայումս այն կիսավեր է՝ հարավային մասը և գմբեթը չեն պահպանվել: Կանգուն են մնացել հյուսիսկողմյան չորս խորանները: Արևելյան, Ավագ խորանը ունեցել է փոքր ինչ խոշոր չափեր, քան մնացած միաձև և միաչափ յոթ խորանները: Եկեղեցին հավանաբար երեք շքամուտք է ունեցել. պահպանվել են հյուսիսայինն ու արևմտյանը: Հուշարձանը շրջապատված է ոչ թե աստիճանավոր գետնախարսխով, այլ այն բոլորաձև օղակող մեկ աստիճանով: Խորանների հատման մասում արտաբնույտ արված

³ Տ. Մարության, Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 148:

⁴ Ըստ ավանդության, մի անգամ ուխտավորներն այստեղ մատաղ են եփում մեծ կաթսայի մեջ: Թուխավոր օձը, մարդկանցից աննկատ, սողոսկում է կաթսան և թունավորում կերակուրը: Այդ բանը նկատում է մի ագռավ և աշխատում է ուխտավորներին թույլ չտալ ուտել մատաղը: Մարդիկ գլխի չեն ընկնում, թե բանն ինչու՞մ է, և ագռավը ստիպված իրեն նետում է եռացող կաթսայի մեջ: Թափում են մատաղը և նոր միայն տեսնում օձը: Այդ օրվանից վանքը կոչում են Ագռավալանք: Տե՛ս Արամ Ղառավալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 224:

⁵ Գարեգին Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պոռեանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1960, էջ 408:

⁶ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., առաջին ժողովածու, Երևան, 1942, էջ 118:

⁷ Ստ. Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, ճարտարապետական հուշարձաններ, Երևան, 1971, էջ 148:

⁸ Н. Токаревский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 143, Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 147—149:

են ութ եռանկյունաձև «հայկական» կոչվող խորշեր, որոնց խորքում տեղադրված են կիսակլոր հիմքով մեկական սյուներ: Ներքուստ, խորանների կցման տեղում բարձրանում են խոյակներով պսակված երեք քառորդ սյուներ: Գմբեթի բարձր թմբուկը ներսից շրջանաձև է, արտաքինից՝ բազմանիստ (12 նիստերով): Հուշարձանը ունի VII դարի կառույցների բնորոշ մեծ լուսամուտներ: Այդպիսիք կան յուրաքանչյուր խորանում, իսկ գմբեթի թմբուկը, իր հերթին, ունեցել է չորս լուսամուտ, աշխարհի չորս կողմերի ուղղությամբ: Ընդհանուր առմամբ եկեղեցու հորինվածքը թողնում է միաձույլ, ամբողջական և կոթողային տպավորություն: Այն աչքի է ընկնում ձևի կատարելությամբ և մանրամասների ներդաշնակությամբ: Հիշենք, որ դեռ Հովհաննես Դրասխանակերտցին այս հուշարձանը կոչում է «եկեղեցի պայծառապաճոյձ»: Եվ պատահական չէ, որ հետագայում Ս. Չորավարը իր որոշակի ակնկալությունն է թողել ոչ միջնադարի հայ եկեղեցական ճարտարապետության մի շարք հուշարձանների վրա:

Ս. Չորավար եկեղեցու ներսը պարզարված է եղել որմնակարներով, որոնց հնությունը հասնում է VII դար: Սակայն այժմ դրա անընթան հետքերն են միայն պահպանվել: Թ. Թորամանյանը դարակալների այցելելով արդեն կիսակործան եղած եկեղեցին, այդ մասին գրում է. «Մի ժամանակ եկեղեցին ծեփված և նկարապարզված է եղել, այժմ միայն հետքերն են մնացել. խորանին ձախ կողմը ծեփի վրա եղել է ընդարձակ մի արձանագրություն, որն այժմ անընթեռնելի դարձած է»⁹: Բարեբախտաբար ժամանակին արտագրվելով կորստից փրկվել է որմնակարի վրա եղած այս արձանագրության մի հատվածը, որի մասին Գարեգին Հովսեփյանը հետևյալն է հաղորդում. «Նկատելի են պատկերների հետքեր, մանաւանդ ամփոփի վերայ, ուր եւ արձանագրութիւնից (ծեփի վերայ դեղով գրուած) կարդացվում է. «...վանէս եւ վարդան տրուպ ծառաք որ պաշխատեց սբ վեկեղեցիս նորոգեց...»¹⁰: Գ. Հովսեփյանը այս արձանագրությունից ելնելով ենթադրում է, որ որմնակարը նկարվել է «հաւանորեն ԺԳ դարում»: Բերված արձանագրությունից երևում է, սակայն, որ Հովհաննեսը (յվանէս) և Վարդանը **նորոգել են** որմնակարը: Իսկ դա ինքնին խոսում է այն մասին, որ մինչ այդ եկեղեցին արդեն որմնակարապարզ է եղել: Պետք է կարծել, որ VII դարում, Ս. Չորավարի կառուցումից ան-

միջապես հետո նկարված որմնակարը ժամանակի ընթացքում մասնակիորեն քայքայվել է և նորոգման կարիք է պահանջել ինչը և իրագործել են Հովհաննեսն ու Վարդանը, այդ մասին թողնելով համապատասխան արձանագրություն, հենց ծեփի վրա: Այս ենթադրությունը ավելի հավանական է թվում, երբ ծանոթանում ենք որմնակարի պահպանված հատվածների գունային վերլուծությանը, կատարված Ն. Քոթանջյանի կողմից: Ուսումնասիրողը ծանոթ չլինելով վերը նշված արձանագրությանը, որմնակարի հատվածների գունային կառուցվածքի վերաբերյալ գրում է. «...որմնակարի մնացորդների պատկերապարզման սկզբունքների քննությունը բերում է այն եզրակացության, որ նրա գունային կառուցվածքը ունեցել է երկակի բնույթ», ապա քիչ անց ավելացնում է. «գունային կառուցվածքի տարբեր սկզբունքներից հետևող գեղարվեստական հնարքների երկակիությունը (մի դեպքում պայմանական հարթապատկերային, մյուս դեպքում՝ գեղանկարչատոնային) կարող է բացատրվել որմնակարի ձևավորմանը տարբեր վարպետների, կամ անգամ վարպետների տարբեր խմբերի մասնակցությամբ»¹¹: Ս. Չորավարի որմնակարի պահպանված բեկորները հիմնականում պարզամոտիվներ ու պարզաձևեր են ներկայացնում¹²: Մանրամասն դիտումներից հետո Ն. Քոթանջյանին հաջողվել է գտնել նաև մեկ այլ բնույթի պատկեր (մարդկային պատկերի հագուստամաս), որը իր կատարման եղանակով և սկզբունքներով մի կողմից հեռանում է նույն որմնակարի գծային գրաֆիկական եղանակով ստեղծված պարզամոտիվներից, մյուս կողմից մոտենում են Արուճի տաճարի 666 թ. որմնակարին, նկարված ավատ գունային գեղանկարչական սկզբունքով¹³: Այս վերջին հանգամանքը մեզ բերել է այն համոզման, որ Ս. Չորավարի որմնակարիչը Գրիգոր Մամիկոնյանի Արու-

¹¹ Н. Котанджян, Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978, с. 52.

¹² Լ. Ա. Դուրնովն նույնպես ծանոթ չի եղել վերը նշված արձանագրությանը և որմնակարը դիտել է որպես զուտ VII դարի գործ: Սակայն նկատել է, որ այն «առանձնանում է» այդ ժամանակաշրջանի մյուս որմնակարներից: Լ. Դուրնովն սկզբունքներն չի բացառում վարդամոտիվներից բացի այլ պատկերների գոյության հնարավորությունը, սակայն այնուամենայնիվ ենթադրում է, որ Ս. Չորավար եկեղեցու ներսը ամբողջությամբ ծածկված է եղել վարդամոտիվներով ու գեղապարզերով: Տե՛ս Լ. Դուրնով, Краткая история древнеармянской живописи Ереван, 1957, с. 12.

¹³ Н. Котанджян, նույն տեղում:

⁹ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., երկրորդ ժողովածու, էջ 158:

¹⁰ Գարեգին Հովսեփյան, նույն տեղում:

ճում կառուցած Ս. Գրիգոր տաճարի Ստեփանոս նկարիչն է եղել, որի անունը բարեբախտաբար պահպանվել է Արուծի որմնանկարում¹⁴:

Ասվածից և Ս. Չորավարի որմնանկարի վրա եղած արձանագրությունից հետևում է, որ եկեղեցու սկզբնական որմնանկարը (VII դար, Ստեփանոս) ուշ միջնադարում նորոգվել է (XII—XIII դդ. Հովհաննես, Վարդան): Տարբեր ժամանակներում որմնանկարիչները պատկերապարզման տարբեր սկզբունքներ են կիրառել, որի հետևանքը որմնանկարի գունային կառուցվածքի երկակի բնույթն է: Նկարապարզ հատվածների այժմյան վիճակը թույլ չի տալիս կռահել, թե ինչ էր նկարված VII դարում և ինչ է ավելացվել նորոգման ժամանակ: Կարծում ենք, որ հետագայում ավելացվածը հիմնականում պարզամոտիվներ են եղել:

Դատելով պատմական հատուկ կենտրոնականություններից, միջնադարում Ս. Չորավար եկեղեցին և մենաստանը ունեցել են բավական թվով միաբաններ, տնտեսական և մշակութային գործունեության ոլորտ: Մենաստանը հիշատակվում է հայոց Մաշտոց կաթողիկոսի վարքում, գրված 893 թ. նրա աջակերտ Ստեփանոս կրոնավորի ձեռքով: Այստեղ կենսագիրը կաթողիկոսի հոր մասին գրում է. «Սա էր ի տոհմէ քահանայական՝ ի գեղջէն Եղեվարդայ ի ժառանգաց մենաստանաց, որ անուամբ սրբոյն Թէոդորոսի էր»¹⁵:

Ս. Չորավարը եղել է գրչության կենտրոն: 1197 թ. Սարգիս Կոնստի աջակերտներ Դավիթն ու Ներսէսը այստեղ ընդօրինակել են իրենց ուսուցչի «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու» գործը: Այդ մասին հիշատակու-

թյուն է պահպանվել Սարգիս Կոնստի «Մեկնության» մեկ այլ օրինակում, գրված Թովմա Մեծոփեցու կողմից 1427 թ. Մեծոփա վանքում: Ձեռագրի հիշատակարանում Մեծոփեցին նշում է. «...արքիմակն առաջին գրեալ էր ի Սուրբ ուխտն Եղեվարդու, ի դուռն Սրբոյն եկեղեցոյն Թէոդորոսին, որ էր գրեալ յառաջին օրինակէն, ձեռամբ աջակերտաց սուրբ վարդապետին Սարգսի՝ Դարթի և Ներսէսի...»¹⁶:

Ս. Չորավար եկեղեցու պատին XII—XIII դդ. պատկանող երկու անթվական վիմագիր արձանագրություններ կան: Դրանցում նշվում են նվիրատվություններ. մեկը Ենոք քահանայի կողմից՝ նրա «հայրենի այգին որ յԵղիվարդ է», մյուսը Սիոն անունով մեկի, որը գրում է. «...տի պիմ հալրն այգին ի սր ուխտս»:

Ահա այն ամենը, ինչ առայժմ հայտնի է մեկ Ս. Չորավարի մասին: Ժամանակը անողոք է մարդկանց ստեղծագործության նկատմամբ, մենաստանի շենքերն ավերվել են, կիսակործան է եղել եկեղեցին, թափվել է որմնանկարի ծեփը: Մնացել է պատմություն այս ամենի մասին և հույս, որ Ս. Չորավար գողտրիկ եկեղեցին մի օր կվերականգնվի¹⁷:


¹⁶ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 360:

¹⁷ «Թվում է, թե Հայաստանը հարուստ լինելով ճարտարապետական հուշարձաններով, կարող է նշանակություն չտալ դրանցից մեկի կորստին,—գրում է Յու. Յարալովը Ս. Չորավարի մասին,—բայց դա կվնասեր հայ ճարտարապետության պարզացման գեներալական գծին, քանի որ Չորավարը շրջային այն օղակն է, որը միացնում է բազմաթիվ եկեղեցիների պարզացման գիծը... Չորավարի պահպանումը հայագիտության պարտքն է»: Տե՛ս Յու. Երալով, Зоравар—памятник древнеармянской архитектуры. Հայաստանի մշակույթի և արվեստի պորթլանդներին նվիրված հանրապետական V զիտական կոնֆերանս (12—16 նոյեմբեր, Երևան), թեպիսներ, Երևան, 1982, էջ 158:

¹⁴ Կ. Մաքսույան, Արուծի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը—Թ, էջ 67—69:

¹⁵ Մատենադարան, ձեռ. № 970, էջ 358բ, հիմն. Գաբրեղի «Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, Կ. Ա. Անթիլիս, 1951, էջ 89, 93:





ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը 1982 թվականին լույս ընծայեց «Ապատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ» (1820—1920 թթ.) ժողովածուն: Գրքի տեքստը պատրաստել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել են բանասիրական գիտությունների դոկտորներ Ալմաստ Չաքարյանը և Գարրի Հովհաննիսյանը: Ժողովածուն ընդգրկում է հայ գրողների, հրապարակախոսների, հասարակական-քաղաքական գործիչների ժառանգությունից քաղված ապատասիրական գաղափարներով տոգորված էջեր: Այդ հեղինակներն են, ըստ ժամանակային հերթականության՝ Մեսրոպ Թաղիադյան—ներառյալ Եղիշե Չարենց:

Հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացումը գալիս է դարերի խորքից, սակայն ԺԹ դարից սկսած մինչև Ի դարի առաջին տասնամյակները հայ ժողովրդի համար եղավ աննախադեպ: Հրատարակվեցին բազմաթիվ թերթեր, ամսագրեր, հանդեսներ, տարեգրքեր, բառարաններ: Մոսկվայում, Փարիզում, Կ. Պոլսում, Կալկաթայում, Վենետիկում, Չիկոնիայում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Աստրախանում և այլուր ստեղծվեցին հայկական մշակութային կենտրոններ, որոնք միաժամանակ ազգային ապատագրական պայքարի օջախներ էին:

Արժե հատկապես նշել այն փաստը, որ վերջին վաթսու տարիների ընթացքում հրատարակվել են գիտական արժեքավոր աշ-

խատություններ՝ նվիրված հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությանը: Ժողովածոում տեղ են գտել Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի, Ղևոնդ Ալիշանի, Ստեփանոս Նապարյանի, Միքայել Նաբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Բաֆֆու, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի և մեր մյուս նշանավոր անձանց ընտիր էջերը (ձառ, իրաված, նամակ, ուղեգրություն, հուշագրություն, գրախոսություն, գրական դիմանկար, ինքնակենսագրություն, օրագրություն, բանավեճ, ելույթ, էսսե):

Ժողովածուն բաղկացած է չորս բաժիններից. Առաջաբան, Հրապարակախոսություն, Ծանոթագրություններ, Անձնանունների ցանկ (596 էջ):

Բանասիրական գիտությունների դոկտորներ Ալմաստ Չաքարյանի և Գարրի Հովհաննիսյանի «Ապատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ» ժողովածուն արժանի է գնահատանքի:

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՉԽԱՄՐՈՂ ՆՄՈՒՇՆԵՐ

1982 թվականին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ, լույս ընծայեց Հրավարդ Հակոբյանի «Վասպուրականի մանրանկարչությունը» ուսումնասիրությունը:

Գիրքն սկսվում է հեղինակի «Երկու խոսք» ներածականով, որտեղ ասվում է.

«Մույն աշխատությունը շարունակություն

է 1976 թ. հրատարակված մեր «Վասպուրականի մանրանկարչությունը» ուսումնասիրության Ա գրքի: Այնտեղ մատնանշել ենք, որ հայկական մանրանկարչության ոչ մի դպրոց չի ունեցել այնքան երկարատև գործունեություն (XIII դ. վերջերից մինչև XVIII դարի կեսերը) և այնքան հարուստ ժառանգություն (շուրջ 1.500 ձեռագիր), որքան Վասպուրականինը: Մատնանշել ենք նաև, որ հայ մանրանկարչության արվեստի այդ մեծ հատվածի հանգամանակից ուսումնասիրությունը, այն հնարավորին չափ ամբողջական ներկայացնելու գործը՝ նախատեսված է մի քանի գլուխով:

Սույն՝ երկրորդ գրքում ներկայացված է, ըստ ժամանակագրական կարգի, տասնհինգ հեղինակ (Կիրակոս Աղբակեցի, Ռատակես, Կարապետ Վանեցի, Աստվածատուր Արծիշեցի, Մերուս Մաղկոդ, Թումա և ուրիշներ), որոնց ընդօրինակած և պատկերապարզած ձեռագրերի թիվը հասնում է հիսունի: Մանրանկարիչները ներկայացված են հետևյալ կերպ. նախ տրված է ծաղկողի ընդօրինակած և պատկերապարզած ձեռագրերի քանակը, պահպանված կենսագրական տվյալներ ծաղկողի մասին, ձեռագրի ծաղկման ժամանակը, վայրը և ներկայումս նրա գտնվելու տեղը, ապա Տերունական թեմաներով նկարները: Վերջում ներկայացված են մանրանկարչի արվեստը և ոճը:

Ուսումնասիրությունն ունի հարուստ ծանոթագրություններ, ձեռագիր հուշարձանների նկարագրություն և ցանկեր: Գիրքը բաղկացած է 178 էջից և ունի 70 սև ու 15 գունավոր ներդիր նկարներ:

Երկու գրքից բաղկացած «Վասպուրականի մանրանկարչությունը» կարևոր ներդրում է ոչ միայն հայ, այլև ընդհանրապես միջնադարյան արվեստի պատմության ուսումնասիրության գործում:

ԵՐԵՔ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԴԱՐԱՎՈՐ
ԿԱՊԵՐՈՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Նաուկա» հրատարակչության Լենինգրադի բաժանմունքը 1982 թվականին ռուսերեն լեզվով լույս ընծայեց «Ռուս և հայ միջնադարյան գրականությունները» խորագրով ժողովածուն, որն ընդգրկում է միջազգային հայագիտական կոնֆերանսներում կարդացված պեկուցումները: Վերջին տասնամյակներում հայ, ռուս և ուկրաինացի պատմաբանների և հայագետների կողմից զգալի աշխատանք է կատարվել հին Ռուսիայի տարածքում ապաստանած տարագիր հայության պատմության հետապոստությանը: Գրվել են բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ

այս ժողովուրդների փոխադարձ կապերի մասին, և ըստ արժանվույն գնահատվել է ռուս և ուկրաինացի ժողովուրդների քաղաքակրթության վարձագման գործում տվյալ հատվածի հայության բերած համեստ նպաստը: Այսպիսի հոդվածներից և ուսումնասիրություններից նույնպես ընտրվել և պետեղվել են հիշյալ ժողովածուում: Թեև ժողովածուն վերնագրված է «Ռուս և հայ միջնադարյան գրականությունները» խորագրով, բայց այն ըստ էության տեղեկություններ է տալիս երեք ժողովուրդների միջնադարյան գրական կապերի մասին: Իսկ այնտեղ թե՛ պատմաբանը, թե՛ բանասերը, թե՛ արվեստաբանը, թե՛ ձեռագրագետն ու աղբյուրագետը արժեքավոր շատ ու շատ նյութեր կգտնեն իրենց հետաքրքրող հարցերի շուրջ:

Ժողովածուի առաջաբանում գլխավոր խըմբագիր, ակադեմիկոս Դ. Լիխաչովը խոսում է այն բուռն հետաքրքրության մասին, որ առաջացրել են այնտեղ տեղ գտած հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Հատորի ներածական բաժնում տպագրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի «Հայկական միջնադարյան գրականության ուսումնասիրության հիմնական արյույնքներն ու խնդիրները» ակնարկը:

Ժողովածուում ընդգրկված է հայ և ռուս միջնադարագետների շուրջ քսան աշխատություն, որոնք բաժանված են վանապան խըմբերի՝ համապատասխան ժանրերի. հայ և ռուս միջնադարյան գրողների գեղագիտական հայացքները, վարքագրություն, առակագրություն, արվեստ և այլն:

Ժողովածուի վերջում պետեղված է հայկական միջնադարյան բնագրերի 1786—1979 թվականներին լույս տեսած ռուսերեն թարգմանությունների ցանկը:

Սույն ժողովածուն բաղկացած է 443 էջից: Այն կարևոր ներդրում է գիտության մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍ ԳՐՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

«Սովետական գրող» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց ռուս գրողների ակնարկների և ուղեգրությունների՝ «Յոթ գարունների երկրում» խորագրով եռաշաբաթյա վերջին գիրքը: Առաջին գիրքը, որ կոչվում է «Որթատունկի բույր», հրատարակվել է 1978 թվականին, երկրորդը՝ «Աստղագիտության դասը», 1981 թվականին: Եռաշաբաթյա երրորդ գիրքը՝ «Բազմախոս Հայաստանը», հրատարակվեց 1983 թվականին: Ժողովածուի երեք գրքերն էլ կապվել, թարգմանել, ծանոթագրությունները և վերջաբանը գրել է Ռաֆայել Ավագյանը:

Երրորդ հատորում տեղ են գտել վերջին տասնամյակում ռուս գրողների՝ Լև Սլավինի, Անդրեյ Բիտովի, Կիմ Բակլեյի, Ռամիլ Հաքիմովի, Բրոնիսլավ Խոլոպովի, Ալեքսանդր Ռուսովի, Վալերիա Ալֆենի, Ալեքսանդր Վասինսկու, Անատոլի Մակարովի, Դավիդ Գալի, Լև Կրիվենկոյի, Իրենա Սերեկայի, Լևոն Խաչատուրյանցի և Եվգենի Խրունովի ակնարկները, գրական ուրվագծերն ու ուղեգրությունները:

Այս հեղինակները սրտի անկեղծ գնահատանքի և մեծարանքի խոսք են ասում Հայաստանի անցյալի և ներկայի, հայ ժողովրդի ստեղծագործ մտքի և նրա լուսաշող ապագայի մասին: «Յոթ գարունների երկրում» ժողովածուի երրորդ հատորը բաղկացած է 640 էջից: Յուրաքանչյուր գործ-գլխից առաջ պետեղված է տվյալ հեղինակի դիմանկարը:

ԹԵՌՓԱՆԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՅԵՐԵՆ


Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի «Բյուզանդական աղբյուրներ» ենթաշարքով վերջերս լույս ընծայեց Ը դարի վերջերի և Թ դարի սկզբների բյուզանդական նշանավոր պատմիչ Թեոփանես Խոստովանողի «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունը: Աշխատությունը հայերեն է թարգմանված Կառլոս դե Բոորի աշխատասիրությամբ լույս տեսած քննական բնագրից: Թարգմանությունը հունարենից կատարել, առաջաբանը և գիտական ծանոթագրությունները կազմել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, Աթենքի ակադեմիայի թղթակից-անդամ Հրաչ Բարթիկյանը:


Թեոփանես Խոստովանողի (մահացած՝ 818 թ.) աշխատությունը մեծարժեք սկզբնաղբյուր է Բյուզանդիայի ու նրա հարևան երկրների հատկապես Է—Ը դարերի պատմությունն ուսումնասիրելու համար: Նա ժամանակի միջազգային կյանքի ընդհանուր ֆոնի վրա տվել է Բյուզանդական կայսրության սոցիալ-տնտեսական հարաբերությունների և դասակարգային պայքարի պատմությունը: Նա գրել է բյուզանդա-պարսկական և բյուզանդա-արաբական քաղաքական հարաբերությունների, արևելքի պետությունների նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականության մասին:

Պատմիչի ուշադրության կենտրոնում են եղել նաև Հայաստանը, հայ-բյուզանդական քաղաքական ու եկեղեցական հարաբերությունները, ինչպես և Բյուզանդական կայսրության սահմաններում հաստատված հայերի կյանքն ու գործունեությունը: Նա առաջին հեղինակն է, որ գրավոր տեղեկություն է թողել պավլիկյանների, Բյուզանդիայում նրանց նկատմամբ կիրառված քաղաքականության և կայսրության մեջ այդ աղանդավորների ստեղծած զաղութների մասին: Չափազանց ուշագրավ են «Ժամանակագրության» մեջ առկա տեղեկություններն այն մասին, թե ի՞նչ դեր էին խաղում հայերը Բյուզանդական կայսրության հատկապես քաղաքական ու ռազմական կյանքում:

Դեռևս Թ դարում Թեոփանես Խոստովանողի աշխատությունը թարգմանվել է լատիներեն: Հունարեն բնագիրն առաջին անգամ հրատարակվել է Փարիզում 1655 թվականին, հետո այն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: Քննական բնագիրը լույս է տեսել 1883 թվականին:

Գիրքը լավ նվեր է հայ ժողովրդի պատմությամբ հետաքրքրվողների համար:





Ց Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№. 563
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 50:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝ $21.8 \times 16.3 \times 0.3$ սմ.:—Նյութը՝ դեղնած բարակ թուղթ:—Կապը՝ վարդագույն բարակ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսության հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան: Աշակերտին անունը, Դասարանը, Տետրակին նիւթը, Տարեջրն, Տպարան Դպրեվանք»:—Պահպանակները՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ ձեռագրի բոլոր թղթերի կռնակը դատարկ է, բացի 13ր, 14ր, 17ր, 20ր և 47ր թերթերից, նաև 50ա—50բ թերթերը:—Տողերը՝ 20:—Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:—Գիրը՝ ջղագիր:—Չարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք):—Ժամանակը՝ 1940-ական թթ.:—Վայրը՝ Անթիլիաս (Լիբանան):—Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհաբանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

- Թ. 1ա.—Է. դար, Դեմքեր,
- Ա. Կոմիտաս կաթողիկոս.
- Բ. Անանիա Շիրակացի:
- Թ. 7ա.—Բ. Գյուլս, Սուրբ Գիյոք:
- Թ. 12ա.—Մարդեղություն Փրկչին:
- Թ. 14ա.—Մոլորությունը մարդեղության մասին:
- Թ. 15ա.—Բնության հարց:
- Թ. 17ա.—Նեստորական մոլորություն:
- Թ. 20ա.—Եւտիքեան մոլորություն:
- Թ. 24ա.—Փրկագործություն Բրիստոսի:
- Թ. 30ա.—Փրկչի ակնկալություն:
- Թ. 35ա.—Նպատակ և արդյունք Փրկչի մարդեղության:
- Թ. 36ա.—Շնորհք:
- Թ. 45ա.—Մկրտություն:

ՀԻՇՏԱՍԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
Նօթք
Ածաբանության
(Գ. Տետրակ)

№. 564
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը, Գ, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից և 1983 թվականի № № Բ—Գ-ից:

Թերթերը՝ 40:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝ $21.7 \times 16.5 \times 0.4$ սմ.:—Նյութը՝ դեղնած բարակ թուղթ:—Կապը՝ նոնագույն բարակ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսության Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան: Աշակերտին անունը, Դասարանը, Տետրակին նիւթը, Տպարան Դպրեվանք»:—Պահպանակները՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ ձեռագրի բոլոր թղթերի կռնակը դատարկ է:

—Տողերը՝ 22:—Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:—Գիրը՝ շղագիր:—Չարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Ընտրիք վարդապետ (այժմ Տ. Ընտրիք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք):—Ժամանակը 1940-ական թթ.:—Վայրը՝ Անթիլիաս (Լիբանան):—Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 2ա.—Մուտք:
Թ. 3ա.—Բ. Կարևորություն Աստուածաբանության:
Թ. 6ա.—Գ. Աստուածաբանության ուսանելու կերպը:
Թ. 7ա.—Դ. Ինչ ըսել է Աստուածաբանություն:
Ե. Բաժանմունք Աստուածաբանության:
Թ. 10ա.—Չ. Աղբյուրը Ածաբանության:
Թ. 12ա.—Տեղիք Ածաբանության:
Թ. 13ա.—Ա. Եկեղեցի:
Թ. 18ա.—Ցատկությունը Եկեղեցու:
Թ. 23ա.—Իշխանություն Եկեղեցու:

<ԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)

Նօթք

Աստուածաբանության
(Ա. Տետրակ)

№. 565

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 48:—Պրակները՝ 1:—Մեծությունը $20.6 \times 15.6 \times 0.4$ սմ.:—Նյութը՝ դեղնած բարակ թուղթ:—Կապը՝ նռնագույն բարակ սովորաբար, որի առաջին երեսի վրա տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսության հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան: Աշակերտին անունը, Դասարանը, Տետրակին նիւթը, Տարեշրջան, Տպարան Դպրեվանուց»:—Պահպանակները՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ ձեռագրի բոլոր թղթերի կռնակը դատարկ է, բացի 2ր, 25ր, 37ր, 45ր, 47ր և 48ր թերթերից, նաև 24ա թերթը:—Տողերը՝ 20:—Գրծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:—Գիրը՝ շղագիր:—Չարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Ընտրիք վարդապետ (այժմ Տ. Ընտրիք արքեպիսկոպոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք):—Ժամանակը՝ 1940-ական թթ.:—Վայրը՝ Անթիլիաս (Լիբանան):—Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 1ա.—Ցայտնություն:
Թ. 5ա.—Եկեղեցույ ծագումը:
Թ. 6ա.—Աղանք Եկեղեցու:
Թ. 9ա.—Եկեղեցույ հոգին և մարմինը:
Թ. 13ա.—Նշանականք. Ցատկությունը կամ ստորո-

գելիք Եկեղեցու:

Ա. Մեկնություն Եկեղեցու:

- Թ. 17ա.—Ընդհանրականություն Եկեղեցու:
Առաքելականություն Եկեղեցու:
Թ. 18ա.—Սրբություն Եկեղեցու:
Թ. 21ա.—Անսխալականություն:
Թ. 23ա.—Եկեղեցական աստիճաններ:
Թ. 25ա.—Քահանայություն և վարդապետություն:
Թ. 26ա.—Եպիսկոպոսություն:
Թ. 29ա.—Հայրապետություն:
Թ. 32ա.—Ժողովներ:
Թ. 34ա.—Ասանդություն:
Թ. 36ա.—Ստորոգելիք Ածյ:
Թ. 38ա.—Գիտություն Աստուծոյ:
Թ. 43ա.—Նախախնամություն Ածյ:
Թ. 47ա.—Հայր Աստուծո:

<ԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)

Նօթք

Աստուածաբանության
(Բ. Տետրակ)

№ 566

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 46:—Պրակները՝ 1:—Մեծությունը $20.7 \times 15.3 \times 0.3$ սմ.:—Նյութը՝ դեղնած բարակ թուղթ:—Կապը՝ նռնագույն բարակ սովորաբար, որի առաջին երեսի վրա տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսության հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան: Աշակերտին անունը, Դասարանը, Տետրակին նիւթը, Տարեշրջան, Տպարան Դպրեվանուց»:—Պահպանակները՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ ձեռագրի բոլոր թղթերի կռնակը դատարկ է, բացի 7ր, 11ր, 24ր, 43ր, 45ր և 46ր թերթերից:—Տողերը՝ 20:—Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:—Գիրը՝ շղագիր:—Չարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Ընտրիք վարդապետ (այժմ Տ. Ընտրիք արքեպիսկոպոս Գալստյան, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք):—Ժամանակը՝ 1940-ական թթ.:—Վայրը՝ Անթիլիաս (Լիբանան):—Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 2ա.—Է դար, Ա. Ընդհանուր տեսություն նախորդ երկու դարերու:
Թ. 5ա.—Բ. Ընդհանուր տեսություն է դարու մասին: 1) Քաղաքական:
Թ. 7բ.—2) Կրօնական:
Թ. 8ա.—3) Գրական:
Թ. 10ա.— Բ. Մաս
Մասունք Ածաբանության:
Թ. 12ա.—Գոյութ (ին) Ածոյ:
Թ. 16ա.—Կամք Աստուծոյ:
Թ. 20ա.—Արարչություն Ածոյ:

- Թ. 23ա.—Արարչություն երեշտակաց:
 Թ. 25ա.—Դեք կամ սատանաներ:
 Թ. 28ա.—Արարչություն մարդոյ:
 Թ. 23ա.—Անկում մարդուն:
 Թ. 37ա.—Փրկչություն մարդոյ:
 Թ. 41ա.—Ամենատուր Երրորդություն:
 Թ. 45բ.—Որդի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
 Նոթք
 Աստուածաբանության
 Է դ (ար):

№ 567

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ Ա. ԳՐՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Թերթերը՝ 17:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝
 $20.7 \times 16.5 \times 0.2$ սմ.:—Նյութը՝ բարակ թուղթ:—
 Կազմը՝ կապույտ բարակ թուղթ, որի առաջին երեսի
 վրա տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսու-
 թեան հայոց Կիլիկիոյ, Աթիլիաս—Լիբանան: Անուն,
 Դասարան, Տարեշրջան, Նիս»:—Պահպանակները՝
 չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միասյուն:—
 Դատարկ թղթերը՝ 12բ—13բ, 15ա—17բ:—Տողերը՝
 20:—Գծումները՝ թուղթի ինքնին գծավոր է:—Գի-
 րը՝ շղագիր:—Զարդագրություն՝ չունի:—Գրիչը՝
 Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկո-
 պոս Գալստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք):—Ժա-
 մանակը՝ 1942—43 թթ.:—Վայրը՝ Աթիլիաս (Լիբա-
 նան):—Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է
 Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 1ա.—Նոթեր Ն (որ) Կ (տակարան) ի մարգա-
 րեություն մասին:
 Թ. 1բ.—Մարգարեական գրականություն:
 Թ. 6բ.—Մարգարեություն Եսայայ:
 Թ. 11ա.—Եսայի մարգարե:
 (Էջի կեսը հայերեն, մյուսն էլ անգլերեն է գրված):
 Թ. 12ա.—Eastern Judaism.
 Թ. 13ա.—Silent Centuries (Էջը դատարկ է):
 Թ. 14ա.—Temptation in the wilderness.

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
 Շնորհք վրդ. Գալուստեան
 1942—1943
 Ուսումնասիրություն Ա. Գրոյ գրականության:

№ 568

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ Ա. ԳՐՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 (Հայերեն-անգլերեն)

Թերթերը՝ 20:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝
 $21.2 \times 16.5 \times 0.2$ սմ.:—Նյութը՝ բարակ թուղթ:—Կազ-

մը՝ կապույտ բարակ թուղթ, որի առաջին երեսի վրա
 տպված է հետևյալը «Դպրեվանք Կաթողիկոսության
 հայոց Կիլիկիոյ, Աթիլիաս—Լիբանան: Անուն, Դա-
 սարան, Տարեշրջան, Նիս»:—Պահպանակները՝ չու-
 նի:—Վիճակը՝ վատ, քայքայված է և էջերը պոկ-
 ված: Կռակի կազմի թուղթը պակասում է:—Գրու-
 թյունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ 1ա—1բ, 2բ,
 3բ, 4բ—5բ, 6բ, 18բ:—Տողերը՝ 20:—Գծումները՝
 թուղթի ինքնին գծավոր է:—Գիրը՝ շղագիր:—Զար-
 դագրություն՝ չունի:—Գրիչը՝ Շնորհք վարդապետ
 (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, Կ.
 Պոլսի հայոց Պատրիարք):—Ժամանակը՝ 1942—43
 թթ.:—Վայրը՝ Աթիլիաս (Լիբանան):—Ծանոթա-
 գրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի
 գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 2ա—4ա.—Անգլերեն է գրված:
 Թ. 6ա—20ա.—Հայերեն է գրված:
 Թ. 2ա.—Notes on Biblical literature. Amos
 Uzziiah. Jeroboam II.
 Թ. 3ա.—The Earthquake, Ben-Hadad.
 Թ. 4ա.—Klr.
 Թ. 6ա.—Քաղուածք իրն մատենագրաց հայոց:
 Մեկնություն ժամանակագրութեան հոսքով Անձնացոյ:
 Թ. 7ա.—Աղէքք զիշերապատման:
 Թ. 8ա.—Տէր ողորմես:
 Վասն յաւիտենին:
 Թ. 19ա.—Դատումներ և դիտումներ
 «Քրիստոնէական եկեղեցոյ վարդապետութիւնը»
 Գրքին
 ընթերցման առթիւ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի շապիկի վրա գրված է)
 Shnork Vartabet Kaloustian
 1942—1943
 Studies in Biblical literature.

№ 569

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 20:—Պրակները՝ 2, յուրաքանչյուրը 10-
 ական թերթից:—Մեծությունը՝ $22.3 \times 16.6 \times 0.2$ սմ.:
 Նյութը՝ սպիտակ թուղթ:—Կազմը՝ չունի:—Պա-
 ցանակները՝ չունի:—Վիճակը՝ անբավարար:—Գրու-
 թյունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ 1ա, 12ա—
 20բ:—Տողերը՝ 46:—Գծումները՝ թուղթի ինքնին
 գծավոր է:—Գիրը՝ շղագիր:—Զարդագրություն՝ չու-
 նի:—Գրիչը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1940 թ.:—Վայրը՝
 Երուսաղեմ:—Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված
 է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 1բ.—Տեսական Ամաբանության բաժանումները:
 Թ. 2ա.—1. Ամաբանական գիտություններ:
 2. Վասն էության Այ:
 Թ. 2բ.—3. Այ էությունը:
 4. Այ բնական էությունը:
 5. Այ բնականացական էությունը:
 Թ. 3ա.—6. Ասացումքին իմաստը:
 7. Անցում:
 Թ. 3բ.—8. Յաղագս գիտության Աստուծոյ:
 9. Գիտության փաստը:
 10. Գիտության պարագաները:
 Թ. 4ա.—11. Գիտության արդիւնքը:
 12. Գիտության առարկաները:
 Թ. 4բ.—13. Հնարաւոր առարկաներ:
 14. Ազատ ապառնիւնները:
 Թ. 5ա.—15. Գիտության տեսակները:
 16. Դարձեալ տեսակներ: (17, 18, 19):
 Թ. 6ա.—20. Միջական գիտություն:
 Թ. 6բ.—21. Միջական դրություն:
 22. Առարկայական պահանջանություն:
 Թ. 7ա.—23. Պատճառականության տեսակները:
 24. Գործնական տեսակ:
 Թ. 7բ.—25. Տեսողական տեսակ:
 26. Յարաբերություն շնորհաց հետ:
 Թ. 8ա.—27. Երկու կարծիքներ:
 Թ. 8բ.—28. Ա. Գիրքէն նշաններ:
 29. Յարմարականներուն նշանները:
 Թ. 9ա.—30. Նշաններու բացատրություն:
 Թ. 9բ.— Յաղագս կամեցողության Աստուծոյ:
 31. Աստուծոյ կամեցողությունը:
 32. Կամքին բաժանումները:
 Թ. 10ա.—33. Դարձեալ բաժանում:
 34. Նորէն բաժանում:
 35. Կրկին բաժանում:
 Թ. 10բ.—36. Բացատրություն կամեցողության:
 37. Մարդոց փրկությունը:
 Թ. 11ա.—38. Առարկություններ փրկության մասին:
 Թ. 11բ.—39. Բացատրություն նախասահմանության:

<ԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- Թ. 1ա.— Տեսական Աստուածաբանություն
 (Օրմանեան—Թ.Ե.Գ.*)
 1940

* (այսինքն՝ Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան)

№ 570
 ՄԱՇՏՈՑ

Թերթերը՝ 152:— Պրակները՝ սկզբում ձեռագիրն ունեցել է 17 պրակից ավելի (յուրաքանչյուրը 12 թերթից բաղկացած), սակայն հետագայում որոշ թերթեր ու պրակներ թափվել են:— Մեծությունը՝ 21.5×14.5×4 սմ.:— Նյութը՝ դեղնած գծադրուած միջակ

հաստությամբ թուղթ:—Կազմը՝ սրճագույն կաշեպատ տախտակ:— Պահպանակները՝ սկզբում և վերջում երկուական հասարակ դեղնավուն թուղթ:— Վիճակը՝ անբավարար, սկզբից, միջից և վերջից բավարարվ թերթեր պակասում են: Որոշ թերթերի մեկ մասը վառված է, իսկ այլ թերթեր էլ վնասված են ժամանակի ընթացքում: Այն նախապես քայքայված վիճակ ուներ, սակայն 1982 թ. հոկտեմբերին ձեռագիրը բուժված, կարգի բերված և կազմված է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:— Գրությունը՝ երկայուն:— Դատարկ թղթեր՝ չունի:— Տողերը՝ 24:— Գծումները՝ ճնշումով:— Գիրը՝ բուրգի:— Ձառագրություն՝ ձեռագրում կան քիչ քանակությամբ թռչնագրեր, վարդագրեր և լուսանցավորողներ, որոնք միջակ որակի են: Կան նաև երեք փոքրիկ գլխավոր դեր (թթ. 16բ, 95ա և 121ա):— Գրիչը՝ Դավիթ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ծաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ 17—18-րդ դարեր:— Վայրը՝ անհայտ (շատ հավանաբար սակայն Պարսկաստան):— Ծանոթագրություն՝ ձեռագիրը Մայր Աթոռին է նվիրել 1982 թ. մայիսի 27-ին Աբովյանի շրջանի Հոգևոր Հովիվ և Ս. Էջմիածնի Հոգևոր ձեռնարանի նախկին տան Ս. Արախամ քահանա Մարգարյանը, որ 1946 թ. Իրանից Հայաստան ներգաղթելով հետն է բերել հայրենիք: Սույն Մաշտոցը Իրանում պատկանել է Ս. Աբրահամ քահանայի պապին՝ Ս. Ներսես ավագ քահանա Մարգարյանցին, որ այն օգտագործել է Փարչևստան գյուղի (Իրան) Ա. Գևորգ եկեղեցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցի բազում թերթերում օգտագործված են հայկական հին խազերը: Ձեռագիրը պարունակում է նաև շարականներ:

<ԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 87ա.—Ած ողորմեա մեկ և ա...
 Թ. 91ա.—Յիշեա Տ(էր) պ՛րախթ և վամ:
 Թ. 111ա.—Յիշեացես և վարարող սր և ողորմեսցիս նմա:

<ԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թ. 77ա.—Բարսեղ Սիրեկանեա (ն) ցի ձնու (ն) դը
 1898 ամի 1 հունվարի:
 Թ. 77բ.—Տիգրան Մուշեղով ձնու (դ) ը
 1898 ամի 12 փետրվարին:
 (Ձեռագրի վերջում նվիրատուն գրած է)
 Ի գրոց Տեր Ներսես Քոչարի ավագ քահանա Մարգարյանցի, Գափլա գավառի Փարչստան գյուղ (Իրան):
 Այս գրչագիր Մաշտոցը վերոհիշյալ հանգուցյալ պապինս է:
 Նվիրում եմ ազգիս հայոց սիրելի Վեհափառ Հայրապետին Ս. Տ. Վազգեն Ա-ին:
 Որդիական խոնարհությամբ
 Աբրահամ քահանա Մարգարյան
 Աբովյանի շրջանի հոգևոր հովիվ:

Ս. Հովհաննես եկեղեցի:
27—5—82 թ.:

№ 571

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ (Ա)

Թերթերը՝ 96:— Պրակները՝ 5:— Մեծությունը՝ $23.7 \times 17.3 \times 0.8$:— Նյութը՝ սպիտակ բարակ թուղթ:— Կազմը՝ նարնջագույն բարակ ստվարաթուղթ:— Պահպանակները՝ սկզբում և վերջում կա մեկական հասարակ թուղթ:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 87ա—96բ, ինչպես էան ձեռագրի նախորդ մասի բոլոր թերթերի ետևի մասը դատարկ է:— Տողերը՝ 25—27:— Գծումները՝ բոլոր ինքնին գծավոր է:— Գիրը՝ շղագիր:— Ձարկագրություն՝ չունի:— Գրիչը՝ Ներսես քահանա Փափազյան:— Ժամանակը՝ 1950-ական թթ.:— Վայրը՝ Կահիրե (Եգիպտոս):— Ծանոթագրություն՝ ձեռագրի հեղինակը 1958 թ. հոկտեմբերի 6-ին նվիրել է Վեհափառ Հայրապետին: Մայր Աթոռի ձեռագրատունն այն ստացավ Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՒԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Յառաջարկ

Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սովորեցնելու, յանդիմանելու, շիտկելու և արդարութեան խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը կատարեալ խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ ամէն բարի գործերու պատրաստուած:

Բ. Տիմոթէոս Գլ. Գ. 16—17:

Թ. 2ա.—(Գլ. 1) Կարապետի ծնունդին աւետումը:

Թ. 7ա.—(Գլ. 1) Կարապետի ծնունդի աւետումը:

Յիսուսի ծնունդին աւետումը:

Յովհաննէս Մկրտչին ծնունդը:

Ջաքարիայի օրհներգը:

Թ. 11ա.—(Գլ. 2) Յիսուսի ծնունդը:

Թ. 15ա.—(Գլ. 3) Արեւելի մոգերը:

Թ. 19ա.—(Գլ. 4) Բանն Աստուած:

Քրիստոսի մկրտութիւնը:

Քրիստոսի փորձութիւնը:

Թ. 22ա.—(Գլ. 5) Յովհաննէսի վկայութիւնը:

Թ. 27ա.—(Գլ. 6) Կանայի հարսանիքը: Վերստին ծնունդ:

Թ. 31ա.—(Գլ. 7) Յովհաննէս Մկրտիչ: Սամարացի կիներ:

Թ. 34ա.—(Գլ. 8) Սկիպն Քրիստոսի քարոզութեան և առաքելներուն կոչումը:

Թ. 39ա.—(Գլ. 9) Լերան քարոզը և երանութիւններ: Ապահարպան:

Թ. 42ա.—(Գլ. 10) Ողորմութեան, աղօթքի և ծոմաստիութեան վրայ:

Թ. 45ա.—(Գլ. 11) Ջգուշանալ յանդուգն դատարկութենէ և արդարութեան ճամբան: Աչքի շիղը և աչքի գերանը:

Թ. 48ա.—(Գլ. 12) Յիսուսի հրաշագործութիւնները: Հարիւրապետին ծառան:

Մեռեալ պատանին:

Անդամալոծը:

Թ. 51ա.—(Գլ. 13) Մատթէոս մաքսաւորը:

Նոր լաթը և հին հանդերձը:

Նոր գինին և հին տիկը:

Յովհաննէսի բանբերները:

Թ. 56ա.—(Գլ. 14) Յայրոսի աղջիկը, երկու կուրերուն բժշկուիլը և Յիսուսի այլ հրաշագործութիւնները:

Ո՛վ է մայրս և ո՛վ եմ եղբայրներս:

Թ. 61ա.—(Գլ. 15) Աստուծոյ թագաւորութիւնը առականորով բացատրուած:

Մերմնացանին առակը:

Որով և ցորենը և այլ առակներ:

Թ. 64ա.—(Գլ. 16) Հովի մեծ փոթորիկը և Յիսուս:

Յիսուս և Գերգեսացի դիւահայրը:

Թ. 66ա.—(Գլ. 17) Եսայի մարգարէին գիրքը և Տէրջըը հոգին:

Հունձքը շատ և մշակելը բիչ:

Թ. 70ա.—(Գլ. 18) Յիսուսի տասերկու առաքելները և անոնց շնորհուած բժշկական պօրութիւնը: Քարոզչութեան վերաբերմամբ Յիսուսի հրահանգները առաքելներուն: Եսասէր հարուստը:

Թ. 72ա.—(Գլ. 19) Յովհաննէս Մկրտիչի զլխատումը:

Թ. 74ա.—(Գլ. 20) Հինգ գարեղէն հաց ու երկու ձուկին հրաշքը:

Պետրոսի երկմտութիւնը:

Քրիստոս ծովուն վրայ կը բալէ:

Թ. 79ա.—(Գլ. 21) Աստուծոյ գործը և երկնաւոր հացը:

Յիսուս կենդանարար հացը:

Թ. 83ա.—(Գլ. 22) Բեթհեղդա առպանը և անդամալոծը:


Յարութեան արժանի գործեր և դատաստանի արժանի գործեր:

Թ. 86ա.—(Գլ. 23) Քրիստոսի աշակերտները և ցորենի հասկերը:

Որդին մարդոյ Շաբաթին ալ տէրն է:

Սուրբ Հոգին գերագոյն սրբութիւն:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (ИЮЛЬ 1983 г.)

1. Слово Католикоса всех армян Вазгена I, направленное Его Святейшеству Патриарху—Католикосу всей Грузии Илии II 3 июля 1983 г. (стр. 3—4).
2. Епископ Нарек Шакарян—Сошествие Св. Духа (проповедь, произнесенная в престольной церкви св. Богородицы Ширакской епархии)—(стр. 5—6).
3. Проповедь новрукоположенного священника Нерсеса Нерсисяна, произнесенная в Кафедральном соборе 24 июля 1983 г. (стр. 7—10).
4. Диакон Степан Карапетян—Годовщина перенесения патриаршего престола в Первопрестольный Эчмиадзин (исследование)—(стр. 11—14).
5. Епископ Георг Серайдарян—Юбилейные торжества Грузинской Церкви в г. Тбилиси (Описание торжеств, посвященные 200-летию Георгиевского договора и 1500-летию автокефальности патриаршего престола Грузинской Православной Церкви)—(стр. 15—16).
6. Диакон Степан Карапетян—Посещение группы членов молодежной организации американских армян Армении и Эчмиадзинского Католикосата с 18 июня по 12 июля (стр. 17—18).
7. Церковная хроника Первопрестольного Эчмиадзина за июль месяц (стр. 19—20).
8. Уточнение (Объявление Канцелярии Эчмиадзинского Католикосата) (стр. 21).
9. Георг Карапетян—Епископ Макарий Бархударянц (по случаю 150-летия со дня рождения)—(стр. 22—24).
10. Н. Таамизян—Образцы армянских духовных песнетворений в 13—15 вв., (исследование)—(стр. 25—35).
11. Ю. Таманян—Архитектура церкви св. Саркиса в Крыму (исследование)—(стр. 36—42).
12. Г. Г. Кёсеян—Одна из речей Иоанна Златоуста, посвященная Иоанну Предтечи, произнесенная Вавилом Александрийским (исследование, оригинал)—(стр. 43—48).
13. Карен Матевосян—Монастырь и Церковь св. Зоравара в Егварде (исследование)—(стр. 49—52).
14. Володя Абрамян—Арменоведческие издания в Армении и за рубежом (стр. 53—55).
15. Нубар Микаэлян—Список новых рукописей, полученные в Первопрестольном Эчмиадзине (№№ 563—571)—(стр. 56—60).



„ETCHMIADZIN“
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JULY 1983)

1. The allocution of His Holiness Vasken I, addressed to His Holiness Ilya II, the Patriarch-Catholicos of All Georgia, on the 3rd of July 1983 (pages 3-4).
2. **Bishop Narek Shakarian**—Pentecost (sermon given in the church of Holy Virgin in the diocese of Shirak) (pages 5-6).
3. The sermon of Father Nerses Nersesian in the Holy Cathedral, on the 24th of July 1983 (pages 7-10).
4. **Deacon Stepan Karapetian**—The anniversary of the repatriation of the Patriarchal See of Holy Etchmiadzin (study) (pages 11-14).
5. **Bishop Gevorg Seraydarian**—The jubilee festivities in Tbilisi of the Georgian Church (description of the festivities devoted to the 200th anniversary of the Gutorgevsky Charter and the 1500th anniversary of autocephalous Patriarchal See of the Georgian Orthodox Church) (pages 15-16).
6. **Deacon Stepan Karapetian**—The visit to the fatherland and the Holy See of St. Etchmiadzin of a group of the Young Armenians' Union of U. S. A., between 18th of June and 12th of July (pages 17-18).
7. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of July (pages 19-20).
8. Verification (the declaration of the Holy See's chancellery) (page 21).
9. **Gevorg Karapetian**—Bishop Makar Barkhootariantz (on the occasion of his 150th birthday) (pages 22-24).
10. **N. Tahmizian**—Samples of Armenian spiritual songs created during XIII-XV centuries (study) (pages 25-35).
11. **Yooly Tamanian**—The architecture of St. Sarkis Armenian church of Crimea (study) (pages 36-42).
12. **H. H. Keuseyan**—A discourse of St. John Chrysostom by the name of Babylas the Alexandrian, devoted to John the Baptist (study and original Armenian classical text) (pages 43-48).
13. **Karen Matevosyan**—St. Zoravar church and monastery of Yeghvard (study) (pages 49-52).
14. **Volodya Abrahamian**—Publication of armenological studies in Armenia and abroad (pages 53-55).
15. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 563-571 (pages 56-60).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JUILLET 1983)

1. Allocution de Sa Sainteté Vasken Ier adressée le 3 juillet 1983 à Sa Sainteté Ilia II, patriarche-catholikos de toute la Géorgie (pages 3—4).

2. Evêque Narek Chakarian—„Pentecôte“ (sermon prononcé dans l'église de la Sainte Vierge du diocèse de Chirak)—(pages 5—6).

3. Sermon du Père Nersès Nersessian prononcé le 24 juillet 1983 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 7—10).

4. Diacre Stépan Karapétian—„L'anniversaire du rapatriement du siège patriarcal de Saint-Etchmiadzine“ (étude)—(pages 11—14).

5. Evêque Guévork Séraïdarian—„Les festivités jubilaires de l'Eglise orthodoxe géorgienne à Tbilisi (description des festivités consacrées au 200e anniversaire du Traité Gulorgevsky et au 1500e anniversaire du siège autocéphale de l'Eglise orthodoxe géorgienne (pages 15—16).

6. Diacre Stépan Karapétian—„Visite au Saint-Siège d'Etchmiadzine d'un groupe de jeunes pèlerins arméniens, membres de l'Organisation de la Jeunesse Arménienne des Etats Unis“ (du 18 juin au 12 juillet 1983)—(pages 17—18).

7. Brèves Informations concernant les célébrations des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de juillet 1983 (pages 19—20).

8. Eclaircissement (la déclaration de la chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine)—(page 21).

9. Guévork Karapétian—„Evêque Makar Barkhoudarants“ (à l'occasion du 150e anniversaire de sa naissance)—(pages 22—24).

10. N. Tahmizian—„Echantillons des chants spirituels arméniens créés aux XIIIe-XVe siècles“ (étude)—(pages 25—35).

11. Youli Tamanian—„L'architecture de l'église arménienne Saint-Sarkis en Crimée (étude)—(pages 36—42).

12. H. H. Keusseyan—„Un discours de saint Jean Chrysostome connu sous le nom de Babylas d'Alexandrie et consacré à saint Jean-Baptiste“ (étude et texte original en arménien classique)—(pages 43—48).

13. Karen Matévossian—„L'église et le monastère de Saint-Zoravar à Yeghvard“ (étude)—(pages 49—52).

14. Volodia Abrahamian—„Publication des études arménologiques en Arménie et dans la Diaspora“ (pages 53—55).

15. Noubar Mikaélian—Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros 563—571 (pages 56—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

S. S. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված Նորին Արքեպիսկոպոս Իլիա Բ համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոսին	3
ՆԱԲԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՔԱՐՅԱՆ—Հոգեգալուստ	5
Նորընծա Տ. Ներսես քին. Ներսեսյանի քարոզը Մայր տաճարում	7
ՍՏԵՓԱՆ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Հայրապետական Աթոռի հայրենադարձության տարե- դարձը	11
ԳԵՎՈՐԳ ԵՊՍ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ—Վրաց եկեղեցու հոբելյանական հանդիսությունները Թբիլիսիում	15
ՍՏԵՓԱՆ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդաց կապակեր- պության մի խումբ անդամների այցելությունը Մայր Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին	17
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	19
Ճշոռում	21
ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց	22
Ն. ԹԱՀՄԻՉՅԱՆ—ԺԳ—ԺԵ դարերի հայ հոգևոր երգաստեղծության նմուշներ	25
ՅՈՐ. ԹԱՄԱՆՅԱՆ—Ղրիմի Ս. Սարգիս եկեղեցու ճարտարապետությունը	36
Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ—Բաբելաս Ալեքսանդրոսցու անվամբ Հովհան Ոսկեբերանի մի ճառը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին	43
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Եղվարդի Ս. Ջորավար եկեղեցին և մենաստանը	49
Հաղագիտական հրատարակություններ	53
Յուզակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	56
„Эчмιάдзин“ официальный журнал Эчмιάдинского Католикосата	61
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	62
„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siège d'Etchmiadzine	63



ԽՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмιάдзин, Редакция журнала «Эчмιάдзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 14.09.1983 թ.: Ստորագրված է տպագրության 24.10.1983 թ.:
Տպագրական 4 մամուլ+2 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 731:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1983 թ.